Մ. Շամտաճեան, *Հայ մտքին հարկը ե-ղեռնին*, Հալէպ, 1947, էջ 62:

Ապրիլ 24/7 մայիսի.– *Բանտից Կոմիտասը նամակ է գրում Կարապետ վարդապետին:*

Նոյն օրը.– *Կոմիտաս վարդապետը նամակ է գրում նաեւ Ամերիկեան դեսպանատան թարգմանիչ, Հայազգի Արշակ Շմաւոնեանին:*

Նոյն օրը երեկոյեան.– Մեհտերհանի բանտից երեկոյեան Պազիլ խանին ազատում են եւ նրա անկողինը յատկացնում են Կոմիտաս վարդապետին:

«Էջմիածին», 1968, թիւ 4, էջ 34:

Ապրիլ 26/9 մայիս, առաւօտ.– *Ստացւում է ազատման հրաման եւ Կոմիտաս վարդապետի հետ միասին (Բիւզանդ Քէչեան, Վահրամ Թորգոմեան եւ այլոց) եօթը անձնաւորութեան ազատում են բանտից:*

«Էջմիածին», 1968, թիւ 5, էջ 6. *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 40. **Շանթ Շամտաճեան**, 1918, թիւ 5, էջ 7:

Ապրիլ 27/10 մայիսի, երկուշաբթի, Զանղի.– *Կոմիտասն իր բախտակիցների հետ ազատօրէն շրջում է քաղաքում:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 6:

Ապրիլ 28/ 11 մայիսի, երեքշաբթի.– *Ազատուածները Զանղլիից մեկնում են Կ. Պոլիս:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 6:

Ապրիլ 28/11 մայիս, Գալենճիք.– *Աքսորից վերադարձող Կոմիտասը եւ իր ընկերները երեկոյեան հասնում են այս գիւղաքաղաքը. «Թէեւ ուշ հասանք,– պատմում է Բիւզանդ Քէչեանը,– հայ ընտանիք մը չթողուց, որ ազատոտ խանը գիշերենք եւ տաք կերակուրներով հիւրասիրեց մեզ կէս գիշերուան մօտ»:*

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ - 43:

Ապրիլ 29/12 մայիսի, Գալենճիք.– *Աքսորականների խումբը իր ժամանակը անցկացնում է այս գիւղաքաղաքում:*

Նոյն տեղում:

Ապրիլ 30/13 մայիսի, Անկարա.– *Ազատուած աքսորականները 16 օր յետոյ, Համբարձման տօնի օրը, կրկին յայտնւում են Էնկիւրայում (Անկարա):*

Կոմիտասը հրաւիրուած էր մասնակցելու տեղի եկեղեցական արարողութեանը:

«Համբարձման տօնը,– գրում է Բիւզանդ Քէչեանը,– վայելեցինք Էնկիւրիի եկեղեցիին մէջ: Թաղ. խորհուրդը մեզի նախաճաշով մը հիւրասիրելէ ետքը առաջարկեց Ս. Աստուածածնի վանք»:

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 43. «Էջմիածին», 1968, թիւ 10, էջ 52:

Ապրիլ 30/13 մայիսի, Անկարա.– *Աքսորից վերադարձող Կոմիտասը իր եօթը աքսորականների հետ Էնկիւրիի եկեղեցում տօնում է Համբարձման տօնը: Թաղական խորհուրդը նրանց տալիս է նախաճաշ, այնուհետեւ նրանք մեկնում են Ս. Աստուածածնի վանքը, որտեղ մեծ բազմութիւն էր հաւաքուած Կոմիտասին լսելու համար: Հանդէսից յետոյ 60 հոգու համար բացւում է ճոխ սեղան. մի դեռատի աղջիկ երգում է, որին Կոմիտասը տալիս է խորհուրդներ:*

Թէոդիկ, *Ամենուն տարեցոյց*, 1922, էջ 43:

Մայիս 2/15, Կ. Պոլիս.– *Շաբաթ օրը երեկոյեան Կոմիտաս վարդապետը հասնում է Կ. Պոլիս:*

«Էջմիածին», 1968, թիւ 7, էջ 6:

«ՉԱՆՂՐԻ 1915 Թ. ԱՊՐԻԼ 11. ՅԻՇԱՏԱԿ»... ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՆՄՈՅԾԸ

Կարինէ Աւագեան

Եղանի՛ հրակայ, որ քաղցն ու ծարան ունեն պրպտութեան,
որովհետեւ հրանք պիտի յագեսան [Մատթ. Ե 6]:

Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ 2002 թ. լոյս ընծայեցինք «Եղեռնայուշ Մասունք կամ Խոստովանողք եւ Վկայք Խաչի»[1] *վերտառութեամբ փաստավաւերագիրքը, որն ուսումնասիրութիւնն էր Հայաստանի պատմութեան պետական թանգարանի նոր պատմութեան ֆոնդի 948 համարի տակ պահուող ցուցանմոյշ-համրիչի:*

1908 թ. իրագործած յեղաշրջմամբ երիտթուրքերն, իշխանութեան գալով, շարունակեցին համիդեան հայաջինջ քաղաքականութիւնը:

1915-ի գարնան կէսին արդէն Թալէաթի կարգադրութեամբ լրման հասած «սեւ ցուցակներում» ամրագրուեցին այն հայ մտաւորականները, որոնք իրենց գործունէութեամբ համարւում էին կայսրութեան համար վտանգաւոր տարրեր:

Ցուցակագրումը վստահուած էր Կ. Պոլսոյ ոստիկանութեան տնօրէն Պետրիին[2] *եւ ՆԳՆ առաջին քարտուղար Մեմտուհին*[3] *(ապա՝ Թալէաթի դրածոյ կառավարիչներից՝ Երզնկայում)*[4]*:*

Զարագոյժ այս իրողութեան վկայութիւնն է ՀՊՊԹ քննարկուող ցուցանմոյշ-համրիչը, որի անհամաչափ նախամուտ հատին աքսորական մուխթար Վարդերեսը (համրիչի 71-րդ հատի անուանակիրը[5]*) մինչ նահատակուելը փորագրել է. «Զանղրըի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ»...*

Յաջորդող 99 հատերին աքսորականների ազգանուններն են, երբեմն՝ անունները, թիւ 55-ին եւ 86-ին, համապատասխանաբար՝ «Լեւոն-2», «Օհնիկեանք-4» թուերով, ինչը հաւաստում է 103 աքսորականների մասին:

Ահաւասիկ ցուցանմոյշի ամբողջական բովանդակութիւնը.

«Զանղրըի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ»

1. Կոմիտաս Վ.
2. Յովհան Վ.
3. Քաջունի Քհնյ
4. Ճէվահիրճի
5. Ռ. Սեւակ
6. Միսքճեան
7. Թօփճեան
8. Վարդան Քհնյ.
9. Գ. Ճէլալ
10. Գազազեան
11. Թորգոմեան բժիշկ
12. Պօղոսեան
13. Տինանեան

Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ 2002 թ. լոյս ընծայեցինք «Եղեռնայուշ Մասունք կամ Խոստովանողք եւ Վկայք Խաչի», Եր., 2002

2 **Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան,** *Հայ Գողգոթան*, հտ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, էջ 76. նոյնը, II հրտ., Եր.,– «Հայաստան», 1991, էջ 78

3 **Անդրանիկ Ծառուկեան,** *Սէրը Եղեռնին մէջ* (վէպ), Եր., 2004, էջ 9, 19, 40

4 **Թէոդիկ,** *Նոյն տեղում*, «Ճերմակ եւ կարմիր Տոմը», էջ 119

5 Համարակալումը 1-99 կատարուած է անուանակիրներին վկայակոչելու համար:

© National Library of Armenia

14. Միրզա
15. Ալթունեան ատամնաբոյժ
16. Կիւլիստան
17. Զարեհ
18. Եզնիկ
19. Ասատուր Վ. դեղագործ
20. Մանիկեան
21. Զարիֆեան
22. Միսքճեան
23. Հաճեան
24. Ղազարոս
25. Թէրզեան
26. Նշան
27. Նարկիլէճեան
28. Արսենեան
29. Դանիէլեան Պ. փաստաբան
30. Զերազ
31. Մովսէս
32. Տ. Քէլէկ խմբագիր
33. Բ. Քէչեան
34. Թօփճեան
35. Անտոնեան
36. Թօլայեան
37. Շահնուր
38. Ս. Սրենց ուսուցիչ
39. Խօճասարեան
40. Վարուժան
41. Շամտանճեան
42. Զաւուշեան
43. Թապագեան
44. Տխրունի
45. Աղապապեան
46. Բարսեղեան
47. Տօրեան
48. Եսայեան տաղարտը
49. Գոչո Արթին
50. Երջանիկ
51. Զենոբ
52. Խաչիկ
53. Հրանդ
54. Երեւում
55. Լեւոն-2
56. Ագրիկ
57. Գանթարեան
58. Կոզմոս
59. Պէյլերեան
60. Թաշճեան
61. Հանեսեան
62. Արամ
63. Մելիք
64. Տէօվլեթեան
65. Քէհեաեան արհեստաւոր
66. Մաղազաճեան
67. Պասմաճեան
68. Մելքոնեան
69. Զպճը ճարտարապետ
70. Արսլանեան
71. Վարդերես մուխթար
72. Ֆէրուխան
73. Սարաֆեան
74. Ալթունեան
75. Ճամպազ
76. Հրաչ
77. Մոմճեան
78. Գալէնտէր
79. Վաղինակ
80. Գալֆայեան պաշտօնեայ
81. Պէյլերեան
82. Պարոյր
83. Նոյիկ յանձնակատար
84. Թաթարեան
85. Քէօլէեան
86. Օհնիկեանք-4
87. Թէրլէմէզ սեղանաւոր
88. Տէր-Գէորգեան
89. Պասմաճեան
90. Գայլրգճեան
91. Ինճիճեան
92. Գարակէօզեան
93. Մանեասեան
94. Ղոնչէկիլ
95. Փարիսեան
96. Ց. Գորեան վճռկն
97. Քերոբեան պատուելի

98. Թումաճան
99. Պալագեան ծ. վ.:

Սկզբնաղբիւր ընդունելով ցեղասպանութեան վերապրածների եւ նրանց անմիջական սերնդի փաստավաւերագիր-յուշերը, երբեմն միայն՝ գեղարուեստական երկերը[6], ստուգութեանը խստիւ յետամուտ՝[7] պարզել ենք, որ ցանկում ընդգրկուած են եղել նաեւ Արշակ Զոպանեանը, Վահան Թեքէեանը, Լեւոն Բաշալեանը, Ռուբէն Որբերեանը, Տիգրան Կամսարականը, Հրանդ Նազարեանցը, Կոստան Եղիազարեանը (Զարեան), Յակոբ Քիւֆէճեանը եւ Շաւարշ Միսաքեանը, որոնցից 7-ը երկրում չէին. վերջինին փախչել չյաջողուեց:

Ուսումնասիրութեան հիմնակունք դարձած Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի (Համրիչի թիւ 99-ը - Կ. Ա.) «Հայ Գողգոթան» փաստում է իրադարձութիւնների շղթան 1915 թ. ապրիլի 11/24-ից՝ իրազեկելով, որ նոյն օրը ձերբակալուած 220-ից աւելի անձերից 75-ին (հիմնականում ազգային կուսակցական գործիչներ) Սենճանքէոյի կայարանում առանձնացրել եւ ուղղորդել են Այաշ[8]: Մնացեալներին վիճակուած էր շարունակել ճանապարհը մինչեւ Զանղեզուր, որի իրեղէն վկայութիւնն է քննարկուող ցուցանմոյշ-Մասունքը:

Առաւել քան ուշագրաւ են վարդապետի ե՛ւ Այաշի, ե՛ւ Զանղեզուրի աքսորականների անուանացանկերը՝ համապատասխանաբար՝ 62 եւ 69 տարագրեալների ընդգրկումով[9]: Առաջինի վերաբերեալ նա ծանուցում է. «Ցաւալի է, որ մնացեալ 13 աքսորական մեր տարաբախտ ընկերներու անունները հնար չեղաւ հոս արձանագրել, հակառակ ամէն պրպտումներու»[10]: Զանղեզուրի աքսորականների ցանկն աւարտում է՝ ամփոփագրելով. «Դժբախտաբար Զանկզուրի մեր աքսորական տարաբախտ ընկերներուն հազիւ կէսին անունը կարելի եղաւ ձեռք բերել մեծ դժուարութեամբ, մինչդեռ ասոնցմէ դուրս կային նաեւ հայրենասէր ծաղկահասակ ազնիւ երիտասարդներ եւ ժողովրդի խոնարհ դասակարգէն անձնանուէր անձեր, որոնք այնքան պիտի փափաքէինք, որ յիշէինք այս տեղ»[11]:

Արհաւիրքի վերաբերեալ իսկութիւնը պատմութեանն աւանդելու միեւնոյն ազնիւ մղումով ու պարտաւորութեամբ, Զանղեզուրի աքսորականներից մուխթար Վարդերեանն է ի գործ դրել փորագրիչի իր բնատուր շնորքը՝ համրիչի հատերին փորագրելով բախտակից ընկերներից արդէն 103-ի ինքնութիւնը հաւաստող ազգա-

6 Ա. Մառուկեան, *նոյն տեղում*, էջ 102

7 ա) «Հայկական սովետական հանրագիտարան», (այսուհետ՝ ՀՍՀ), հտ. 9, Եր., 1983, էջ 59 (տե՛ս յօդուած՝ Զոպանեան Արշակ),– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 374 (տե՛ս յօդուած՝ Զոպանեան Արշակ). բ) ՀՍՀ, հտ. 4, Եր., 1978, էջ 181-182 (տե՛ս յօդուած՝ Թեքէեան Վահան),– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 139-140 (տե՛ս յօդուած՝ Վահան Թեքէեան). գ) ՀՍՀ, հտ. 2, Եր., 1976, էջ 291 (տե՛ս յօդուած՝ Բաշալեան Լեւոն). դ) ՀՍՀ, հտ. 8, Երեւան, 1982, էջ 642 (տե՛ս յօդուած՝ Որբերեան Ռուբէն). ե) ՀՍՀ, հտ. 5, Եր., 1979, էջ 214-215 (տե՛ս յօդուած՝ Կամսարական Տիգրան). զ) Վարդան Մատթէոսեան, «Հրանտ Նազարեանցի նամակները Ենովք Արմէնին»,– «Բազմավէպ», ՃԿԴ տարի, թիւ 1-4, Վենետիկ-Ս.Ղազար, 2006, էջ 312. է) ՀՍՀ, հտ. 3, Եր., 1977, էջ 670 (տե՛ս յօդուած՝ Զարեան (Եղիազարեան) Կոստան). Յակոբ Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, հրտ. Սարգիս Խաչենցը, Եր., 2006, գլ. Զ - *Մէտթէրհանէն*, գլ. Է - *Թաքստոցի տարիներ*, «Անուանացանկ», էջ 121, 165, 349 (տե՛ս Յակոբ Քիւֆէճեան). *նոյն տեղում*, էջ 159, 165, 338 (տե՛ս յօդուած՝ Միսաքեան Շաւարշ), Երուանդ Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, Բ գիրք, գլ. ԼԶ - *Անակնկալ...*, գլ. ԼԷ - *Նոր հաւատաքննական ատեան*, Գրականութեան եւ արուեստի թանգարանի (այսուհետ՝ ԳԱԹ) հրատարակչութիւն, Եր., 2001, էջ 194-201, 201-214. նոյնը, Գ գիրք, Եր., 2001, «Անուանացանկ», էջ 288-289:

8 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, I հրտ., էջ 82, 86. II հրտ., էջ 83, 86-87

9 *Նոյն տեղում*, էջ 86-90/87-90, 96-99 (I, II հրտ.)

10 *Նոյն տեղում*, էջ 90 (I, II հրտ.)

11 *Նոյն տեղում*, էջ 99 (I, II հրտ.)

© National Library of Armenia

նուններեր կամ անուններեր՝ ասես պատգամելով. շարունակել պրպտումը յանուն պատմական ճշմարտութեան վերհանման: Աշխատանք, որ ստանձնեցինք, այսօր արդէն Զանգեզուրի աքսորականների թիւը հասցրած լինելով 117-118-ի:

Զենք անտեսել նաեւ Այաշի աքսորականներին՝ նրանց եւս միեւնոյն՝ ապրիլի 11/24 արհաւիրալից օրուայ զոհեր ընդունելով, եւ Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի 62 տարագրեալներից բաղկացած անուանացանկն արդէն նրա յիշատակած նախնական 75 անձերից անց է՝ հասնելով 82-83-ի, քանզի, ինչպէս պարզուեց, յաջորդել է աքսորականների երկրորդ քարաւանը՝ ե՛ւ Զանգեզուրը[12], ե՛ւ Այաշ[13]: Աքսորուել են մարդիկ նաեւ անհատապէս[14], ինչպէս, օրինակ, Ռուբէն Սեւակը՝ Զանգեզուրը, Պետրոս Գալֆայեանը՝ Այաշ, եւն:

Ահաւասիկ Զանգեզուրի աքսորեալների անուանացանկի քննութիւնը՝ ըստ համրիչի հերթականութեան:

«Զանգեզուրի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ»

1. Կոմիտաս Վ.[15]- Սողոմոն Գէորգի Սողոմոնեան: (26.09(08.10)1869, Քեօթահիա, Փոքր Ասիայի Կուտինա ք. - 22.10.1935, մահկանացուն կնքել է Փարիզում)[16]:

Ձերբակալուել է Կ. Պոլսում ապրիլի 11/24-ին, տարագրուել Զանգեզուր: Ազատման հրամանը՝ դիմումի հիման վրայ, աքսորավայր է հասել ապրիլի 26 կամ մայիսի 9-ի դրութեամբ՝ ամերիկեան դեսպան Հենրի Մորգընթաուի, նոյն դեսպանատան իրաւագէտ, խորհրդական, թարգմանիչ Արշակ Շմաւոնեանի, վարդապետի նկատմամբ անհատական համակրանք տածող Մէջիդ իշխանի միջնորդութեամբ, ինչպէս նաեւ Թղթատարականի (կապի - Կ. Ա.) նախարար Ոսկան Մարտիկեանի ջանքերով: Կ. Պոլիս է հասել մայիսի 2/15-ին[17]:

1916 թ. հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբներին, բժիշկ Վ. Թորգոմեանը (համրիչի թիւ 11-ը - Կ. Ա.) եւ յոյն դոկտ. Գոնոսը, Կոմիտասին փոխադրել են Շիշլիի Hôpital de la Paix բուժարանը... Թուրք ջլախտաբոյժ (հոգեբոյժ) Մազհար Օսմանի հսկողութեան տակ[18]: 1919 թ. «Կոմիտաս վարդապետի պաշտպան յանձնախումբ»-ը նրան Կ. Պոլսից տեղափոխել է Փարիզ, ապրիլի 7-ին վարդապետն ընդունուել է Վիլ-Էվրարի հոգեբուժարան (մայրաքաղաքի արուարձանում, որը մինչ այսօր կայ), ուր մնացել է մինչեւ 1922-ի օգոստոսի սկիզբը, ապա փոխադրուել է Վիլ Ժուիֆ, (միշտ նոյն հեղինակաւոր հոգեբոյժ դոկտոր Լուոֆի հսկողութեան ներքոյ)[19], որ-

12 **Բիւզանդ Պօղաճեան**, *նշ. աշխ.* (լուսագիր), տե՛ս **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 99, 100/117, 118, (I, II հրտ.). **Ց. Մ. Սիրունի**, *Կոմիտասին հետ*, գլ. V - *Քրիստոս պատարագեալ*,– «Էջմիածին», 1968, էջ 102:

13 **Թէոդիկ**, *նոյն տեղում*, էջ 101, 119, (I, II հրտ.)

14 *Նոյն տեղում*, էջ 15/33, 34/52 (I, II հրտ.)

15 Լուսանկարը տե՛ս **Կ. Աւագեան**, *նշ. աշխ.*, Պրպտուած նկարաշար Զանգեզրոի աքսորականների, էջ 101:

16 ՀՍՀ, հտ. 5, էջ 539. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 187-188, «Հայկական համառօտ հանրագիտարան» (այսուհետ՝ ՀՀՀ), Եր. 1995, հտ. 2, էջ 718-719. **Թէոդիկ**,– «Ամէնուն տարեցոյցը», Դ տարի, Կ. Պոլիս 1910, էջ 214 (ինքնակենսագրութիւն):

17 **Ց. Սիրունի**, *Կոմիտասին հետ*, գլ. II - *Կեդրոնական բանտին մէջ*,– «Էջմիածին», 1968 - Դ, էջ 34, գլ. VI - *Դարձ Խաչին ճամփէն*, VII - *Աքսորէն դառնալէ յետոյ*,– «Էջմիածին», 1968, Ժ, էջ 53, 55. **Հ. Խօճասարեան** (համրիչի 39-ը - Կ. Ա.), *Կոմիտաս վարդապետ. անձնական յուշերէս*, Նիւ Եօրք,– «Հայաստանի կոչնակ», ԼԶ տարի, թիւ 1, Յունուար 4, 1936, էջ 13. **Թէոդիկ**,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԶ տարի, էջ 45

18 **Ց. Սիրունի**, *նշ. աշխ*, գլ. VII - *Տագնապը կու գայ*, էջ 30, գլ. VIII - *Մազհար Օսմանի խնամքին ներքեւ*,– «Էջմիածին», 1969-գ, էջ 30-31

19 **Գոհար Աճեմեան**, *նշ. աշխ.*, էջ 75-76

տեղ էլ կնքել է մահկանացուն տասնվեց տարի անց:

Ուշագրաւ է, որ Կոմիտասը ներառուած է Արշակ Ալպօյաճեանի նահատակաց անուանացանկում՝ ծանօթագրութեամբ[20]:

2. Յովհան Վ.- Կարապետեան[21], վերապրող, կարգաթող: Զինադադարին Կ. Պոլիս է վերադարձել Ուշագից, ուր հասել էր Զաղբրբից[22]: 1919-ի սկզբներին վերակազմեալ «Ազգային Լիկ»-ի հայկական միութեան երկու ներկայացուցիչներից մէկն էր[23]:

3. Քաջունի Քհնյ.- Յուսիկ (1851, Արաբկիր - 1916, Համամամ): 1886-ին քահանայ է ձեռնադրուել, եղել է նաեւ ծննդավայրի առաջնորդական փոխանորդ: Դաշնակցական, Ազգ. երեսփոխան: Վախճանուել է Համամամում, որը կայեան էր Մեսքենէի եւ Տէր-Զօրի միջեւ[24]: Որդիները՝ Եզնիկն ու Եղիշէն, տեղեկանալով հօր աքսորի եւ մահուան մասին, կամաւորագրուել են Անդրանիկի «Հայկ. Առանձին հարուածող զօրամաս»-ին[25]:

4. Ճէվահիրճի.- Միսաք (1858, Կեսարիա - 1924, Կ. Պոլիս), արքունի բժիշկ, վիրաբոյժ: Աւարտել է Կ. Պոլսի բժշկական ուսումնարանը, կատարելագործուել Փարիզում: 1908-1909 թթ. եղել է Հայոց պատրիարքարանի դատաստանական, Մայր Եկեղեցու թաղային խորհուրդների անդամ: Աքսորից վերադարձել է Բեսիմ Օմեր փաշայի բարեխօսութեամբ[26], դոկտ. Մեհմեդ Ալի Պէյի անմիջական ջանադրութեամբ[27]:

5. Ռ. Սեւակ.- Ջիլինկիրեան (1885, 15.02, գ. Սիլիւրի - 1915, 13/26.08, Թիւնէյ): Կ. Պոլիս է վերադարձել 1914-ին, ձերբակալուել է 1915-ին: Թէոդիկի անմիջական վկայութեամբ. «Իբր բժիշկ Մագրիքէոյի բանակին զին. ծառայութիւնը կատարած միջոցին էր, որ առանձին տարագրուեցաւ Զանգեզրի»[28]:

Նահատակուել է Զանգեզրի եւ Գալայճըքի ճանապարհին՝ Թիւնայ (Թիւնէյ) կոչուած վայրում[29] (Զանգեզրից վեց ժամ հեռու՝ կառքի ընթացքով), 1915-ի օգոստոսի 13/26-ին[30]: Ըստ Գոնիայի պատերազմական ատեանում կառապան Հասանի տուած վկայութեան՝ վերջին սպանուողն էր[31]:

20 ԳԱԹ, Արշակ Ալպօյաճեանի ֆոնդ, արխիւ 44, թիւ 4, թերթ 1-4. **Կարինէ Աւագեան**, *նշ. աշխ.*, էջ 37-38

21 **Յովհան Կարապետեան**, *Էջ մը աքսորականի յիշատակներէս*. տե՛ս *Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը ժամանակակիցների յուշերում*, կազմեց եւ ծանօթագրեց Ա. Ծարուրեանը, Եր., 1986, էջ 267-271, 327. **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 96 (I, II հրտ.):

22 **Թէոդիկ**,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, *Ապրիլ Տասնըմէկ 1915*, էջ 113-114. **Կ. Աւագեան**, *Անզուգական ցուցանմոյշ կամ վերագտնուած մասունք*,– «Գարուն», 1995, օգոստոս, էջ 74

23 **Թէոդիկ**, *նոյն տեղում*,– «Պոլսահայ Լիկ», էջ 177-178

24 **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 48, 66 (I եւ II հրտ.), թիւ 108. **Գ. Պալաքեան**, *նշ. աշխ.*, էջ 96, 301-303, 282-284 (I, II հրտ.)

25 **Վազգէն Անդրէասեան**, *Վահան Չէրազ եւ իր երգն Հայաստանի*,– «Քաջունի եղբայրները», տպ. Սեւան, Պէյրութ-Լիբանան, 1977, էջ 531-535

26 **Միսաք Ճէվահիրճեան**, *Նամակ խմբագրութեանը*,– «Գարուն», 11-12, 1995, էջ 36-37

27 **Նոյնը**, *Մէկ թանգարանային ցուցանմոյշ՝ մէկ վաւերագիրք...*,– «Բնօրրան», Հայաստանի հայրենակցական միութիւնների խորհրդի հանդէս, թիւ 1-2-3, (14-16), 2001-2003, էջ 292-293. **Կ. Աւագեան**, *Թանգարանային ցուցանմոյշն անխօս՝ ամենախօս վկայ. պրպտումը շարունակւում է՝ արձագանգների թելադրանքով...*,– «Մեծ Եղեռն-90, Հանրապետական գիտական ընտաշրջանի նիւթեր»,– «Դպիր» հրտ., Գիւմրի, 2005, էջ 129

28 **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 15, 33 (I, II հրտ.)

29 **Գ. Պալաքեան**, *նշ. աշխ.*, էջ 96 (I, II հրտ.). **Ա. Ծարուրեան**, *նոյն տեղում*, էջ 258

30 **Ա. Ծարուրեան**, *նոյն տեղում*, էջ 269, 272

31 *Նոյն տեղում*, էջ 258

© National Library of Armenia

Իրականանում է դեռեւս 1912-ի ապրիլի 29-ին Հրանտ Նազարեանցին հասցէագրած նամակում դրսեւորուած իր իսկ մարգարէութիւնը, որ է. «... Այս բոլորին վրայ աւելցուր նաեւ Կ. Պոլսոյ մզձաւանջը, այն հորիզոնը, որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, եւ ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սոդոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը»[32]:

6. Միսքճեան.– Ստեփան (1852, Կ. Պոլիս - 1915, Էնկիւրի)[33]: Կայսերական բժշկանոցից վկայուած բժիշկ, մանկաբարձ, վիրաբոյժ: Օրթաքէոյի բնակիչ էր, որի կաթոլիկ եկեղեցու թաղային խորհրդի անդամ էր նաեւ: Պաշտօնավարել է Էֆտիգուլէի հիւանդանոցում[34]: Զարաղէտ օրուայ ձերբակալուածների մէջ նրան յիշատակում է Երուանդ Օտեանը[35]:

Ընդգրկուած է Արշակ Ալպոյաճեանի 303 նահատակաց անուանացանկում[36]:

7. Թօփճեան.– Պետրո՞ս, բժիշկ: Երուանդ Օտեանը յիշատակում է ապրիլի 11-ին ձերբակալուածների կազմում[37]:

8. Վարդան Քհնյ.– Գարակեոզեան, Ֆէրիքէոյի (Ֆէրիգիւղ) քահանան, վերապրող: Զինադադարին Կ. Պոլիս է վերադարձել Ուշագից, ուր հասել էր Զանգեզուրից[38]:

9. Գ. Ճէլալ.– Գրիգոր, բժիշկ, հին հնչակեան գործիչ, վերապրող[39]:

10. Գազազեան.– Արշակ, դեղագործ, հանրային գործիչ, վերապրող[40]:

11. Թորգոմեան բժիշկ.– Վահրամ (1858.20.04, Կ. Պոլիս, Իսկիւտար - 1942, Փարիզ): Փարիզի բժշկական վարժարանից վկայուած 1884 թ., նոյեմբ. 14-ին: Եղել է Կ. Պոլսի Կայսերական բժշկական ընկերութեան փոխնախագահ, Քաղաքապետութեան Առողջապահական բարձրագոյն ժողովի, Փարիզի բժշկա-պատմական ընկերութեան անդամ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրութիւնների, արժանացել է Officier d'Académie պատուանշանի[41]:

Զանգեզուրը է աքսորուել տարագրեալների առաջին իսկ քարաւանի հետ, առաջին Կ. Պոլիս դարձողներից էր երեք շաբաթ անց իշխան Մէջիդ էֆենդու միջամտութեամբ՝ Սայիդ Հալիմին (Վահրամ Թորգոմեանը իշխանի անձնական բժիշկն էր)[42]: Կ. Պոլիս է վերադարձել 1915-ի մայիսի 2-ին, ըստ 1331 (1915 թ.) 26 ապրիլի հրամանի[43]:

12. Պողոսեան.– Այս ազգանունը, անուանատառով (Գ.), կայ Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի Այաշի աքսորեալների ցանկում՝ որպէս Ջլախտաբոյժ, Ազգ. երեսփոխան, վերապրող[44]: Թէոդիկի 1916-1920 թթ. (Ժ-ԺԴ տարի) համահաւաք տարեցոյցի «Զինադադարէն վերջ դարձողներ»-ի կազմում ներկայացուած է «Ջլախտաբոյժ տքթ. Պողոսեան - Այաշ, Էնկիւրի, Հալէպ» ընթացքով[45]: (Ինչպէս տեսնում ենք, այստեղ բացակայում է եւ անուանատառը): Գեղարդ սուրիահայ տարեգրքի 1976-78, Բ. գրքում Ջլախտաբոյժ Խաչիկ Պողոսեանը ներկայացուած է որպէս Այաշի աքսորական[46,47] սակայն ի թիւս Դանիէլ Վարուժանի, Միքայէլ Շամտանճեանի, որոնք հաստատապէս Զանգեզրրի աքսորականներ են (տեղեկատուութիւնը կը հաղորդենք տեղում):

Ըստ հալէպահայ անուանի բժիշկ եւ մշակութային գործիչ Թորոս Թորանեանի՝ «Այս ցանկերուն մէջ յիմարաբոյժ դոկտ. Խաչիկ Պողոսեանը ներկայացած է որպէս Գ. Պողոսեան: Վրէպ մը ըլլալու է»[48]: Հետեւաբար եթէ Այաշի այս աքսորականը, ինչ որ ժամանակ Զանգեզրրում չի եղել, ինչպէս, օրինակ, համրիչի թիւ 76-ը՝ Հրաչ, որը Այաշ է տեղափոխուել իր իսկ դիմումով (տե՛ս առաջիկայում), ապա Ջլախտաբոյժի ազգանուանակիցն է համրիչի թիւ 12-ի աքսորականը:

13. Տինանեան.– Բարսեղ, բժիշկ, հանրային գործիչ, վերապրող[49]: Յիշատակւում է Մ. Շամտաճեանի (համրիչի թիւ 41-ը - Կ. Ա.) յուշերում, ուր ծանուցւում է, որ մեկնելիս իր թուրք հիւանդին՝ չէթէճի արապաճը Իսմայիլի աղջկան յանձնել է Ռ.-Սեւակի (համրիչի թիւ 5-ը - Կ. Ա.) խնամքին[50]: Այս ազգանունն առկայ է Թէոդիկի դիմումով աքսորից վերադարձողների ցանկում[51]:

1919 թ. ապրիլի 11/24-ին Կ. Պոլսում կայացած յիշատակի առաջին սգահանդէսի կազմակերպիչ-յանձնախմբի անդամներից էր[52]:

14. Միրզա.– Քեթենճեան, դոկտ., դաշնակցական գործիչ, վերապրող: Զանգեզրրից փրկուել է փախուստով: Գասթեմունիում ձերբակալուել է, բայց շնորհիւ տեղի ոստիկան զինուորների հրամանատարի բարեացակամութեան ազատուել է Տէր-Զօր աքսորուելուց: Ապա պաշտօնի է կոչուել օսմանեան բանակում՝ իբրեւ բժիշկ՝ հարիւրապետի աստիճանով, եւ անցել է Զանգեզրրից Էնկիւրի եւ Գոնիա[53]: 1920-ին Ուրֆայում թուրքական բանակի դէմ մղուող ժողովրդական պայքարի ղեկավարներից էր[54]:

---

32 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», ԻԲ տարի, տպ. «Մասիսի», Փարիզ, 1928, էջ 368-369

33 Գ. Պալաքեան, *Ազ. աշխ.*, էջ 97 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 37, 55 (I, II հրտ.)

34 Թէոդիկ, *Յուշարձան...*

35 Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ.- 1914-1919 (անձնական յիշատակներ)*, գլուխ՝ «Զարաշուք գիշերը», «Անուանացանկ», «Նաիրի» հրտ., Եր., 2004, էջ 92, 556:

36 ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4

37 Եր. Օտեան, *նոյն տեղում*, էջ 92, 550

38 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 96 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, *Ապրիլ Տասնըմէկ 1915, Ա - Զինադադարէն վերջ դարձողներ*, էջ 114. Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*, Ժ - *Ճանապարհ Խաչի*, գլ. I - *Զարաշուք մանգաղը*,– «Էջմիածին», 1968, թիւ Դ, էջ 30. Եր. Օտեան, *նոյն տեղում*, էջ 92, 564

39 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97 (I, II հրտ.). Եր. Օտեան, *նոյն տեղում*, էջ 92, 98, 554

40 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 37, 55 (I, II հրտ.)

41 Կենսագրութիւնը եւ մատենագիտութիւնը տե՛ս **Vahram Torkomian.** *Memoires d'un médecin stambouliote. 1860-1890.* Traduit de l'arménien par Simone Denis-Torkomian. Édité Raymond H. Kévorkian, Paris, 2007.

42 Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*, գլ. VI - *Դարձ Խաչին ճամփէն*,– «Էջմիածին», 1968-ժ, էջ 53-54

43 ԳԱԹ, Վահրամ Թորգոմեանի ֆ., 1331-26 ապրիլ (թուրքերէն, պատճէն, 1 թերթ), ֆ. թիւ 323/16 - III

44 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 87, 88 (I, II հրտ.)

45 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, էջ 114

46 Հայկ Պարիկեան, *Դիմաստուերներ հալէպահայ ազգային դէմքերու*, է - Դոկտ. Խաչիկ Պողոսեան,– «Գեղարդ», Բ. գիրք, Հալէպ. 1976-78, էջ 156-157. Կ. Աւագեան, *Թանգարանային ցուցանմոյշն անխօս՝ ամենախօս վկա...*,– «Մեծ Եղեռն - 90, Հանրապետական նստաշրջանի նիւթեր»,– «Դպիր» հրտ., Գիւմրի, 2005, էջ 130-131

47 Խորին շնորհակալութիւն պրն. Միհրան Մինասեանին, սոյն յօդուածի պատճէն համար:

48 Թորոս Թորանեան, *Եղեռնայուշ Մասունք կամ Խօստովանողք եւ Վկայք Խաչի*, ներկայացնող՝ Թորոս Թորանեան,– «Նոր օր. մշակութային յաւելուած», նոյեմբեր, 2006, 11 (155):

49 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97 (I, II հրտ.)

50 Միքայէլ Շամտանճեան, *Զանգեզրրէն վերյիշումներ*. տե՛ս Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 115, 133-134 (I, II հրտ.):

51 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, էջ 115

52 Թէոդիկ, *Յուշարձան...*,– «Վերջաբանի տեղ», էջ 128, 146 (I, II հրտ.)

53 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97, 172-173, 164 (I, II հրտ.)

54 Հրաչ Տասնապետեան, *Հ. Ց. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ-ընդհ. ժողով (1890-1924)*, Աթէնք, 1988, էջ 119-120, 127

© National Library of Armenia

15. Ալթունեան ատամնաբոյժ.– Վահան (1888-1964), ծնուել եւ մահացել է Կ. Պոլսում[55]:

Աքսորից ազատման վերջին հրամանը ստացած երեք տարագիրներից (տե՛ս համրիչի թիւ 15, 87, 96-ը – Կ. Ա.) մէկն է: Զանղերրից դուրս են եկել 1915-ի օգոստոսի 6/12-ին, օգոստոսի 8-ին հասել են Էնկիւրի (Անկարա – Կ. Ա.), որտեղ բանտարկուել են: Օգոստոսի 17-ին դուրս են բերուել բանտից եւ տեղի կաթոլիկ հայութեան 750-800 հոգուց բաղկացած քարաւանի հետ, բազուկներն իրար կապոտած, մահուան ճանապարհ են հանուել: Փրկուել են, սակայն, Պապի Կ. Պոլսոյ նուիրակ Մոնսենեոր Դոլչիի միջնորդութեամբ, տարուել Գարակէտիկ գիւղ: Օգոստոսի 20-ին այստեղից երեք ընկերները դուրս են եկել եւ ոտքով 21 օրում հասել Պոզանթի, որտեղից էլ քշուել են Տարսոն՝ քաղաքից դուրս հաստատուած տարագիրների վրանաքաղաքը: Յաջողել են ապա վերստանալ աքսորից ազատ արձակուելու նոր հրամանը ընտանիքի անդամների ջանքերով եւ, սեպտ. 19-ին Տարսոնից մեկնելով, Կ. Պոլիս են հասել սեպտ. 22-ին[56]: Այս իրողութիւնը հաւաստւում է վերապրողի դստեր նամակով[57], որ ստացայ Մոնրէալից 2003-ին՝ յարձագանս իրեն ընծայագրած գրքիս:

16. Կիւլիստան.– Կիւլուսթանեան, ատամնաբոյժ, վերապրող, որի հաւանաբար ազգականը՝ դոկտ. Մելքոն Կիւլիստանեանը[58], Կ. Պոլիս է վերադարձել Այաշից:

17. Զարեհ.– Համրիչն այս անձը վկայող միակ աղբիւրն է. հաւանաբար բուժսպասարկման ասպարէզից է, քանզի անունը նոյն մասնագիտութեան անձանց շարքում է: Գուցէ՝ Կապիկեա՞ն, Եփրեմեա՞ն, Գազազեա՞ն կամ նրանցից մէկի փոխարէն աքսորուած անուանակից:

18. Եղնիկ.– Համրիչը այս անձը վկայող դեռեւս միակ աղբիւրն է (մասնագիտութիւնը՝ Զարեհի վերաբերեալ ենթադրութեամբ):

19. Ասատուր Վ. դեղագործ.– Ասատուրեան Վահրամ (1876 Ստամբուլ, Բեքոզ): 1905-ից զբաղուել է դեղագործութեամբ: Ապրիլի 11/24-ի արհաւիրքի տուժածներից է, վերապրող, որը, Զանղերրից Հալէպ եւ Մեսքենէ հասնելով, ծառայել է զինուորական հիւանդանոցում (սպայի աստիճանով)՝ որպէս բժշկի օգնական՝ մեծապէս օգտակար լինելով տարագիր հայերին:

Պատերազմից յետոյ դեղատուն է բացել Ստամբուլում՝ Կէտիկ Փաշայ[59]:

---

55 Կ. Աւագեան, *Թանգարանային մէկ ցուցանմոյշ՝ մէկ փաստավաւերագիրք եւ... նորայայտ էջեր*,– «Բազմավէպ», 2006, էջ 151: Խորին երախտագիտութիւնս մոնրէալաբնակ պարոն Արայ Կարմիրեանին, ում միջոցով ստացայ ազնուափայլ տիկ. Մարի Սիւզան Ալթունեանի ձեռագիր տեղեկատուութիւնը՝ հօր՝ Վահան Ալթունեանի եւ ընտանիքի մասին: Ցաւ ի սիրտ, 2007-ի դեկտեմբերին իմացայ տիկնոջ մահուան մասին:

56 Օհաննէս Թէրլէմէզեան (համրիչի թիւ 7-ը - Կ. Ա.),– «Պոլիս. Մտաւորականներու ձերբակալութիւնը եւ աքսորը», տե՛ս *1915. Աղէտ եւ վերածնունդ*, Փարիզ, տպագր,– «Արաքս», 1952, էջ 236-242. **Եր. Ստեան**, *նոյն տեղում*, էջ 172-173:

57 **Կ. Աւագեան**, *Թանգարանը պատմագրութեան հիմնակունք*. որոնուում են... վերապրողաց եւ նահատակաց յետնորդները՝ Մշակոյթի զարգացման եւ մշակութային քաղաքականութեան հետազօտութիւնների կենտրոն, մշակութային լրատու, թիւ 3-4, 5 սեպտ. 2003. նոյնը, *Թանգարանային ցուցանմոյշն անխօս՝ ամենախօս վկայ*. պրպտումը շարունակւում է՝ արձագանգների թելադրանքով...,– «Մեծ Եղեռն - 90, Հանրապետական գիտական ճստաշրջանի նիւթեր», Գիւմրի, 2005, էջ 130:

58 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 98, 88 (I, II հրտ.)

59 **Թէոդիկ**, *Խլեակ մը «Մեծ կարաւան»-էն*,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԷ տարի, 1921, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, էջ 168. **Arsen Yarman**, *Osmanli Sağlik hizmetlerinde Ermeniler ve Surp Prgiç Ermeni hastahanesi tarihi*, 2001, Istanbul, s. 305: Խորին երախտագիտութիւնս՝ համրիչի թիւ

20. Մանիկեան.– Պետրոս, դեղագործ, հանրային գործիչ, վերապրող: 1893-ին Ստամբուլի դեղագործների միութեան անդամ էր, դեղատուն ունէր Գումգաբուում[60]:

21. Զարիֆեան.– Աւետիս, դեղագործ, հանրային գործիչ, վերապրող: Ստամբուլի դեղագործների միութեան հիմնադիր անդամներից էր: Դեղատուն ունէր Գումգաբուում: 1936-ին գաղթել է Փարիզ[61]:

22. Միսքճեան.– Գրիգոր (1865-1915), դեղագործ, նահատակուած Էնկիւրիի մօտ, բժիշկ եղբօր՝ Ստեփանի (համրիչի թիւ 6-ի ազգանուանակիրը – Կ. Ա.) հետ[62]:

23. Հաճեան.– Յայտնի է անուան առաջին տառը՝ Գ., զինադադարին Կ. Պոլիս է վերադարձել Զանղերրից[63]:

24. Ղազարոս.– Հաւանաբար դաշնակցական, գործիչ Ղազար Ղազարեանի (Մարզպետ) փոխարէն աքսորուած մէկն է:

25. Թէրզեան.– Յակոբ (22 օգոստոս, 1879, Հաճն – 1915, Էնկիւրի): Հնչակեան էր: 1897-ին Կ. Պոլիս գալով՝ 1900-ին ստացել է դեղագործի վկայական: Դեղատներ է ունեցել Հաճընում, Ադանայում: Կ. Պոլսում բացել է «Ադանա» դեղատունը՝ Գումգաբուում: Զբաղուել է գրական գործունէութեամբ՝ պոլսահայ մամուլում հանդէս գալով Յակոբեր, Հմայեակ, Տաւրոս, Յիթո կեղծանուններով: Ստուարածաւալ աշխատութիւնն է Կիլիկիոյ աղէտը (1909 թ. կոտորածների վիճակագրութեամբ)՝ 5 հատորով տպագրուած 1912-ին, թողել է Հաճընի գաւառաբարբառը ձեռագիր[64]:

Ըստ Արսէն Եարմանի՝ անյայտ է մահուան տարեթիւը: Նա յիշատակում է նաեւ. Յակոբ Թէրզեանի միաժամանակ փաստաբան լինելու մասին[65]:

26. Նշան.– Գալֆայեան (1965՞), ճարտարապետ-երկրագործ, հանրային գործիչ, վերապրող: Եղել է Թուրքիայի գիւղատնտեսութեան եւ առեւտրի նախարարութեան գիւղատնտեսական տնտեսագիտութեան մասնագէտ (էկոնոմիստ) եւ պատասխանատու տնօրէնի օգնական[66]: 1924-ին տեղափոխուել է Յունաստան, 1927-ին՝ հրաւիրուել Իրան, պաշտօնավարել՝ որպէս շահի կալուածքների պետերից մէկը: Ընտրուել է Ֆրանսիական Ակադեմիայի թղթակից անդամ[67]: Յիշողութիւնները Զանղերրի աքսորական կեանքից ամփոփուած են Թէհրանի 1925-ի տարեցոյցի էջերում[68]:

27. Նարկիլէճեան.– Յակոբ, 1900 թ. աւարտել է Գալաթասերայի լիցէյը: 1904-ին դեղագործական ուսումնարանի շրջանաւարտ էր: Դեղատուն է ունեցել Օսմանբէյլում (Շիշլիի կողմերում)[69]: Աքսորուել է

4-ի նոյնանուն թոռանը՝ մեծարգոյ պրն. Միսաք Ճեւահիրճեանին, Արսէն Եարմանի ստուարածաւալ գրքից մեզ անհրաժեշտ յօդուածների թարգմանութեան համար:

60 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.). **Arsen Yarman**, *նշ. աշխ.* էջ 311

61 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 97, 98 (I, II հրտ.). **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 315

62 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.). **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 37, 55 (I, II հրտ.). *1915-1965 - Յուշամատեան Մեծ Եղեռնի*, Գ. - *Ապրիլեան արիւնոտ կիրակին Ստամբուլում*, Գ տարի, Պէյրութ-Լիբանան, 1987, էջ 39. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1:

63 **Թէոդիկ**,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, էջ 115

64 **Գ. Պալաքեան**, էջ 98 (I, II հրտ.), *1915-1965, Յուշամատեան Մեծ Եղեռնի. նոյն տեղում*, էջ 39. **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 30, 48 (I, II հրտ.). **Գ. Ստեփանեան**, *Կենսագրական բառարան*, հտ. Ա, Եր. 1973, էջ 360

65 **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 314

66 **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 328

67 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 97 (I, II հրտ.). **Գ. Ստեփանեան**, *նշ. աշխ.*, էջ 223

68 **Թէոդիկ**,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 87

69 **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 312. առկայ է լուսանկարը. տե՛ս նաեւ «Բազմավէպ», 2006, 1-4,

© National Library of Armenia

զինուորական դեղագործի պաշտօնական հաղուստով, որի նշանները թուրք ոստիկանը պոկել է Հայտար Փաշայի Ա. սպասասրահումից արտաքնոց տանելով՝ ի նուաստացում[70]: Վերապրող է՝ աքսորից ազատուած առաջին խմբի կազմից (ըստ Գրիգորիս Պալաքեանի նրանք հինգն էին)[71]:

28. Արսենեան.– Ասատուր, դեղագործ, նահատակուած Տէր-Զօրի կողմերում[72]: Ըստ Արսէն Եարմանի՝ վերապրող է[73]: Եթէ նկատի ունենանք հեղինակի Յակոբ Թէրզեանի վերաբերեալ տեղեկութեան մէջ այս անձի ստոյգ նահատակութեան վերաբերեալ լռութիւնը (մահուան թուականն՝ անյայտ), ապա հաւատ չի ներշնչում սոյն հաղորդումը:

29. Դանիէլեան Պ. փաստաբան.– Պօղոս, եոզղատցի, փաստաբան, դաշնակցական գործիչ: Նահատակուել է Տէր-Զօրի կողմերում[74]:

30. Զերազ.– Գասպար Գրիգորի (1850-1928) փաստաբան: Ծնուել է սնանկացած ամիրայի ընտանիքում[75]: (Ծնողները Կ. Պոլիս են գաղթել Ապուչէխի (Ակնի շրջան) Զերազ թաղից, հաստատուել Խասգիւղի Պաշեմլիկ թաղում)[76]: Եղել է Խասգիւղի դպրոցի հոգաբարձու, Հայոց Դատաստանական խորհրդի անդամ: Աշխատակցել է Բազմավէպին, Բիւզանդիոնին[77]: Զանղերը է աքսորուել մեծանուն եղբօր՝ Մինաս Զերազի փոխարէն (որը Փարիզ էր անցել 1914-ին)[78]: Ըստ Թէոդիկի՝ Կ. Պոլիս է վերադարձել Զանղերը-Ուշագ տաժանքով[79], հոգեկան հաւասարակշռութիւնը խախտուած, որը վերջնականապէս կորցրել է՝ ջարդարարների դատավարութիւնից յուսախաբ (դատավարութեան վկաներից էր)[80]:

Գասպար Զերազը հայրն է Վահան Զերազի[81]:

31. Մովսէս.– Պետրոսեան, ուսուցիչ, դաշնակցական գործիչ: Բուլղարահայ լինելով՝ աքսորից ազատուել, մեկնել է Սոֆիա[82]:

32. Տ. Քէլէկ խմբագիր.– Տիգրան, Տիրան[83] (20 սեպտ., 1862, Կեսարիա - 1915 հոկտ., Սեբաստիոյ մօտ): «Միջազգային տարողութեամբ օրագրող եւ հրապարակագիր»[84]: 1894-ի ջարդերից յետոյ ստիպուած մեկնել է Յունաստան, ապա՝ Մարսել: Վերադարձել է Կ. Պոլիս հինգ ամիս անց, աշխատակցել թուրք թերթերի,

էջ 151, ձախից՝ I (նկարաշարում շփոթուած են նկ. 1-ին եւ 2-րդի բացատրագրերը - Կ. Ա.):

70 Ա. Նագգաշեան, *Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը*, հրտ. Կ. Տօնիկեան եւ որդիք, Պէյրութ-Լիբանան, 1969, էջ 13. Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 84 (I, II հրտ.)

71 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 98, 106, 105 (I, II հրտ.)

72 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.), ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. *1915-1965 - Յուշամատեան...* Պէյրութ-Լիբանան, 1987, էջ 39. Վանիկ Հայրապետեան (դեղագործ), *Զոհ գնացին եաթաղանին*. տե՛ս Ալբերտ Փարսադանեան, *Թղթապանակ 1915*, Եր., 2005, էջ 31:

73 **Arsen Yarman**, *նոյն տեղում*, էջ 288, 305

74 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97, 263/247 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 39, 57 (I, II հրտ.). Արշ. Ալպօյաճեանի ֆ., *նոյն տեղում*, թերթ 4

75 ՀԱՀ, հտ. 9, Եր., 1983, էջ 11

76 Վազգէն Անդրէասեան, *Վահան Զերազ եւ իր երգն Հայաստանի*, տպ. «Սեւան», Պէյրութ-Լիբանան, 1977, էջ 24

77 *Նոյն տեղում*, էջ 26

78 ՀԱՀ, հտ. 9, էջ 12

79 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, էջ 114

80 Վազգէն Անդրէասեան, *նոյն տեղում*, էջ 25

81 Վերջինիս յարգարժան դստեր արձագանգը տե՛ս Բիւրակն Անդրէասեան - Զերազ, *Համրիչի 30-րդ հատը.- Գասպար Զերազ*,– «Ազգ», 21. 08. 1996, էջ 6:

82 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97 (I, II հրտ.)

83 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 8-9, 26-27 (I, II հրտ.)

84 Կ. Գէորգեան, *Հոյլը մեր մեծանուն նահատակներուն*,– «Ամէնուն տարեգիրքը», ԺԲ տարի, 1965, Պէյրութ-Լիբանան, էջ 165

ստանձնել «Թարիգ»-ի խմբագրապետութիւնը: Նորից Եւրոպա անցնելով՝ թղթակցել է Եւրոպական մամուլին եւ 1898-ին կրկին Կ. Պոլիս է վերադարձել՝ օգտուելով Եւրոպայում գտնուող օսմ. հպատակների մասին թուրք կառավարութեան ներման հրապարակումից: Անապահովութիւնը երկրում ստիպել է, սակայն, Եգիպտոս մեկնել, որտեղից Կ. Պոլիս է հասել արդէն «Հիւրիէթ»-ին ապաւինած[85] եւ ստանձնել Սաբահ (Առաւօտ) օրաթերթի խմբագրապետութիւնը: Իր խմբագրականները ստորագրում էր իր իսկ անուանատառերից ստեղծած «Տալ-քէաֆ» անուամբ: Տպագրուել է՝ «Գլանիկ», Եւրոպայում՝ «Վիքօնթ տը Գլանիկ» եւ այլ 6 ծածկանուններով: Սուրհանդակին աշխատակցել է՝ որպէս Սիրայր, նաեւ՝ Տիոնքէ: Ինքնաշխատութեամբ գիտակ էր անգլերէնի, ֆրանսերէնի, ինքնաբերաբար՝ թուրքերէնի: Ռամկավար կուսակցութեան ատենապետ էր:

Աքսորուել է՝ անունը մի քանի ցանկերում լինելով: Նահատակուել է Սեբաստիոյ Ալիս (Գըզըլ Ըրմաք) գետի կամրջից ցած հրուելով (կամ արդէն սպասուած՝ ցած նետուած)[86], իր իսկ աշակերտի՝ Սեբաստիոյ կուսակալ Մուհամմետի հրամանով:

Ընդգրկուած է Արշակ Ալպօյաճեանի նահատակաց անուանացանկում[87]:

33. Բ.[իւզանդ] Քէչեան.– խմբագիր (1859, 8 օգոստոս, Գումդաբու - 1927, 29 յունիս): Լրագրութեան ասպարէզ է մտել 17 տարեկանից, սկզբում թրքալեզու երկու թերթերի խմբագրութիւններում, ապա՝ Մասիսում եւ Արեւելքում (1879-1896 թթ.), որի խափանումից յետոյ՝ նոյն թուականի նոյեմբերի 4-ին, հիմնել է Բիւզանդիոնը՝ որպէս տնօրէն-խմբագրապետ մնալով շուրջ 20 տարի (1896-1916 թթ.), քանզի Զանղերերից վերադառնալուց յետոյ [2.05 (հին տոմար) 1915-ին] եւս անցել է իր աշխատանքին մինչեւ Բուլղարիա մեկնելը: Պատերազմից յետոյ Կ. Պոլիս վերադառնալով՝ աշխատակցել է Վերջին լուրին, եւ Նոր լուրին, մինչ իր մահը: Ծածկանունն էր «Տանուտէր Յարո»: Եղել է Ազգ. երեսփոխան: Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգ. հիւանդանոցի պատմութիւնն ամփոփող առաջին հեղինակն է[88]:

34. Թօփճեան.– Յակոբ (1876, Այնթապ - 1951, մարտի 18, Բէյրութ), Գէորգեան ճեմարանի շրջանաւարտ, ձեռագրագէտ, հեղինակ մի շարք ձեռագրաց ցուցակների: 1904-ին իր դոկտորական թեզը ներկայացրել է Բեռլինի Հալէի համալսարանին, ստացել՝ դոկտ. փիլիսոփայութեան եւ մագիստրոս գեղարուեստից տիտղոսը: Հին եւ նոր 10 լեզուների գիտակ էր:

Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը Կ. Պոլսոյ Ազգային մարմնի երեսփոխան էր, ուսումնական խորհրդի ատենապետ: 1906-1908 թթ. եղել է Արեւելքի խմբագրապետը, Ժողովրդի ձայն օրաթերթի պատուակալ խմբագիրն ու աշխատակիցը: 1908-ից թղթակցել է Բեռլինի եւ Լոնդոնի մի շարք թերթերի: 1915 թ. ապրիլի 11/24-ին ձերբակալուած եւ Զանղերը աքսորուած մտաւորականութեան առաջին խմբից էր: Կուսակցական պատկանելութեամբ՝ ռամկավար ազատական:

Աքսորից ազատուել է գերմանացի գրող, լրագրող Էմիլ Լիւդուիգի Թալէաթին արուած անմիջական միջնորդութիւն-խնդրանքով:

Զինադադարից յետոյ Տիգրան Զայեանի գործակցութեամբ հրատարակել է

85 *Նոյն տեղում*

86 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 96, 170, 162 (I, II հրտ.). Կ. Գէորգեան, *նոյն տեղում*

87 ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4

88 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 96 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Դ տարի, 1910, էջ 291. *նոյն տեղում*, ԺԶ տարի, 1922, էջ 44-45. *նոյն տեղում*, ԻԲ տարի, 1928, էջ 651. **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 437

© National Library of Armenia

Ռընէսանս *Ֆրանսերէն թերթը (1919-1921 թթ.), ի պաշտպանութիւն Հայ Դատի:*

1922-ին քեմալականները, Կ. Պոլիս մտնելով, վերջնականապէս յուսախաբ են անում հայ մտաւորականութեանը, որոնցից շատերը բռնում են դաղթի ճամփան՝ արտասահման: Նրանց թւում էր եւ Յակոբ Թօփճեանը, ում աղգանունէր գործունէութիւնը նոր շրջան է թեւակոխում սփիւռքահայ կրթութեան, բարեգործութեան ոլորտներում՝ Փարիզ, Բէյրութ, Կիպրոս աշխարհագրութեամբ:

1945-ին Գարեգին Ա կաթողիկոսը դոկտ. Յ. Թօփճեանին հրաւիրում է Անթիլիաս՝ որպէս խորհրդատու, Դպրեվանքի դասախօս եւ Հասկ ամսագրի խմբագրապետ: Այս բազմածաւալ աշխատանքը նա կատարում է ամենայն ձեռնհասութեամբ՝ ներառեալ 1949 թուականը[89]*:*

35. Անտոնեան.– Արամ (1875/1881, Կ. Պոլիս – 1952, 23.12, Փարիզ), գրող, խմբագիր, բանասէր, պատմաբան, հրապարակախօս: Խմբագրել է Ծաղիկ, Լոյս գրական, Կառափնատ, Խարազան երգիծական հանդէսները, կազմել հայ գրականութեան դասագրքեր՝ Գանձարան խորագրով, եւ Դալլայլիկ ընթերցարանները: 1912-13-ին մասմաս տպագրել է Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն Պալքանեան պատերազմին քառահատորը (աւելի քան 1000 էջ՝ 100-ից աւելի նկարներով):

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին (1914 թ.) Կ. Պոլսում պաշտօնավարել է՝ որպէս զինուորական գրաքննիչ: Զերբակալուել է իր թուրք պաշտօնակցի մատնութեամբ Հայոց պատրիարքարանին տեղեկութիւններ հաղորդելու մեղադրանքով: Պատերազմական ատեանն այդ չի հաստատել, բայց նետել է «ամէլէ թապուրը»-ների մէջ: Փախուստը չի փրկել. յայտնուել է 1915 թ. ապրիլի 11/24-ի զոհ աքսորական մտաւորականութեան ցանկերում, տարագրուել Զանղեզուր:

1915-ի օգոստոսի սկզբներին աքսորավայրից սպանդ քշուող երկրորդ քարաւանում էր եւ միակ ազատուողն է եղել ստոյգ մահից, ասես նախախնամութեամբ, հետագայում աշխարհին յանձնելու համար Մեծ ոճիրը փաստավաւերագիրքը, Այն սեւ օրերուն պատկերաշարը:

(Սպանդից փրկուել է ճանապարհին կառքի ցնցումից վայր ընկնելիս սրունքը կոտրուելու եւ հիւանդանոց տեղափոխուելու հետեւանքով):

Զինադադարին Կ. Պոլիս է հասել՝ Թարսուս-Հալէպ տաժանքը յաղթահարած:

1921-ին Սողոմոն Թեհլիրեանի դատավարութեան վկաներից էր:

1926 կամ 28 թ. մինչ մահը՝ Փարիզի Նուպարեան Ազգային մատենադարանի տնօրէնն էր[90]*:*

89 Գ. Պալաքեան, *Ճշ. աշխ.*, էջ 97 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *Ճշ. յուշագր.*, էջ 13. Թ. Թորանեան, *Ապրող մարդեր*, գլ. Զ - *Մէծ բանասէրը՝ մշուշի ետին*, Պէյրութ-Լիբանան, 1991, էջ 84-103: Խորին երախտագիտութիւնս պարոն Կարո Աբրահամեանին, ում բարեացակամ աջակցութեամբ ինձ հասաւ պրն. Թորոս Թորանեանի սոյն ուշագրաւ աշխատութեան մեզ անհրաժեշտ հատուածը:

90 ՀՍՀ, հտ. 1, Եր., 1974, ՀՍՀ գլխ. խմբագր. հրտ., էջ 456, Հայկական համառօտ հանրագիտարան (այսուհետ՝ ՀՀՀ), հտ. 1, Եր., 1990, էջ 224. Գ... Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97, 142, 136 (I, II հրտ.). Կ. Գէորգեան,– «Ամէնուն տարեգիրքը», ԺԲ տարի, 1965, Պէյրութ-Լիբանան, էջ 202, 205. Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան*, հտ. Ա, Եր., 1973, էջ 100-101. Արամ Անտոնեան, *Մեծ ոճիրը*, Պոսթըն, 1921, II հրտ. «Արեւիկ», Եր., 1990. նոյնը, *Այն սեւ օրերուն.- Պատկերներ*, Պէյրութ-Լիբանան, 1985 (խորին երախտագիտութիւնս ազնուախոհ տիկին Գոհար Աճեմեանին, որն ինձ տրամադրեց գրքի քսերոպատճէն իր օրինակը՝ յականէ ծանօթանալու հնարաւորութիւն ընձեռելով). Միքայէլ Շամտանճեան, *Զանղեզուրէն վերյիշումներ*. տե՛ս Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 114, 132 (I, II հրտ.). նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-20, էջ 114-115. նոյնը, 1922, ԺԶ տարի, էջ 87-90. Եր. Օտեան, *Ճշ. յուշագր.*, էջ 78-80, 90, 184, 185, 188, 242, 243, 245, 416, 509, 545. *Սողոմոն Թեհլիրեանի դատավարութիւնը* (սղագրութիւն) «Արեւագուն» հրտ., Եր., 1990, էջ 122-123,– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 40. *Ով ով է*, կենսագրական հանրագիտարան, հտ. 1, Եր., 2005, էջ 104:

36. Թոլայեան.– Երուանդ [(Ֆրանսուա), (1884, Կ. Պոլիս, Բերա – 1937, Հայաստան), (ծննդեան թիւը յիշատակւում է նաեւ 1883, 1883.29.08՝ մանրամասնով)]: Պոլսահայ յայտնի հրապարակագիր, խմբագիր, թարգմանիչ Յովհաննէս Թոլայեանի որդին:

Պատանութեան շրջանում մուտք է գործել թատերական ասպարէզ՝ առաջին քայլերն անելով Մարտիրոս Մնակեանի մօտ: «Հիւրիէթի»-ից յետոյ եղել է թատերական գրեթէ բոլոր խմբերի կազմում՝ Պենկլեանին միանալով մեկնել է Փարիզ, Լոնդոն:

1908 թ. յուլիսի 19-ից լոյս է ընծայել Կավոշ *երգիծաթերթը, որի արտօնատէր խմբագրապետն էր ու տպարանատէրը (տպարանը գտնւում էր Բերա, Մեծ փողոց, թիւ 65): Թերթի տպագրութիւնն ընդհատուել է Թոլայեանի աքսորի շրջանին՝ զինուորագրութեան ընթացքում, վերսկսուել է մինչեւ 1925-ը Կ. Պոլսում, ապա՝ Փարիզում:*

Աքսորից դարձածների առաջին խմբի կազմում էր: Թէոդիկի «Դիմումներով՝ աքսորէ դարձողներ»-ի խմբում է:

1918-22-ին խաղացել է Կ. Պոլսի, 1926-36-ին Փարիզի հայկական թատրոնների ներկայացումներում: 1936-ին ներգաղթել է Հայաստան, 1937-ին՝ բռնադատուել գնդակահարուել: Արդարացուել է յետմահու[91]*:*

37. Շահնուր.– Ներսէս. համրիչն այն աղբիւրն է, որից տեղեկանում ենք այս անձի Զանղեզուրի աքսորական լինելու իրողութեան մասին: Զի յիշատակուած Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի աքսորականների ցանկերում: Այս անունը ներառուած է Արշ. Ալպօյաճեանի նահատակաց անուանացանկում, Թէոդիկի Յուշարձան...-ի նահատակաց կազմում, առանց աքսորավայրի յիշատակութեան, այն է՝ «Կեսարացի: Ս. Կարապետի վանքէն ընթացաւարտ երիտասարդ ուսուցիչ, որ պաշտօն կը վարէր Բերա՝ Ս. Գ. Լուսաւորչեան Կաթողիկէ վարժարանը»[92]*:*

38. Ս. Սրենց ուսուցիչ.– Սարգիս (Գըլըճեան), (1875-1955), գրող, խմբագիր, թարգմանիչ, մանկավարժ, դաշնակցական գործիչ: Վերապրող է: Դեռ ուսանողական շրջանում գաղափարակից-գործակիցն էր Արմէն Գարոյի (Փաստրմաճեան) եւ Հրաչի (Հայկ Թիրէաքեան. համրիչի թիւ 76-ը – Կ. Ա.), ի թիւս որոնց գնահատուել է եւ հետագայում:

Զանղեզրից փրկուել է հնարամտութեամբ՝ հասնելով Գոնիա, ապա՝ Կ. Պոլիս: 1919-ի մարտի 20-ից Ազգ. ժողովի քաղաքային յանձնախմբի անդամ էր[93]*:*

91 Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97, 106, 105 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Դ. տարի, 1910, տպագր. Տէր-Ներսէսեան Վ. եւ Հ, Կ. Պոլիս, էջ 298. նոյնը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, տպագր. Քէշիշեան Կ., Կ. Պոլիս, էջ 279. նոյնը, ԺԷ տարի, 1921, էջ 276. նոյնը, ԺԶ տարի, 1922, էջ 40. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 90, 98. Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան*, հտ. Ա. (Ա-Թ), էջ 366, ՀՀՀ, հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագր. հրտ., հտ. 2, Երեւան, 1995, էջ 301. *Ով ով է*, կենսագրական հանրագիտարան, հտ. 1, Եր., 2005, էջ 434

92 ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 38, 56 (I, II հրտ.)

93 Գ. Պալաքեան, էջ 97, 173, 164-165 (I, II հրտ.). Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 461, 517, 563. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115. նոյնը, ԺԷ տարի, 1921, էջ 156-157. Ց. Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 124, 243, 290, 345. Հրաչ Տասնապետեան, *Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհ. ժողով*, Աթէնք, 1988, էջ 66, 241: Սրենցի թարգմանչական շնորքի վերաբերեալ տեղեկացել եմ յարգարժան

© National Library of Armenia

39. Խաճասարեան.– Հայկ (?-1935), բազմամեայ ուսուցիչ, ռամկավար, հանր. գործիչ, հրապարակախօս, Ազգային Երեսփոխանական ժողովի ատենապետ: Լրագրող եւ երեսփոխան Օգսէն Խաճասարեանի որդին է:

Ապրիլ 11/24-ին ձերբակալուած եւ Զանղեզուրը քշուած աքսորականների առաջին քարաւանի կազմում էր, Զանղեզուրից ազատուածների առաջին խմբում, պատրիարքարանի միջնորդութեամբ՝ ըստ Այաշի աքսորական Սմբատ Բիւրատի 6 Յունիս թուակիր երկտողի [(Զանղեզուրի եւ Այաշի աքսորականների միջեւ գրաւոր անուղղակի հաղորդակցութեան մասին յայտնի է նաեւ Բիւզանդ Պօղաճեանի (դարձեալ՝ այաշական) յուշագրութիւնից)]:

Թէոդիկի «Դիմումներով աքսորէ դարձողներ»-ի թիւում է:

1919-ի մարտի 20-ից՝ Ազգ. ժողովի քղք. յանձնախմբի անդամ էր Ս. Սրենցի հետ միասին (Համրիչի թիւ 38-ը – Կ. Ա.):

Ըստ իր թողած յուշագրութեան՝ աքսորից առաջին ազատ աւձակուածը Կոմիտասն է եղել[94]:

40. Վարուժան.– Դանիէլ (Զիպուք-քէարեան), 1884, 21 ապրիլ, Սեբաստիոյ Բրգնիք գ. - 1915, 13/26 օգոստոս, Թիւնէյ):

1914-ին Յ. Ճ. Սիրունու հետ լոյս է ընծայել Նաւասարդ տարեգիրքը: Զարաղէտ 1915-ին Բերայի Հռոմ. Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանի տեսուչն էր:

Ըստ կնոջ՝ Արաքսի Վարուժանի եւ Յովհ. Պօղոսեանի յուշագրութեան՝ ձերբակալուել է ապրիլի 11/24-ի գիշերը՝ ժ. 11-ն անց, առաջին քարաւանի հետ աքսորուել է Զանղեզուրը, որտեղից թրքերէն քարտ-հեռագրեր է ուղարկել կնոջը եւ այլոց:

Ըստ աքսորակից Արամ Անտոնեանի (Համրիչի թիւ 35-ի ազգանուանակիրը – Կ. Ա.) յուշագրութեան՝ 6 տեսր բանաստեղծութիւն է հեղինակել, որոնք, սակայն, ենթադրւում է, մնացել են այն տանը, որ վարձել էր (յիշատակութիւն կայ նաեւ, որ տան տիրուհին ապրում էր Մանուշակ անունով դստեր հետ):

Նահատակուել է 13/26 օգոստոս, 1915-ին, Թիւնէյում, իր 4 ընկերների հետ (Համրիչի թիւ 5, 49, 65, 66-ը – Կ. Ա.) որդու՝ Հայկակի ծննդեան օրը:

Յետմահու ուսումնարանի սաների «Նաւասարդ» միութիւնը հրատարակել է Արաքսի Վարուժանի ջանքերով ոստիկանութիւնից փրկուած Հացին երգը[95]:

41. Շամտանճեան.– Միքայէլ [1874, Կ. Պոլիս - 1926, օգոստոս 21, Ղազիր (Լիբանան), յանկարծամահ]: 1893-98-ին ու-

---

պրն. Միհրան Մինասեանի նամակին կից հաղորդագրութիւնից. տե՛ս «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ա հատոր, Անթիլիաս, 1980, էջ 333:

94 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97 (I, II հրտ.), Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 7-րդ տարի, Կ. Պոլիս, 1913, էջ 145. նոյնը, *Յուշարձան...*, էջ 21/39 (I, II հրտ.). նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115. նոյնը, ԺԷ տարի, 1921, էջ 157. Հ. Խաճասարեան, *Կոմիտաս վարդապետ. անձնական յուշերէս*,– «Հայաստանի կոչնակ», ԼԶ տարի, թիւ 1, յունուար 4, Նիւ-Եօրք (տե՛ս նաեւ «Էջմիածին», 1968, թիւ Է, Ը-Թ, էջ 12, 100-101). Եր. Օտեան, *Անհիծեալ տարիներ...*, էջ 92, 98, 552:

95 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 96 (I, II հրտ.). Յ. Սիրունի, *նշ. աշխ.*, էջ 194, 346. *Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը ժամանակակիցների յուշերում*, կազմեց եւ ծանօթագրեց՝ Ա. Շարուրեանը, էջ 118-120, 252, 252-253, 258-259, 260-267, 267-271, 271-274, 322. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Գ. տարի, 1909, էջ 78-79 (Վարուժանի ինքնակենսագրութիւնը՝ 1908-ի 1/X դրութեամբ). նոյնը, *Յուշարձան...*, էջ 12/13, 30/31 (I, II հրտ.). Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 161. Դանիէլ Վարուժան, *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 3, Եր., 1987, էջ 466-468, ծնթ., էջ 643-645. Կարինէ Աւագեան, *նշ. աշխ.*, էջ 89, թիւ 195-196, էջ 90, թիւ 197-198, էջ 91, թիւ 199 եւ ծնթ. *Ով՝ ով է*, կենսագրական հանրագիտարան, հտ. 2, էջ 552-553:

սանել է Լայբցիկի եւ Բեռլինի համալսարաններում՝ հմտանալով պատմութեան, գրականութեան ասպարէզներում: Գերմաներէնի եւ պատմութեան ուսուցիչ էր, թարգմանիչ, հանրային գործիչ: Խմբագրել է Մասիս, Ծաղիկ, Ոստան *պարբերականները (վերջինը հրատարակել է Այաշի աքսորական նահատակ Տիգրան Զէօկիւրեանի հետ, վերահրատարակել, ապա՝ զինադադարից յետոյ):*

Ապրիլի 11/24-ի 1-ին մեծ կարաւանի կազմում էր: Եղբօրը՝ Լեւոնին, Այաշ էին աքսորել (նոյնպէս վերապրող): Իր Խաչի ճամփան պատկերել է «Զանղեզուրէն վերյիշումներ» եւ «Հայ մտքին հարկը եղէոնին», իրաւամբ, վաւերագիր-յուշագրերում: Զանղեզուրից Ուշագ է հասել երեք ընկերների հետ (Համրիչի թիւ 2, 8, 30-ի ազգանուանակիրները – Կ. Ա.) 1915-ի նոյեմբերի 18-ին, Կ. Պոլիս է վերադարձել 1918 թ. նոյեմբերի 17-ին՝ լծուելով Հայ Դատի Արդարամարտին: Ազգային քաղաքական մատենաշար խորագրի ներքոյ թարգմանաբար հրապարակել է 1. Անրի Բարբիւսի Սարսափի երկրին *մէջ, 2. դոկտ. Լեփսիուսի* Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, *3. դեսպան Մորկենթաուի* Պատմածները, *4. դեսպան Ճէրըրտի* Պատմուածները, *5. Ա. Մանտելստամի* Օսմանեան կայսրութեան ճակատագիրը:

Վերապրումի տարիների վկայութիւնն են իր Զգացողութիւնները՝ գրուած 1919-ին Կ. Պոլսում, Մտածումները՝ *Պէյրութում, 1926 թուակիր (վերջին ձեռագիրը)[96]:*

42. Զաւուշեան.– Երուանդ (1867, Պոլիս - 1916, Համամ), վերակազմեալ հնչակեան գործիչ, արտօնատէրը՝ 1908-ի հոկտ. 23-ից հրատարակուած Ձայն Հայրենեաց *քաղաքական, գրական շաբաթթերթի (որպէս օրգան վերակազմեալ հնչակեանների): Հեղինակն է* Զարխըճըլոք *մեքենագիտական գրքի (թուրքերէն):*

Ալպօյաճեանի նահատակաց կազմում է: Վախճանուել է Եփրատի եզերքին գտնուող Համամ կայեանում (Մեսքենէի եւ Տէր-Զօրի միջեւ) հիւանդութեամբ (Յուսիկ Քաջունի քահանայի հետ (Համրիչի թիւ 3-ը – Կ. Ա.) նոյն վրանում մէկ օրուայ տարբերութեամբ)[97]:

43. Թապագեան.– Միհրան (1878, Ատաբազար - 1915): Արմաշական է կրթութեամբ, դաշնակցական: Մինչ Կ. Պոլսից իր տարագրումը պաշտօնավարել է Դպրեվանուց, Օրթաքեոյի, Պալաթի եւ այլ վարժարաններում: Աշխատակցել է պոլսահայ թերթերին, հեղինակ է մի շարք երկերի (Հանդէս հայ եւ ընդհանուր գրականութեան, Գանձ ոսկեղէն դպրութեան, Ատանայի ծննդեան ծառը, Հայոց գրերու գիւտը (տրամախօսութիւն)[98]):

Ընդգրկուած է Արշ. Ալպօյաճեանի նահատակաց ցանկում[99] (Համրիչը միակ վկայութիւնն է Միհրան Թապագեանի Զանղեզուրի աքսորական լինելու վերաբերեալ – Կ. Ա.):

44. Տխրունի.– Արիս Իսրայէլեան (1885, Կիւմիշհանէ - 1918): Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի ընթացաւարտ, ուսուցիչ, բանաստեղծ: Գրչանունն է Իսրայէլ Տխրունի:

Ամերիկայում գիւղատնտեսութիւն ուսանելու շրջանում անդամագրուել է

---

96 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 89, 97 (I, II հրտ.). Միքայէլ Շամտանճեան, *Հայ մտքին հարկը եղեռնին*, մատենաշար «Նայիրի», թիւ 3, Հալէպ, 1947, էջ 86, 91. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Բ տարի, 1908, էջ 334. նոյնը, 1916-1920, էջ 62, 63, 115, 153, նոյնը, ԻԱ տարի, 1927, էջ 631-632

97 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Դ տարի, 1910, էջ 302. նոյնը, *Յուշարձան...*, էջ 48, 66 (I. II հրտ.). Արշ. Ալպօյաճեանի ֆ., նոյն տեղում, թերթ 1

98 Թէոդիկ, *նոյն տեղում*, էջ 29, 47 (I. II հրտ.)

99 Արշ. Ալպօյաճեանի ֆ., նոյն տեղում, թերթ 4

© National Library of Armenia

դաշնակցութեանը, աշխատակցել Հայրենիք թերթին (Պօսթըն): 1910-ին Կ. Պոլիս վերադառնալով՝ զբաղուել է կուսակցական քարոզչութեամբ, ուսուցչութեամբ [Աբրահամ Հայրիկեանի (Այաշի աքսորական - Կ. Ա.) հիմնած «Արդի» վարժարանում (Նշան-Թաշ) եւ այլուր], թարգմանութիւններով, աշխատակցել է «Ազատամարտ»-ին:

1915-ի ապրիլի 11/24-ի առաջին քարաւանի հետ հասել է Զանղեզուր:

Ըստ Գրիգորիս Պալաքեանի տեղեկատուութեան՝ «վախճանն՝ անծանօթ»:

Ըստ «Առնակ» ստորագրութեամբ յուշագրութեան՝ 1916-ի մարտի 11-ին հեղինակը հանդիպել է բանաստեղծին Կուտինայում (Քէոթահիա - Կ. Ա.), 20-25 հոգուց բաղկացած մի խմբում «Միջագետքի մահասփիւռ անապատները երթալու» հետիոտն ընթացքին: Ճողոպրելով, սակայն, յայտնուել է Գոնիայում, որի մասին վկայում է Երուանդ Օտեանն իր «Թիւ 17 Խաֆիէն» իրապատում երկում:

Ընդգրկուած է Արշ. Ալպօյաճեանի նահատակաց շարքում, Թէոդիկի Ցուշարձան...-ում: Մահուան տարեթիւը յիշատակուած է Յ. Ճ. Սիրունու ինքնակենսագրականի անուանացանկում[100]:

45. Աղապապեան.- Լեւոն? (1887, Բաղէշ - 1915, ?): Սանասարեանի ընթացարտ, թուագէտ: 1908-14 թթ. եղել է Քէոթահիայի եւ Ագշեհիրի ազգային վարժարանների տնօրէն: Քէոթահիայում երեք տարի ունեցել է նաեւ անհատական դպրոց: Կեանքի վերջին շրջանում Ազատամարտ-ում խմբագիր էր:

Այս ազգանունը չկայ Գ. Պալաքեանի անուանացանկերում: Համրիչը Լեւոն Աղապապեանի Զանղեզուրի աքսորական լինելու մասին վկայող միակ նախնական աղբիւրն է:

Ակնյայտ է, որ տարագրման էր ենթակայ Ազատամարտին առնչուող իւրաքանչիւր ոք: Հետեւաբար, ամենայն հաւանականութեամբ, համրիչին արձանագրուած այս ազգանուանակիրը, իրաւամբ, յիշատակուած կենսագրականի անձն է: Ընդգրկուած է Թէոդիկի Ցուշարձան...-ի նահատակաց կազմում:

Նոյն անուն-ազգանունն առկայ է նաեւ Արշ. Ալպօյաճեանի նահատակ մտաւորականութեան ցանկում[101]:

46. Բարսեղեան.- Արմէնակ, Ներսիսեան ճեմարանի ընթացաւարտ, Բեռլինում փիլիսոփայութիւն ուսանած եւ վկայուած (փիլիսոփայութեան տքթ.), բժիշկ, մանկավարժ, Կ. Պոլսոյ Ամերիկեան վարժարանի (տնօրինուհին՝ դր. Patric) հայոց լեզուի ուսուցիչ, Բերայի բնակիչ, դաշնակցական, վերապրող: Զանղեզուրից Էնկիւրիի սպանդ քշուածների առաջին քարաւանից էր, ճողոպրումի հանգամանքները դեռեւս անյայտ են:

Զինադադարից յետոյ հայութեան բեկորներին ի մի բերելուն, համերաշխ քաղաքական կազմակերպութիւն ստեղծելուն նպատակամղուած մի խումբ մտաւորականութեան շարքերում էր՝ ի թիւս Յակոբ Սիրունու, Հմայեակ Խոսրովեանի, Յովհան Վրդ. Կարապետեանի (համրիչի թիւ 2-ի անուանակիրը - Կ. Ա.) Վահրամ Թորգոմեանի (համրիչի թիւ 11-ը - Կ. Ա.), Յակոբ Թօփճեանի (համրիչի թիւ 34-ը - Կ. Ա.) եւ այլոց, որոնց ջանքերով ծնունդ առաւ

100 Յ. Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, ԳԱԹ, Սարգիս Խաչենց հրտ., Եր., 2006, «Անուանացանկ», էջ 333. Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 29, 47 (I, II հրտ.). Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 97 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 79. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 172. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, գիրք Գ., գլ. ԾԷ - *Աստիկի նահատակութիւնը*. ԳԱԹ հրտ., Եր., 2001, էջ 211-217. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թ. 1

101 Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 40, 58 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թ. 1

«Հայկական Լիկան»: 1921 թ. ապրիլին ներկայ եղել է Ռումինիայում (Պուքրէշ) կայացած դաշնակցութեան ընդհանուր ժողովին[102]:

47. Տօրեան.- Արմէն [(Հրաչեայ Սուրէնեան), 1892 յունուար, Իւսկիւպ - 1915, Էնկիւրի]: Ծննդավայրում յաճախել է յունական դպրոց (հայերի սակաւութեամբ պայմանաւորուած հայկական դպրոցի բացակայութեան պատճառով), յետոյ Մանասթիրի Ֆրանս. վարժարան: 1911-ին Կ. Պոլսոյ Մխիթարեան վարժարանի (Բանկալթի) շրջանաւարտ էր, ապա՝ Սորբոնի համալսարանի ուսանող: Աւարտելով համալսարանը՝ 1914-ին վերադարձել է Կ. Պոլիս, զբաղուել ուսուցչութեամբ, գրականութեամբ: Ինքն իրեն պանթէիստ էր համարում, ըստ իր պոէզիայի երկրպագու Գ. Կառվարենցի՝ խորհրդապաշտ էր:

Բանաստեղծութիւնների որոշ մասը տպագրուել է Շանթում:

«Գիշերանց ձերբակալուած, «Արդի» վարժարանէն»,- տեղեկանում ենք Թէոդիկի Ցուշարձան...-ից: Ըստ աքսորակից վերապրող Նշան Գալֆայեանի՝ (համրիչի թիւ 26-ը - Կ. Ա.) Զանղեզուրը է հասել տարագրեալների երկրորդ խմբի հետ (առաջինը համարելով այաշականներին): Էնկիւրիի սպանդ քշուած առաջին կարաւանում էր, ուր եւ նահատակուել է:

Ընդգրկուած է Արշակ Ալպօյաճեանի նահատակաց անուանացանկում[103]:

48. Եսայեան տաղարտը.- Գրիգոր? (1883, Վան - ?), դաշնակցական: Եէտիգուլէի որբանոցի եւ Կալաթա Սէրայի լիցէի ընթացաւարտ: Ազգային դպրոցներում աւանդել է ֆրանսերէն եւ մաթեմատիկայ: Կ. Պոլսահայ հանդէսներում բանաստեղծութիւններ է հրատարակել՝ Գրիգոր Նոր ծածկանուամբ: Ֆրանսերէն է թարգմանել Լեւոն Շանթի Հին աստուածները:

Հաւանաբար թիկնեղ էր, քանզի «տաղ արտը» թրքերէն թարգմանում է՝ լեռան թիկունք (ծնթ. յարգարժան պ. Միսաք Ճէվահիրճեանի): Այս անուն-ազգանունը ներկայացուած է Թէոդիկի Ցուշարձան...-ի նահատակաց կազմում[104]:

49. Գոչո Արթին.- Յարութիւն Բեքմեզեան, Օրթաքէոյի (օրթագիւղի) հացագործ: Նահատակուել է Թիւնէյում՝ 1915-ի օգոստոսի 13/26-ին 4 ընկերների հետ[105] (համրիչի թիւ 5, 40, 65, 66 աքսորականները - Կ. Ա.):

50. Երջանիկ.- Արամ «Երջանիկ» (1865-1915, Էնկիւրի): Գաւառացի ձեռնարէց, խոհարար, բնոյթով՝ ուրախ-զուարթ (այստեղից էլ, թերեւս, «Երջանիկ» անուանումը): Սեփականատէրն էր Պահճէ Գափուի համանուն ճաշարանի, ուր յաճախ

102 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 96 (I, II հրտ.). Վերժին Էքսերճեան, *Հանդիպումս Դանիէլ Վարուժանի հետ*, տե՛ս *Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը ժամանակակիցների յուշերում...*, էջ 334. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1925, էջ 87-88. Յ. Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 124, 161-162, 204, 206, 328. Հրաչ Տասնապետեան, *նշ. աշխ.*, էջ 169, 206. Փիթեր Բալաքեան, *Ճակատագրի սեւ շունը*, յուշագր., մասն հինգերորդ - *Արիւնոտ լուրեր*,– «Մեր նախնիների գերեզմանատունը», Եր., 2002, էջ 279-280:

103 Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 29, 47, (I, II հրտ.). նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 86-88. տե՛ս նոյնի՝ *Ցուշարձան...*, էջ 114, 132, (I, II հրտ.). Միքայէլ Ճամտանճեան, *Զանղեզուրէն վերյիշումներ*, ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1:

104 Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 28, 46 (I, II հրտ.)

105 Արամ Անտոնեան, *Վարուժանն աքսորեալ*, տե՛ս *Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը ժամանակակիցների յուշերում...*, էջ 258. Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 47, 65, (I, II հրտ.). Պերճ Զէյթունցեան, *Մեծ լռութիւն* (դրամայ՝ երկու մասից, վերջաբանով), մասն երկրորդ, պատկեր հինգերորդ,– «Գարուն», 1984, թիւ 5, էջ 79:

© National Library of Armenia

հաւաքւում էին հայ մտաւորականներն ու հանրայայտ գործիչները: Տարագրուել է հէնց այդ պատճառով, նահատակուել Զանգեզուրից Էնկիւրի քշուած առաջին քարաւանի բախտակիցների հետ[106]:

51. Զենոբ.– Մէրամէթճեան[107] (՞), կամ իր փոխարէն տարագրեալ: Այս անունը չկայ Գ. Պալաքեանի անուանացանկերում:

52. Խաչիկ.– Հաւանաբար այաշական նոյնանուն Պարտիզպանեանի, Իտարեճեանի կամ Պերպերեանի[108] փոխարէն Զանգեզուրը աքսորուած:

53. Հրանդ.– Աստուածատրեան (՞), Աղաճանեան (՞), կամ Այաշի աքսորական, արձակագիր Հրանդի (Մելքոն Կիւրճեան) անուանակիցը լինելով՝ աքսորուած հայ:

54. Երեւում.– Ծխախոտի մաքսանենգ (այինկաճի): Իր համարձակ կերպարով Վարուժանին այնքան գրաւած մէկը, որ բանաստեղծը մտորել է նրան քերթուած նուիրել: «Եւ իսկապէս կ'արժէր»,– նկատում է Արամ Անտոնեանն (Համբիչի թիւ 35 հատի ազգանուանակիրը – Կ. Ա.) իր յուշերում[109]:

55. Լեւոն-2.– Գ. Պալաքեանի Զանգեզուրի աքսորականների ցանկում են՝ Լեւոն Պարտիզպանեան եւ Գայրքճեան ազգանուանակիրները: Մինչդեռ չի յիշուած Համբիչի թիւ 45-ի Լեւոնը՝ Աղապապեան: Ասել է՝ Զանգեզուրում Լեւոն անունով 3-ն են եղել (3-րդը տե՛ս Համբիչի թիւ 45-ի տեղեկատուութեամբ):

Պարտիզպանեանը Գ. Պալաքեանի մօտ ներկայացուած է. «Դոկտ., հանր. գործիչ, վերապրող»: Այս անուն-ազգանունն ընդգրկուած է Թէոդիկի նահատակաց Ցուշարձան...-ում՝ «Ծն. Խարբերդ 1887-ին, վկայուած կայս. բժշկանոցէն: Օսմ. բանակին մէջ հարիւրապետի աստիճանի իր համազգեստով ձերբակալուած եւ աքսորուած՝ դաշնակցական տեղեկատուութեամբ: Ճշգրտման կարիք կայ:

Լեւոն Գայրքճեանը վաճառական էր՝ իր նոյն զբաղմունքի Միհրան եւ Գէորգ եղբայրների հետ նահատակուած Էնկիւրիում:

Համբիչի թիւ 90-ին փորագրուած է՝ Գայրգճեան, որ Միհրանն է՝ Զանգեզուրում, կամ Գէորգը: Ասել է՝ ի յայտ է գալիս մէկ աքսորական եւս[110]:

56. Ագրիկ.– Քէրէսթէճեան (1855, Գարթալ - 1915), գիւղի «չօրպաճի»-ն եւ «Մէճլիսը Իտարէ»-ի անդամ: Ատաղձավաճառ էր, անկուսակցական[111]:

57. Գանթարեան.– Համբիչն այս ազգանուանակրի վերաբերեալ, որպէս Զանգեզուրի աքսորականի, միակ աղբիւրն է:

58. Կոզմոս.– Մեսէայեան (՞) (1872-1936), բժիշկ[112] կամ, հաւանաբար, բժիշկի փոխարէն աքսորուած անուանակիցը:

59. Պէյլերեան.– կամ Պէյլէրօղլու Յակոբ, կեսարացի լումայափոխ[113]: Գ. Պալաքեանը տեղեկացնում է. «Վաճառական, հանր. գործիչ, վերապրող»[114]:

60. Թաշճեան.– Կարապետ (1871, Սեբաստիա - 1945, Կ. Պոլիս): Կ. Պոլիս է դաղթել 1888-ին: 1902-ին մսավաճառի իր խանութն ունէր: Զանգեզուրը է աքսորուել 1915-ի ապրիլի 11/24-ին, մտաւորականների առաջին խմբի հետ, ազատուել է երեք ամիս անց՝ կնոջ տասից աւելի թախանձագրերի հիմամբ, որոնցում շեշտւում էր ամուսնու «պարզ մսավաճառ» լինելու հանգամանքը[115]:

Գ. Պալաքեանի Այաշի աքսորականների ցանկում առկայ նոյնանուն-ազգանուանակիցը նահատակուել է Էնկիւրիում[116]:

61. Հանեսեան.– Կարնեցի վաճառական[117]:

62. Արամ.– Գրիգոր Օհնիկեանի (Համբիչի թիւ 86 հատի ազգանուանակիրը – Կ. Ա.) որդիներից մէկն է, թերեւս, տարրագէտ, վերապրող[118]:

63. Մելիք.– Աքսորուել է, հաւանաբար, յայտնի դաշնակցական գործիչ Մելիքի (Եուսուֆեան Յովհաննէս)[119] անուանակիցը լինելու զուգադիպութեամբ:

64. Տէօվլեթեան.– Կարապետ, փողերանոցի պաշտօնեայ, հանրային գործիչ, վերապրող[120]:

65. Քէչհեաեան արհեստաւոր.– Վահան (տէօքմեճի Վահան): (1872/1874, Ուրֆա - 1915, 08-13/26, Թիւնէյ): Յայտնի հնչակեան է, Սամաթիոյ հնչկ. մասնաճիւղի անդամ: Հ. Պօյաճեանի (Մուրատ) աքսորակից ընկերն էր Ցիզանում՝ (Աֆրիկեան Տրիպոլիս) Համիդի իշխանութեան օրօք: Կ. Պոլիս է վերադարձել սահմանադրութեան հռչակումից յետոյ (1908 թ.) եւ շարունակել իր ակտիւ գործունէութիւնը: Զօրակոչից յետոյ ճուլող էր Զէյթունում՝ Պրունիի գործարանում, ուր ուժանակ պատրաստելու ամբաստանութեամբ դատապարտուել է Պատերազմական ատեանի կողմից: Բանտից ազատուելուց յետոյ աքսորուել է Զանգեզուրը, որտեղ էլ Ռուբէն Սեւակի, Դանիէլ Վարուժանի, Օննիկ Մաղազաճեանի եւ Օրթաքէոյի հացավաճառ Արթինի հետ նահատակուել է Թիւնէյում[121] (Համբիչի թիւ 5, 40, 66 եւ 49-ի ազգանուանակիրները – Կ. Ա.):

66. Մաղազաճեան.– Օննիկ (1878, Կ. Պոլիս - 1915, օգոստոս 13/26 Թիւնէյ): Պալը Ալի ճատտէսի, Հայրենիք (Վաթան) կազմատան տէրն էր: Հրատարակել է Ասիական եւ Եւրոպական Թուրքիոյ մեծածաւալ քարտէզները, նաեւ գրպանի մի ատլաս՝ Ա. Պիպէռճեանի աշխատակցութեամբ: Գումգաբուի «Յառաջադիմասէր ընկերութեան» ատենապետն էր միաժամանակ Համբիչի թիւ 86 հատի ազգանուանակիրը:

---

106 **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 44, 62, (I, II հրտ.). նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 88

107 Arsen Yarman, *նշ. աշխ.*, էջ 514, 616

108 **Գ. Պալաքեան**, *նշ. աշխ.*, էջ 87, 88, 89 (I հրտ), 88, 89, 90 (II հրտ.)

109 **Արամ Անտոնեան**, *Վարուժանն աքսորեալ.* տե՛ս *Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը...*, էջ 256. **Պերճ Զէյթունցեան**, *Մեծ լռութիւն*, պատկեր երրորդ. *նոյն տեղում*, էջ 73, 75 (դրամայում առկայ է ժամանակագրական փոքր անճշտութիւն, որ գեղարուեստական շեղում է ենթադրւում):

110 **Գ. Պալաքեան**, *նշ. աշխ.*, էջ 97, 99, (I, II հրտ.), **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 38, 56, (I, II հրտ.)

111 **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 45, 63 (I, II հրտ.)

112 **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 405

113 Խորին երախտագիտութիւնս յարգարժան պարոն Կարո Աբրահամեանին, Գէորգ Բամպուքճեանի 2003-ին Ստամբուլում հրատարակուած թրքալեզու «Հայեր իրենց կենսագրութիւններով» հատորից մեզ հաղորդած սոյն տեղեկատուութեան համար:

114 **Գ. Պալաքեան**, *նշ. աշխ.*, էջ 98 (I, II հրտ.)

115 **Կ. Աւագեան**, *Թանգարանային մէկ ցուցանմոյշ՝ մէկ փաստաւաւերագիրք եւ...*,– «Բազմավէպ», 1-4, 2006, էջ 143

116 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 89, 90 (I, II հրտ.)

117 **Ց. Սիրունի**, *նշ. աշխ.*, էջ 123, 335

118 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 99, 98 (I, II հրտ.)

119 **Հրաչ Տասնապետեան**, *նշ. աշխ.*, էջ 24, 40, 47, 227...

120 **Գ. Պալաքեան**, *նոյն տեղում*, էջ 99 (I, II հրտ.)

121 **Թէոդիկ**, *Յուշարձան...*, էջ 47, 65 (I, II հրտ.). *Ա. Անտոնեան*, *Վարուժանն աքսորեալ*, տե՛ս *Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը...*, էջ 258,– «Կոռնակ», 1912, փետրուար 29/13 թիւ 8 (83): Խորին շնորհակալութիւնս յարգարժան պարոն Միհրան Մինասեանին, որ նամակին կից ծրարում ներդրել էր նաեւ սոյն համարի քսերոպատճէն:

Պերճ Զէյթունցեան, *նոյն տեղում.* **Կ. Աւագեան**, *Թանգարանային ցուցանմոյշն անխօս՝ ամենախօս վկայ. պրպտումը շարունակւում է...*, Մեծ եղեռն - 90, Հանրապետական գիտական նստաշրջանի նիւթեր,– «Դպիր» հրտ., Գիւմրի 2005, էջ 131

© National Library of Armenia

մանակ եւ հաւանաբար այդ պատճառով էլ աքսորուել է[122]:

67. Պասմաճեան.– Մանուկ, ճարտարապետ, մտաւորական, հանրային գործիչ, վերապրող[123]:

68. Մելքոնեան.– Սիմոն, Օթագիւղից, ճարտարապետ, վերապրող: Այս անուն-ազգանունը հանդիպում է յետպատերազմեան շրջանում, Ստամբուլի Ս. Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձուների, ղեկավարութեան օժանդակ կազմում, առկայ է եւ Նիւ-Եօրք Լայֆ ապահովագրական ընկերութեան ապահովագրական վկայագրում՝ «Մելքոնեան Սիմոն, Ստամբուլ (Կ. Պոլիս)» տեղեկատուութեամբ[124]:

69. Զպճը ճարտարապետ.– Բ. Քեչեանի (Համրիչի թիւ 33 հատի ազգանուանակիրը – Կ. Ա.) յուշագրում անուղղակի յիշատակւում է. «Հայ-կաթոլիկ ճարտարապետ մը, Սպարապետութեան ծառայող»: Գ. Պալաքեանի անուանացանկում մասնագիտութիւնը յիշատակուած ճարտարապետներից ոչ մէկի մասին նման տեղեկատուութիւն չկայ: Ենթադրում ենք, ուրեմն, որ տարբերիչ իրողութիւններն իրաւամբ վերաբերում են Համրիչի «Զպճը» յապաւեալ ազգանուանակրին[125]:

70. Արսլանեան[126].– առեւտրական (?), եթէ այո, ապա, թերեւս,՝ Կ. Պոլսոյ «Առեւտրական տուն. Արսլանեանց եղբարք եւ ընկ.»-ի (հասցէն՝ «Կեդրոնատեղի: Մարիթիմ խան թիւ 2, Ղալաթիոյ Քարափի մասնաճիւղ: Պահչէ Գափու 22 Կ. Պոլիս») տէրերից մէկն է[127]:

71. Վարդերես մուխթար.– Աթանասեան (1874-1916), Բերա, Ֆէրիքէոյի «Մըխթար»-ը, վերակազմեալ հնչակեան, առեւտրական, նահատակ»[128] (Համրիչը փորագրող աքսորականն է – Կ. Ա.):

72. Ֆէրուխան.– Բարունակ (1884, Կ. Պոլիս - 1915): Արտ. գործ. (Ելեւմտ.) նախարարութեան Մագրիքէոյի մասնաճիւղի պաշտօնեայ, ջութակահար: Նահատակ[129]: Նշան Գալֆայեանի (Համրիչի թիւ 26 հատի ազգանուանակիրը – Կ. Ա.) յուշագրութեան էջերում հանդիպել ենք ջութակին տիրապետող «Սկիւտարցի Ճէրրահ Գէորգի տղան»[130] տեղեկութեանը: Հաւանաբար, նոյն ինքը Բարունակն է. եթէ ոչ, ապա Զանղերրի աքսորականների մէջ ենթադրելի է եւս մի ջութակահար: (Պրպտման կարիք կայ):

73. Սարաֆեան.– Այս ազգանունը չկայ Գ. Պալաքեանի Զանղերրի աքսորելոց ցանկում, մինչդեռ Այաշի աքսորականների մէջ է Կարապետ Սարաֆեանը՝ «Ռեժիի պաշտօնեայ, նահատակուած Էնկիւրի» տեղեկատուութեամբ[131]: Ենթադրելի է, որ ինչպէս, օրինակ, Կարապետ Թաշճեանի (տե՛ս Համրիչի թիւ 60-ը – Կ. Ա.) պարագայում էր, Զանղերրը է աքսորուել այաշական նահատակի նոյնանուն ազգանուանակիցը (կամ միայն ազգանուանակիցը, ում հետագայ ճակատագիրը դեռ յայտի չէ):

74. Ալթունեան.– Վահրամ, առեւտրական, նահատակ[132]:

75. Ճամպազ.– Աբիկ, հայ հռոմէական (կաթոլիկ – Կ. Ա.) Բերայից, առեւտրական, նահատակ[133]:

76. Հրաչ.– Հայկ Թիրէաքեան (1871, Տրապիզոն - 1915, Էնկիւրի): Դաշնակցական յայտնի գործիչ, Ազգ. երեսփոխան: 1896 թ. օգոստոսի 13/26-ին Օսմանեան դրամատան (Բանկ Օտորման) գրաւման կազմակերպիչներից էր, որի անյաջող ելքից յետոյ իր ընկերներով անցել է Մարսել: Ապա գաղտնի տեղափոխուել է Իզմիր, ուր եւ ձերբակալուել է 1902-ին՝ դատապարտուելով ցկեանս բանտարկութեան (Պոտուրում): Ազատուել է 1908-ին՝ Սահմանադրութեան հռչակումից յետոյ, անցել է Կ. Պոլիս եւ ստանձնել Ազատամարտի տպագրիչի աշխատանքը: Միաժամանակ Պատերազմական նախարարութեան կերպասեղէնի հայթայթիչն էր:

1915-ի ապրիլեան աղէտին աքսորուել է Զանղերրը, որտեղ, տեղեկանալով իր անուն-ազգանուանակիր հիւանդ նպարաւաճառի Այաշ աքսորուած լինելու մասին, վեհանձնաբար ստոյգ մահն է գերադասել՝ փրկելով ծերունուն: Այաշ է տեղափոխուել կառավարութեանը յղած իր իսկ դիմումով, որում յայտնել է, որ բուն փնտրուած անձն ինքն է[134]:

77. Մոմճեան.– Ռուս. հիւպատոսարանի թարգմանիչ՝ նահատակուած Էնկիւրիի մօտ[135]:

78. Գալէնտէր.– Արամ Գալէնտէրեան, օսմ. դրամատան պաշտօնեայ եւ եռանդուն հանրային գործիչ, վերապրող[136]:

79. Վաղինակ.– Պարտիզպանեան, Շիրքէթի Խայրիէյի պաշտօնեայ, հանրային գործիչ, վերապրող[137]:

80. Գալֆայեան պաշտօնեայ.– Հիւրութիւն (1870, Թալաս - 1915): Յայտնի դաշնակցական: 1896-ին մեկնել է Բուլղարիա, սակայն այլ յեղափոխական գործիչների հետ կառավարութիւնը նրան եւս վտարել է երկրից: Երկար տարիներ ապրել է Եգիպտոսում, Ժնեւում: Թուրքիա է անցել Սահմանադրութեան հռչակումից յետոյ,

---

122 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 99, 147/140, 150/143 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 44, 62 (I , II հրտ). Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Ա. Անտոնեան, *Վարուժանն աքսորեալ*, նոյն տեղում. Պերճ Զէյթունցեան, *Մեծ յոութիւն*, պատկեր հինգերորդ, նոյն տեղում, էջ 79:

123 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.)

124 *Նոյն տեղում*. **Arsen Yarman**, *նշ. աշխ.*, էջ 590, 611, 612, ՀՀ Արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանի ուղերձը հայրենակիցներին, NEW-YORK LIFE INSURANCE COMPANY, 2376 N1458:

125 Բիւզանդ Քէչեան, *Դրուագ աքսորի շրջանէն*, տե՛ս Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԶ տարի, 1922, էջ 38:

126 Ուսումնասիրութեան ընթացքում արեւմտահայ, նաեւ պոլսահայ իրականութեան մէջ Արսլանեան ազգանունը հանդիպել ենք ե՛ւ հոգեւոր կեանքում, ե՛ւ առողջապահութեան ասպարէզում, ե՛ւ առեւտրի բնագաւառում: Սակայն հաւանական համարեցինք վերջին բնագաւառը՝ նկատի առնելով ուշագրաւ մի հանգամանք: Համրիչին փորագրուած ազգանունները հնարաւորինս ամփոփուած են մասնագիտական հերթականութեամբ՝ հոգեւորով սկսում եւ աւարտւում է անուանացանկը: Առեւտրին առնչուող դասի ազգանունները հիմնականում վերջին շարքերում են - Կ. Ա.:

127 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԷ տարի, 1921, էջ 397

128 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 44, 62 (I, II հրտ.). Մ. Գուշակճեան, *Ապրիլեան եղեռնի պատճառած Հայ հասարակական մտքի կորուստը*,– «Կանչ» շաբաթօրեակ, Պէյրութ-Լիբանան, թիւ 227 (5006), 21 յունիս, 1975, էջ 4

129 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 44, 62 (I, II հրտ.)

130 Նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 87

131 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 89, 90 (I, II հրտ.)

132 Մ. Գուշակճեան, *նոյն տեղում*

133 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 44, 62 (I, II հրտ.)

134 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 87, 88/109, 108 (I, II հրտ.). Աւետիս Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 32-33. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 35, 53 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 166. Հր. Տասնապետեան, *նոյն տեղում*, էջ 24, 41, 47, 67, 223...,– «Հայկական հարց հանրագիտարան», Եր., 1996, էջ 77, 287, ՀՀՀ, հտ., 3, Եր., 1999, էջ 430. «Յուշամատեան ՀՅԴ, ալբոմ-ատլաս, հտ. Ա, դիւցազնամարտ.- 1890-1914», Լոս Անճելըս, Քալիֆորնիա, 1992, էջ 47

135 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 99 (I, II հրտ.): Այս աքսորականի ազգանուանակից, փարիզաբնակ բժիշկ Մոմճեանի վերաբերեալ յարգարժան Արփի Թոթոյեանին յղած հարցումիս ի արձագանգ՝ ստացայ պատասխան նամակը բարեհաճ տիկին Գոհար Աճեմեանի միջոցով: Պարզուեց, որ բժիշկ Մոմճեանը ազգակցական առնչութիւն չունի Զանղերրի աքսորականի հետ: Ասել է՝ հարկ է պրպտումը շարունակել:

136 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

137 *Նոյն տեղում*

© National Library of Armenia

տոյ: Իզմիրում որոշ ժամանակ զբաղուել է հասարակական գործունէութեամբ, ապա վերադարձել Կ. Պոլիս՝ կարգուելով քաղաքապետական քննիչ, ի վերջոյ, Մագրիքէոյի թաղապետութեան նախագահ (Պէյէտիէ Ռէյիսի) մինչ տարագրուելը[138]: Զանղերրի աքսորական լինելու մասին հաւաստում է հօրեղբօր որդին՝ վերապրող Նշան Գալֆայեանը (համրիչի թիւ 26-ը - Կ. Ա.), իր յուշագրութեան էջերում[139]:

81. Պէյլերեան.- Համրիչին արձանագրուած երկու նոյն ազգանուանակիրներից մէկն է (համրիչի թիւ 59, 81 - Կ. Ա.) Թէոդիկի դիմումով Զանղերրից ազատուածների շարքում՝ «Պէյլէրեան որդին»[140]: Հայրը՝ Յակոբն, ընդգրկուած է Գրիգորիս Պալաքեանի չանղերրականների անուանացանկում [(նոյնպէս վերապրող), (տե՛ս ծնթ. 121)]:

82. Պարոյր.- Արզումանեան, վերապրող[141]: Այլաշական նահատակ, նոյնանուն-ազգանուանակցի[142] փոխարէն Զանղերը աքսորուած, ինչպէս համրիչի թիւ 60-ի՝ մսավաճառ Կարապետ Թաշճեանի պարագայում է:

83. Նոյիկ յանձնակատար.- Տէր-Ստեփանեան: Երզնկացի է, Մուրատ-Ռափայէլեանի ընթացաւարտ, վաճառական, սեղանաւոր (դրամափոխ): Աքսորուել է կուսակցականների համար զէնք հայթայթելու մեղադրանքով: Դիմումով աքսորա-

138 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 34, 52 (I, II հրտ.)

139 Նոյնը,- «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 87

140 Թէոդիկ,- «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115

141 Կ. Աւագեան, *Թանգարանային մէկ ցուցանմոյշ՝ մէկ փաստավաւերագիրք եւ...*,- «Բազմավէպ», 2006, էջ 143, 148

142 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 46, 64 (I, II հրտ.). Կ. Աւագեան, *նոյն տեղում*, էջ 148

դարձ վերապրող է մի գերդաստանի, որից 40 հոգի նահատակուել է[143]:

84. Թաթարեան.- Առեւտրական, վերապրող: Յայտնի են Ստ. անուանատառերը, ամենայն հաւանականութեամբ՝ Ստեփան: Զինադադարից յետոյ Կ. Պոլիս է վերադարձել՝ Զանղերը-Կեսարիա-Հալէպ ճանապարհն անցնելով, ականատես Կեսարիոյ կախաղաններին[144]:

85. Քէոլէեան.- Մի սկզբնաղբիւրում Յովհ.[145] (աննէս - Կ. Ա.) է արձանագրուած, միւս երկուսում՝ Գէորգ[146], համրիչի թիւ 86-ի՝ Օհնիկեանների գործակիցը: Նահատակուել է Էնկիւրիի մօտ:

86. Օհնիկեանք-4.- Հայրը՝ երեք որդիներով:

Հայրը՝ Գրիգոր, 75-ամեայ, «Բերայի ծանօթ լրագրավաճառ...»՝ ըստ Բիւզանդ Քէչեանի[147] (համրիչի թիւ 33-ը - Կ. Ա.): Ըստ Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի (համրիչի թիւ 99-ը - Կ. Ա.) տեղեկութեան՝ «Կալաթա-Սէրայի դէմի ծանօթ ծխավաճառը»[148], Զանղերրում հիւանդութեամբ վախճանուած: Թէոդիկի 1919-ի Յուշարձան...-ում տեղեկատուութիւնը համանման է. «Ծխավաճառ Բերա, Կալաթա, Սէրայ»[149]: Այստեղ որդիներից երկուսն են

143 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.). Թէոդիկ, *Գաղափարասփիւռ իտալահայը*,- «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 158

144 Թէոդիկ, *Զինադադարէն վերջ դարձողներ*,- «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115

145 Նոյնը, *Յուշարձան...*, էջ 49, 67 (I, II հրտ.)

146 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 99/98 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1

147 Բ. Քէչեան, *Դրուագ աքսորի շրջանէն*. տե՛ս Թէոդիկ,- «Ամէնուն տարեցոյցը», ԺԶ տարի, 1922, էջ 39:

148 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 188, 178 (I, II հրտ.)

149 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 48, 66 (I, II հրտ.)

յիշատակուած՝ Արամ, Գարեգին: Ընդգրկուած է Արշ. Ալպօյաճեանի նահատակաց անուանացանկում Մկրտիչ եւ Յովհաննէս որդիների հետ[150]:

Ըստ Գ. Պալաքեանի՝ որդիներն են.

ա. Արամ - տարրագէտ վերապրող[151] (հաւանաբար համրիչի թիւ 62-ի անուանակիրն է):

բ. Մկրտիչ - նահատակուած Տէր-Զօրում[152]:

գ. Յովհաննէս - վախճանուած Պէյէմետիկի մերձակայքում՝ Հաճգերի[153]:

87. Թէրլէմէզ սեղանաւոր.- Օհաննէս Թէրլէմէզեան: Վանեցի դրամափոխ (սեղանաւոր), վերապրող: Աքսորից վերջին ազատուողներից է: 1915 թ. օգոստոսի 6-ին մեկնել է Զանղերրից: Էնկիւրիում (Անկարա) բանտարկուել է օգոստոսի 8-ին, 17-ին դուրս է բերուել, բարեպատեհ հանգամանքներում փրկուելով սպանդից՝ քշուել է Տարսոն: Կ. Պոլիս է հասել այնտեղից 1915-ի սեպտեմբերի 22-ին[154]:

88. Տէր-Գէորգեան.- Ներսէս, վաճառական: Ազգակից մրցորդ առեւտրականի մատնութեան զոհ[155]:

89. Պասմաճեան.- Մկրտիչ, զինավաճառ: Ձերբակալուել է ապրիլի 11/24-ին, աքսորուել Զանղերը առաջին քարաւանի

150 ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1, 4

151 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 99, 98 (I, II հրտ.)

152 *Նոյն տեղում*. Արշ. Ալպօյաճեանի ֆ., թերթ 4

153 *Նոյն տեղում*. Արշ. Ալպօյաճեանի ֆ., թերթ 4

154 Օհաննէս Թէրլէմէզեան, *Կ. Պոլիս. Մտաւորականներու ձերբակալութիւնը եւ աքսորը*, տե՛ս *1915. Աղէտ եւ վերածնունդ*, հեղինակներ՝ Աղէտէն վերապրողներ, տպագր. Փարիզ 1952, էջ 239-242. Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.):

155 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 44, 62 (I, II հրտ.). Նոյնը,- «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1925, էջ 88

հետ[156], որտեղից մի քանի ամիս անց աքսորակից այլ ընկերների հետ ուղարկուել է Իզմիթ՝ հարցաքննութեան: Այստեղ չեթեպաշի (հրոսակապետ) Իպրահամի կողմից «անլուր խոշտանգումների ենթարկուելէ ետքը» Իզմիթի տեղահանութեան ընթացքում տեղի հայութեան հետ տարագրուելիս ճանապարհին յաջողել է ծուարել Գոնիայում: Արթին՝ Հարուն ճիւաղ լրտեսը, զուգադիպութեամբ Գոնիայում լինելով, հանդիպել ճանաչել է նրան, եւ մատնութեան արդիւնքում Մ. Պասմաճեանը ձերբակալուել է, աքսորուել Տէր-Զօր: Ճանապարհին դարձեալ յաջողուել է փախչել եւ հետագայում վերադարձել է Կ. Պոլիս[157]: Ենթադրում ենք՝ Գ. Պալաքեանի Հայ Գողգոթայի Զանղերրի աքսորելոց ցանկի թիւ 51-ն է, եւ ազգանունը՝ Պարսամեան, չփոթութեան արդիւնք է, թերեւս: Այդ է յուշում տեղեկատուութեան համապատասխանութիւնը. «Մկրտիչ Պարսամեան - զինավաճառ, հանր. գործիչ, վերապրող»[158]: Ճշգրտման կարիք կայ:

90. Գայրգճեան.- Աքսորուել են Միհրան, Լեւոն, Գէորգ վաճառական երեք եղբայրները, երեքն էլ նահատակուել են Էնկիւրիում: Համրիչին արձանագրուած է ազգանունը՝ եզակիով: Եթէ նկատի առնենք համրիչի թիւ 55-ին առկայ «Լեւոն-2» փորագրութիւնը եւ աքսորական երկու Լեւոններից մէկին ընդունենք Գայրգճեան, ապա թիւ 90-ին փորագրուած Գայրգճեանը Միհրանն է կամ Գեւորգը[159]: Բոլոր դէպքերում, ի յայտ է գալիս համրիչից դուրս մէկ աքսորական՝ Միհրանը, կամ Գէորգը:

156 Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*, III - *Խաչին ճամփան*,- «Էջմիածին», 1968 - Է, էջ 7

157 Եր. Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, Բ գիրք, գլ. ԼԹ - *Ցանցին մէջ*, ԳԱԹ հրտ., Եր., 2001, էջ 227

158 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 98 (I, II հրտ.)

159 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 99 (I, II հրտ.)

© National Library of Armenia

91. Ինճիճեան.– Գառնիկ, վաճառական, հանրային գործիչ, դիմումով աքսորադարձ վերապրող[160]:

92. Գարակէօզեան.– Թագուոր (?), Միհրան (?), առեւտրական (?):

93. Մանեասեան.– Աստուածատուր, վաճառական, վերապրող[161]:

94. Ղոնչէկիւլ.– Ղոնչէկիւլեան, Խոնճէկիւլեան[162], ակնցի վաճառական, մեռած Մէսքէնէի կողմերում:

95. Փարիսեան.– Արտաշէս, վաճառական, վերապրող[163]:

96. Յ. Գորեան վճռկն.– Յակոբ (1845-?), ակնցի վաճառական, ում հայրենասիրութիւնը շեշտուած է Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի կողմից: Զբաղուել է նաեւ ուսուցչութեամբ: Աքսորից ազատուել է 1915 թ. օգոստոսի 6-ին, ընկերների՝ Վահան Ալթունեանի (համրիչի թիւ 15-ը – Կ. Ա.), Յովհ. Թէրլէմէզեանի (համրիչի թիւ 87-ը – Կ. Ա.) հետ եւ, անցնելով տառապանքի միեւնոյն ճանապարհը, Էնկիւրիից քշուել մինչեւ Թարսուս: Այստեղից, ի. վերջոյ, նոր դիմումների արդիւնքում երեքն էլ ազատուել են եւ Կ. Պոլիս հասել սեպտեմբերի 22-ին[164]:

97. Քերոբեան պատուելի.– Ապրիլի 11/24-ի աքսորելոց առաջին քարաւանում էր, աքսորից ազատուածների առաջին խմբում[165]:

98. Թումաճան.– Սամուէլ Թոմաճանեան[166], Թոմաճեան[167], Թումաճեան[168], հնչակեան գործիչ, նահատակ: Ըստ Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի՝ «վախճանն անծանօթ», մինչդեռ Արշ. Ալպօյաճեանի նահատակաց անուանացանկում է:

99. Պալագեան ծ. վրդ.– Գրիգորիս (1873/1875, 1979, Եւդոկիա (Թոքաթ) - 1934, նոյեմբեր, Մարսել): Բանասէր, պատմաբան, աստուածաբան, ծայրագոյն վարդապետ, ապա եպիսկոպոս[169]: Նախն. կրթութիւնը ստացել է ծննդավայրի, ապա Կարնոյ Սանասարեան վարժարաններում: Արմաշի դպրեվանքի ուսումնառութեան աւարտաճառն էր՝ Գործնական աստուածաբանութիւն, եւ այս ասպարէզում խորանալու

---

160 *Նոյն տեղում*, էջ 98. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115

161 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

162 *Նոյն տեղում*, էջ 99 (I, II հրտ.)

163 *Նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.)

164 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 98 (I, II հրտ.). Օհանէս Թէրլէմէզեան, *նոյն տեղում*. Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*, V - *Քրիստոս պատարագեալ*,– «Էջմիածին», 1968, Ը-Թ, էջ 102

165 Ա. Նագգաշեան, *նշ. յուշագր.*, էջ 6. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», ԺԶ տարի, 1922, էջ 35, 40. Ց. Սիրունի, *նոյն տեղում*, գլ. IV - *Զանղրրը*, էջ 100. նոյնը, VI - *Դարձ Խաչին ճամփէն*,– «Էջմիածին», 1968, Ժ, էջ 53

166 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 97 (I, II հրտ.)

167 ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4

168 Եր. Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, Գ գիրք, «Անուանացանկ», էջ 287, ԳԱԹ, նոյն տեղում

169 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 77/79, 96, 192/181, 416-418/388-390 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 114, 255-256. նոյնը, *Անհի մէջ գիշեր մը*. տե՛ս Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Զ տարի, էջ 156-165. նոյնը, *Ցեղին յարութիւնը*. Թէոդիկ, ԺԷ տարի, էջ 385-387 (էջ 387-ին նաեւ Թէոդիկի ծանուցումը). Վաղինակ Բիւրատ, *Իմ կեանքի յուշերից*, ԳԱԹ, Եր., 1999, էջ 60. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 560, *Սողոմոն Թեհլիրեանի դատավարութիւնը* (սղագրութիւն), (Ցեղասպանութեան մատենաշար), Եր.,– «Արեւագուն», 1990, էջ 111-120,– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 375. Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան*, հտ. Գ, գիրք 1, Եր., 1990, էջ 226 (այս անուն-ազգանունն առկայ է եւ Զանղրրի եւ Այաշի վերապրող աքսորականներից գրեթէ բոլորի յուշերում – Կ. Ա.). ՀՀՀ, հտ. 4, Եր., 2003, էջ 143. Փիթեր Բալաքեան, *Ճակատագրի սեւ շունը*, յուշագր., Նիւ Եօրք Թայմզի նշանակալից գիրք,– «Տոհմածառ» - սկզբնաէջ, (անթուակիր), մասն հինգերորդ - *Արիւնոտ լուրեր*. «Մեր նախնիների գերեզմանատունը», «Ընթերցելով կմախքը», Եր., 2002, էջ 274-275, 278-279, 285, 298-309:

նպատակով էլ մեկնել է Գերմանիա՝ Բեռլինի համալսարանում ուսումնասիրելով ե՛ւ աստուածաբանութիւն, ե՛ւ փիլիսոփայութիւն: 1914-ի սեպտեմբերի կէսերին վերադարձել է Կ. Պոլիս, կանխազգացումով, ասես, հրաժարուել Երզնկայի Առաջնորդական տեղապահութեան ստանձնումից (պատրիարքարանի կողմից այս պաշտօնին կոչուած Պրուսայի առաջնորդ Տ. Սահակ ծ. վրդ. Օտապաշեանը, պաշտօնավայր չհասած, իթթիհատականների նենգադաւութեան զոհ է դարձել), սակայն չի կարողացել խուսափել համազգային եղերականից: Կառավարութեան ուշադրութիւնը գրաւել էր Իզմիրլեանի օրօք՝ անդամակցելով նրա «Հիւսիսային» ուղեւորութեան շքախմբին: Բալկանեան պատերազմի ընթացքին, երբ արծարծւում էր հայկական հարցը, Պալաքեանը պատրիարքարանում նշանակուել է «Ապահովութեան յանձնաժողովի» ընդհ. քարտուղար: Սոյն նկատառումներով, բնականաբար, յայտնուել է տարագրեալների «սեւ ցուցակում» եւ 1915-ի ապրիլի 11/24-ի չարաշուք այդ շաբաթ գիշերը կեդրոնական բանտ է բերուել Սկիւտարից ութ այլ ընկերների հետ (ցաւօք չի յիշատակում անունները – Կ. Ա.): Աքսորուել է Զանղրրը, ինչպէս յայտնի է իր յուշագրքից, եւ, ինչպէս տեսնում ենք, համրիչի հատիկաշարը եզրափակող 99-րդ հատի փորագիր ազգանուանակիրն է: Եղել է Ազգային կեդրոնական վարչութեան կրօնական ժողովի անդամ:

1916 թ. փետրուարի 13-ին Կ. Պոլսոյ աքսորականներից 16-ն էին մնացել Զանղրրրում եւ տեղի հայութեան հետ պարտաւոր էին տարագրուել Տէր-Զօր: Ահա այս ճանապարհին է, որ ապրիլի 2-ին վարդապետին յաջողուել է փախուստը Իսլահիէից Այրան Յովհաննէս անունով յիսնամեայ մի համարձակ վանեցու աջակցութեամբ (ծխախոտի մաքսանենգ էր): Այրան-Բաղչէ փախչելով՝ նա հասել է Ամասնոսի լեռնաշղթայ, որտեղ գերմանացիները գետնուղի էին կառուցում: Բաւականին բարեացակամ են վերաբերուել իրեն, եւ 4 ամիս կերպարանափոխ մնացել է այստեղ՝ Մորֆ եւ Կլաուս ճարտարագէտների հովանաւորութեամբ: Ապա հանգամանքները ստիպել են փախչել Տաւրոսի լեռներ, ուր դարձեալ գերմանացի ճարտարագէտները թունել էին բացում: Այստեղ էլ գտել է զուիցերացի երկրաչափ Լոյթենեկերի աջակցութիւնը՝ գերմանական հիւանդանոցի բժշկապետ Բ. Պոյաճեանի բարեխօսութեամբ: Եւ սակայն, երբ թուրք պաշտօնեաներն իմացել են իր հայ լինելու մասին, չնայած հեռ. Կիւստաւ Բերնշտայն անուանափոխութեանը, նորից ստիպուած փախել է Ադանա: Հինգ ամիս էլ այստեղ է մնացել գերմանացի գլխ. ճարտարագէտ Վինկլերի հովանաւորութեամբ, ապա գերմանացի զինուորի համազգեստով գերմանացի ենթասպաների ու զինուորների հետ երկաթուղով հասել է Կ. Պոլիս: 1918-ի նոյեմբերին թողնելով Կ. Պոլիսը՝ անցել է Փարիզ, ապա Մանչեստր, որտեղից էլ 1921-ին կանչուել է Բեռլին՝ Սողոմոն Թեհլիրեանի դատավարութեանը՝ որպէս վկայ: Կեանքի վերջին տարիներին հարաւային Ֆրանսիայի հայոց հոգեւոր առաջնորդն էր Մարսելում, որտեղ եւ թաղուած է Սեն Պիեռ գերեզմանատան դամբանական մատուռում:

Համրիչի անուանացանկի համադրումը Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի Զանղրրի աքսորականների անուանացանկին պարզեց, որ համընկնում են 62-ը. միւսների արհաւրալից ճակատագրի վկայութիւնը, որպէս Զանղրրի աքսորեալներ, մնում է համրիչը: Նրանք էին համրիչի թիւ 7, 17, 18, 23, 37, 43, 45, 47-54, 56-58, 60, 61, 63, 65, 69-75, 80-82, 84, 88, 89, 92, 97 հատերին արձանագրուած անուն-ազգանուանակիրները: Պալաքեանի համապատասխան ցանկում չկան նաեւ Ջլախտաբոյժ Պողոսեանը (համրիչի թիւ 12-ը – Կ. Ա.), Ղազարոսը (համրիչի թիւ 24-ը – Կ.

© National Library of Armenia

Ա.), Հրանդը (համրիչի թիւ 53-ը - Կ. Ա.), Հրաչը (համրիչի թիւ 76-ը - Կ. Ա.), որոնք իր Այաշի անուանացանկում են ընդգրկուած, չնայած ինչ-ինչ առնչութիւն ունեն Զանղեզուրի հետ: Այսուհանդերձ, Հայ Գողգոթայի, ինչպէս չանղեզուրական անունների ցանկում, այնպէս էլ շարադրանքում կան անուններ, որոնք բացակայում են համրիչին՝ այսպիսով բացայայտելով աքսորուած մնացածներից ոմանց համընդհանուրից:

Ներկայացնենք նաեւ նրանց՝ այլեւայլ աղբիւրներից քաղուած տեղեկատուութեան յաւելումով:

1. (104[170]) Պատուելի Գրիգորեան[171].- Յովհաննէս, (1855, Այնթապ - 1942): Սկզբնական-կրթութիւնը ստացել է ծննդավայրի «Աստուածատուր» դպրոցում: 1870-ին աւարտել է Մարաշի ճեմարանը, որպէս ուսուցիչ՝ աշխատել Այնթապի ամերիկեան քոլեջում: 1880-ին մեկնել է ԱՄՆ, աստուածաբանական բարձրագոյն կրթութիւն է ստացել Էյլի համալսարանում, որտեղ եւ արժանացել է աստուածաբանութեան դոկտորի գիտական աստիճանի: Վերադառնալով Այնթապ՝ շարունակել է ուսուցչական գործունէութիւնը: 1902-ին Կ. Պոլսի Աւետարեր (Հրատարակութիւնը՝ 1855-ի յունուարի 3-ից) կրօնական, ուսումնական, ընտանեկան եւ քաղաքական շաբաթաթերթի խմբագիրներից մէկը: 1910-1915-ին հրատարակել է Ռահնիւմա հայատառ թուրքերէն շաբաթաթերթը: Ապրիլի 11/24-ին ձերբակալուած եւ Զանղեզուրը աքսորուածների առաջին քարաւանում էր. դիմումով վերադարձածների առաջին խմբում:

2. (105). Հիւսեան (Տօռեան՝ մականուանեալ).- ուսուցիչ, խմբագիր, նահատակուած Էնկիւրիի մօտ[172]:

3. (106) Աղարիկ.-. դեղագործ, նահատակուած Տէր-Զօրի կողմերը[173]:

4. (107) Դանիէլեան.- պանտրմացի դերձակ ի Կ. Պոլիս եւ ծանօթ հնչակեան գործիչ, վերապրող[174]:

5. (108) Բարունակ Սարուխան.- ըստ Գրիգորիս ծ. վրդ. Պալաեանի՝ «քաղաքապետութեան պաշտօնեայ, վախճանն անծանօթ»[175]:

Պարզուած է վախճանը. այս աքսորականը Արշ. Ալպոյաճեանի նահատակաց ցանկում է[176]:

6. (109) Գայրքճեան (համրիչի թիւ 90-ը - Կ. Ա.) երեք վաճառական եղբայրներից Միհրանն է կամ Գէորգը[177]: Երեքն էլ նահատակուել են Էնկիւրիում:

7. (110) «Մկրտիչ անուն կտրիճ երիտասարդ».- դաշնակցական[178]:

Այլ աղբիւրներից քաղուած անուններն են՝

1. (111) Պարոնեան.- գրածախ, բողոքական, Զանղեզրից Այաշի սպանդ քշուած առաջին քարաւանից դիմումով ազատուած եւ Կ. Պոլիս վերադարձած[179]:

2. (112) Միքայէլ.- մկանաւոր, վերոնշեալ առաջին սպանդի քարաւանից: Նահատակ[180]:

170 Ճարունակելիութեամբ նկատի է առնուած համրիչին արձանագրուած 103 տարագրեալներին աքսորակից լինելու հանգամանքը:

171 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 96 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Դ տարի, 1910, էջ 290. Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*, VI - *Դարձ Խաչին ճամփէն*,– «Էջմիածին», 1968, Ժ, էջ 53. Աստուր Փաշայեան, *Տիտղոսակիր հայեր. XV-XIX դարեր*, Եր., 2001, էջ 69

172 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 97 (I, II հրտ.)

173 *Նոյն տեղում*, էջ 98 (I, II հրտ.)

174 *Նոյն տեղում*

175 *Նոյն տեղում*, էջ 99 (I, II հրտ.)

176 ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1

177 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

178 *Նոյն տեղում*, էջ 172 (I հրտ.), 164 (II հրտ.)

179 Միքայէլ Ծամտանճեան, *Զանղեզրէն վերյիշումներ*. տե՛ս Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 114, 132 (I, II հրտ.):

180 *Նոյն տեղում*, էջ 114-115/132-133 (I, II հրտ.)

3. (113) Փաստրմաճեան.- Միհրան, «Կարնեցի Կարոի եղբօրորդին, ուսանող Միլքիէի»[181], նահատակ:

4. (114) Փափազեան Վրթանէս.- տարէց Բերացի, տարագրեալների առաջին քարաւանից, որն աքսորուել էր՝ համանուն վիպասանի[182] նոյնանուն-ազգանուանակիցը լինելով: Ըստ Բիւզանդ Քէչեանի՝ հէնց իր՝ իսկութիւնը պարզած դիմումով մարդն ազատուել է եւ Կ. Պոլիս հասել աքսորադարձ առաջին խմբի հետ: Թէոդիկի 1916-20 թթ. Տարեցոյցի «Դիմումներով աքսորէ դարձողներ»-ի մէջ ներկայացուած է դերձակ: Բիւզանդ Քէչեանը ներկայացնում է որպէս «Իր կեանքը մանիֆաթուրայի կրպակին, եկեղեցիին ու իր տան մէջ անցուցած ծերունի մը», Հաւատով խոստովանիմը ծայրէ ի ծայր անթերի արտասանողներ»-ից[183]:

5. (115) Խազխազեան Արշակ (1875-1915).- խնուսցի վաճառական: Ըստ Թէոդիկի Ցուշարձան...-ի տեղեկութեան «Հայրենակից կարգ մը առեւտրականներու հետ իր տարագրումէն յետոյ՝ միջոցը գտնելով թէեւ կ'աջողի մայրաքաղաքս դառնալ, բայց մատնուելով կրկին՝ կ'աքսորուի Զանղեզրէն հեռու՝ Մէճիտ-էօզիւ, անվերադարձ»: Ահաւասիկ, Զանղեզրի յիշատակումը ենթադրել է տալիս, որ այն եղել է նահատակի նախնական աքսորավայրը: (Ի դէպ, ասենք, որ օգտագործուած կարեւորագոյն այնպիսի հիմնաղբիւր գրականութեան մէջ, ինչպիսին Թէոդիկի Ցուշարձան...-ն է, Զանղեզրը ներկայացուած է որպէս Ռուբէն Սեւակի, Վահան Քէչեանի, Դանիէլ Վարուժանի, Օննիկ Մաղազաճեանի եւ Օրթաքէոյի հացավաճառ Արթինի ստոյգ աքսորավայրը: Արշակ Խազխազեանի պարագայում, ինչպէս տեսնում ենք, այս աքսորավայրը յիշատակուած է՝ անուղղակիօրէն)[184]:

Այաշի աքսորական Աւետիս Նագգաշեանի յուշագրութեան էջերում կենտրոնական բանտից ապրիլի 12-ին (12/25-կ.Ա.) դուրս բերուած աքսորականների առաջին քարաւանի կազմում յիշատակւում են սրճեփ Ցակոբը, գինեպան Օննիկը, «Ցակոբի տղան՝ Գրիգոր»: Կիւլհանէ մտնելիս «Ակնունիի քովէն կը քալէր մսավաճառ Կարապետ՝ գլուխը բաց, գոգնոցը դեռ վրան, Վարուժանի շարքին մէջ էր նպարավաճառ Ցակոբը: Զարդարեանի հետ կը քալէր Ազատամարտի մեքենավարը»[185],- ասում է նա: Ըստ նոյն հեղինակի վկայութեան՝ «Պոլսոյ շնահաւաք Արթին Ասատուրեան ազատ արձակուեցաւ. Ասատուրեան անունի չփոթութեան մը զոհ եղած էր: Տիգրան Աճեմեան մը կար, որ կ'երեւի գրագէտ Աճեմեանի մը տեղ բերուած էր: Մարդը Անգարացի էր եւ մէկ բառ հայերէն չէր գիտեր: Ազատ թողուեցաւ[186]: Դարձեալ Հայկ Թիրէաքեան մը կար մեր քով, կաղ, կէսկոյր եւ մելամաղձոտ մէկը, որ Բերայի մէջ նպարավաճառ է եղեր: Այս մարդը չփոթեր էին 1896-ին պանքայի հերոսներէն Հայկ Թիրէաքեանի (Հրաչ) հետ

181 Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 47, 65 (I, II հրտ.). Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*, III. - *Խաչին ճամփան*,– «Էջմիածին», 1968-Է, էջ 6

182 Ըստ Բ. Քէչեանի միջնորդաւորուած տեղեկատուութեան՝ վիպասան Վ. Փափազեանը արհաւրալից օրերին Ռումինիայում էր, ըստ Թէոդիկի՝ «զօրակոչէն վերջ Ռուսիա անցած», որ աւելի հաւանական է: Տե՛ս Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115: Ուշագրաւ է վիպասանի 1920 թ. ապրիլի 3 թուակիր նամակը Վաղարշապատից՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը, որով յորդորում էր ապրիլի 11-13-ի (24-26) օրերից մէկը սահմանել 1915-ի նահատակաց՝ սգահանդէսներով դրսեւորուող յիշատակի օր (Վրթանէս Փափազեան, *Նամակ-առաջարկ*. տե՛ս Ալբերտ Փարսադանեան, *նշ. աշխ.*, էջ 233-234):

183 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 115. ԺԶ տարի, 1922, էջ 35, 40

184 Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 15/33, 42/60, 47/65 (I, II հրտ.)

185 Ա. Նագգաշեան, *նշ. յուշագր.*, էջ 6, 10, 11

186 Նոյնը, էջ 32

© National Library of Armenia

եւ խառներ էին մեր խումբին: ...Իսկական Հայկ Թիրէաքեանը տարուեր էր Զանղըրը: Իսկական Հայկ Թիրէաքեան իմանալով այդ՝ հեռագիր կու տայ Կ. Պոլիս եւ ինքզինքը կը մատնէ: Հրաչ Զանղըրէն բերին մեր քով... յետոյ սպաննեցին»[187]:

Իրաւամբ, մսավաճառ Կարապետը՝ Թաշճեան ազգանուամբ, ինչպէս տեղում յիշատակել ենք (տե՛ս համրիչ թիւ 60), աքսորադարձուել է, մինչդեռ նոյնանուն-ազգանուանակիցը նահատակուել է Էնկիւրիում[188]: Հետեւաբար հնարաւոր է եւ Յակոբի որդի Գրիգորի, սրճեփ Յակոբի, գինեպան Օննիկի, նպարավաճառ Յակոբի ներկայութիւնը տարագիրների կազմում, որոնք Այաշ կամ Զանղըրը են տարուել: Թէոդիկի Յուշարձան...-ում է Ազատամարտի մեքենավարը՝ 21-ամեայ այաշական նահատակ Արթին Մսըրլեանը[189]: Հանրայայտ է նաեւ Հրաչի վեհանձնութեան առհաւատչեայ անձնուրաց արարքը՝ յանուն իր նոյնանուն-ազգանուանակից ակամայ - զոհի: Ուրեմն՝ արդէն կասկածից վեր է յանուանէ յիշատակուած շնահաւաքի, թրքախօս անգարացի հայի ներկայութիւնը աքսորականների մէջ, միայն թէ՝ ոչ շփոթութեան, այլ նպատակային ծրագրի իրականացման արդիւնքում: Նախապէս կազմուած «սեւ ցուցակներում» ներառուել էին ազգի մտահոգեւոր կեանքի Զահակիրների, նրա կենաց ապահովութիւնն ըստ իրենց ընկալման տեսնող գաղափարական, ազգային, քաղաքական գործիչների անուն-ազգանուանակիցները, որեւէ վրիպում թոյլ չտալու նկատառմամբ եւ երկակի միտումով: Անմիջական հայեացքով, շնահաւաքի կամ նպարավաճառի ազատ արձակումը, որպէս անմեղների, թուրք կառավարութեան արդարադատութեան մտապատրանք է առաջացնում, մինչդեռ այդպիսով հէնց, ողջ մի ժողովուրդ մտակորոյս, ոգին խաւարած, թեւաթափ զանգուածի էր վերածւում, զանգածը՝ վերապրող բեկորներից... բեկ-բեկ...

Պոլիս դարձած Տիգրան Աճեմեանը Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի Այաշի աքսորականների կազմում է[190]:

Յակոբի տղայ Գրիգորը, սրճեփ Յակոբը, գինեպան Օննիկը, նպարավաճառ Յակոբը յաւելեալ անուններ են տարագրեալների առաջին քարաւանում, ինչպէս եւ շնահաւաք Յարութիւն Աստուրեանը, որի փոխարէն, այնուամենայնիւ, Այաշ է բերուել փնտրուած նոյնանուն-ազգանուանակիցը, որը Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի Այաշի աքսորականների շարքում թիւ 51-ն է, «Նահատակուած Էնկիւրի» տեղեկատուութեամբ[191]:

Արդ, անդրադառնանք Այաշի աքսորականներին՝ հիմք ընդունելով Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի 62 այաշականների անուանացանկը, որը պրպտումներիս արդիւնքում լրուել է, հնարաւորինս:

1. Խաչատուր Մալումեան[192].– Է. Ակնունի (1860/63, Մեղրի - 1915, Ուրֆայի ճանապարհին), հրապարակախօս, հասարակական-քաղաքական գործիչ, յայտնի դաշնակցական: 1883 թ. աւարտել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, ապա ուսումը շրունակել Ժնեւում: Գրիգոր Արծրունու մահից յետոյ Մշակ թերթի պատասխանատուներից էր: Գործել է Ս. Պետերբուրգում, 1899-ից՝ Ժնեւում աշխատել Դրօշակի խմբագրութիւնում, որտեղ եւ հրատարակել է Կովկասեան խաբրիկներ յօդուածաշարը՝ Է. Անկունի ստորագրութեամբ, աշխատակցել է եւ Ազատամարտին: Քարոզչական ծաւալուն աշխատանք է տարել Եւրոպայում ի նպաստ Հայ Դատի: 1908-ից հիմնականում գործել է Կ. Պոլսում, 1910-11-ին քարոզչութեամբ հանդէս է եկել Ամերիկայում, Եգիպտոսում, Լիբանանում, Զմիւռնիայում: 1910-ին ԱՄՆ-ում նրա ջանքերով հիմնադրուել է «Հայ օգնութեան միութիւն»-ը, հայ կանանց տարբեր կազմակերպութիւնների միաւորմամբ՝ «Դաշնակցութեան կարմիր խաչի» մէջ: 1914 թ. օգոստոսին մասնակցում էր ՀՅԴ կուսակցութեան 8-րդ ընդհանուր ժողովին Էրզրումում:

1915-ի ապրիլի 11/24-ին ձերբակալուած մտաւորականութեան կազմում է, Այաշի աքսորական նահատակ:

2. Գարեգին Զագալեան.– Խաժակ, «Պապա Գասպար» ծածկանուամբ (1867, Ալեքսանդրապոլ - 1915, Ուրֆայի ճանապարհին): Հրապարակախօս, թարգմանիչ, մանկավարժ, դաշնակցական յայտնի գործիչ: Աւարտել է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը 1886-ին, 1893-ին անցել է Ժնեւ, 1898-ին՝ աւարտել տեղի համալսարանի հասարակագիտական ֆակուլտետը: Ուսուցչութեամբ է զբաղուել Ալեքսանդրիայում, Կ. Պոլսում, Շուշիում, Թիֆլիսում, Մշակի խմբագիրն էր 1903-ից, միաժամանակ, 1904-ին, նաեւ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ, որտեղ դասաւանդում էր պատմութիւն, ֆրանսերէն, քաղաքական տնտեսութիւն:

1906-ին Ա. Ահարոնեանի եւ Յ. Թօփճեանի հետ հիմնել է Յառաջ, Ալիք թերթերը: Ողջ գործունէութեան ընթացքում, որպէս եռանդուն քաղ. գործիչ, ձերբակալուել է ե՛ւ Կ. Պոլսում, ե՛ւ Թիֆլիսում (Մետեխի բանտ): 1912-ի ամռանը Ահարոնեանի եւ Իսահակեանի հետ եկել է Կ. Պոլիս եւ 1913-ին ստանձնել Սամաթիոյ ազգային վարժարանի տնօրինութիւնը: Տպագրուել է Մշակում, Մուրճում, Տարազում, Ազատամարտում, զբաղուել է թարգմանչական աշխատանքով:

1915-ի ապրիլի 11/24-ին ձերբակալուածների խմբում էր, Այաշի աքսորական-նահատակ: Յայտնի է հակիրճ նամակը ընտանիքին Այաշից Տիգրանակերտի պատերազմական ատեան տարուելու ճանապարհից, որ գրել է Էրէյլիի կայարանում 1915-ի մայիսին՝ յիշատակելով բախտակից ընկերներին՝ Ակնունի, Զարդար[եան] (Սարգիս Մինասեան, դոկտ. Տաղաւարեան, Ճիհանկիւլ[եան][193] – Կ. Ա.):

3. Ռուբէն Զարդարեան (1874, Սեւերեկ (Սեւաւերակ) - 1915, Ուրֆայի ճանապարհին):

1915-ի ապրիլի 11/24-ին տարագրուել է Այաշ, այնտեղից Տիգրանակերտի պատերազմական ատեան է քշուել հինգ ընկերների հետ, իբր դատուելու (տե՛ս վերը՝ Խաժակի նամակում), նրանց հետ էլ նահատակուել է Ուրֆայի ճանապարհին: Առաջին քարտը թուրքերէնով Այաշից ապրիլին հասցէագրել է կնոջը՝ Վերոնիկային, 2-րդը

187 Նոյնը, էջ 32-33

188 Գ. Պալաքեան, *Ազ. աշխ.*, էջ 89, 90 (I, II հրտ.). Կ. Աւագեան, *Ազ. աշխ.*, էջ 48-49. Նոյնի՝ *Թանգարանային մէկ ցուցանմոյշ...*,– «Բազմավէպ», 2006, էջ 141-143

189 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 47, 65 (I, II հրտ.)

190 Գ. Պալաքեան, էջ 90 (I, II հրտ.)

191 Նոյնը, էջ 89, 90 (I, II հրտ.)

192 Գ. Պալաքեան, *Ազ. աշխ.*, էջ 86, 87 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 7, 25 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Ազ. յուշագր.*, էջ 106/124,108/126 (I, II հրտ.). Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 90, 544. Կ. Գէորգեան,– «Ամէնուն տարեգիրքը», 1965, ԺԲ տարի, Ազ. յօդուած, էջ 161. Ա. Նագգաշեան, *Ազ. յուշագր.*, էջ 10, 45. Ց. Սիրունի, *Ոյն տեղում*, էջ 218, 325. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 26, 116, 208, 334, ՀՀՀ, հտ. 3, Եր.,, 1999, էջ 525. *Ով՝ ով է*, կենսագրական հանրագիտարան, հտ. 2, էջ 19:

193 Գ. Պալաքեան, *Ոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 5-6/23-24 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Ազ. յուշագր.*, էջ 102/120, 108/126 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *Ոյն տեղում*, էջ 45. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Ոյն տեղում*, էջ 90, 551. Ց. Սիրունի, *Ազ. աշխ.*, էջ 45, 98, 135, 192, 193, 333, ՀԱՀ, հտ. 4, Եր., 1978, էջ 703. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 116, 164, ՀՀՀ, հտ. 2, Եր., 1995, էջ 468. *Ով՝ ով է*, կենսագրական հանրագիտարան, հտ. 1, Եր., 2005, էջ 487

© National Library of Armenia

մայիսին գրել է ստոյգ մահուան քշուելու ընթացքին՝ Էնկիւրիից[194]:

4. Սարգիս Մինասեան, Արամ Աշոտ կեղծանուամբ (1873, Զէնկիլէր (Եալօւա) - 1915, Ուրֆայի ճանապարհին): Գրող, խմբագիր, ուսուցիչ, դաշնակցական գործիչ: Պարտիզակի բարձրագոյն վարժարանից անցել է Կ. Պոլսոյ Կեդրոնական, ապա Հրանդի (Մելքոն Կիւրճեան) աջակցութեամբ մեկնել է Ժնեւ, 1894-1903 թթ. ուսումնասիրել հասարակագիտութիւն: Աշխատակցել է Դրօշակին, տեղափոխուելով Բոստոն՝ մինչեւ 1905 թ., վարել է Հայրենիքի խմբագրութիւնը, ապա նորից անցել Ժնեւ, մինչեւ 1909-ը: Կ. Պոլիս է վերադարձել «Հիւրիէթ»-ից յետոյ, զբաղուել ուսուցչութեամբ եւ գրականութեամբ: Ազգային երեսփոխան էր Բերա՝ Գասըմ Փաշայից: Ազատամարտի մնայուն աշխատակիցներից լինելով կառավարութեան ուշադրութիւնը գրաւել է, հաւանաբար, պատերազմի սկզբներին այնտեղ տպագրած սրամիտ քննադատական յօդուածների շարքով, որոնք վերաբերում էին Բերայում հայ բժիշկների կողմից նախաձեռնուած առողջապահական բանախօսութիւններին: Ձերբակալուել է ապրիլի 11/24-ի չարաշաք գիշերը, աքսորուել Այաշ, որտեղից էլ 5 ընկերների հետ դուրս բերուելով, իբր Տիգրանակերտի պատերազմական ատեան տարուելու համար, նահատակուել է ճանապարհին[195]:

5. Յարութիւն Ճանկիւլեան.– Կայծակ Հաճի (1855 կամ 1856, Վան - 1915 Ուրֆայի ճանապարհին): ՍԴ հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից է, հասարակական գործիչ, հրապարակախօս, ազգային երեսփոխան: Կ. Պոլիս է եկել 1881-ին, եղել է 1890 թ. յուլիս 15-ի Գումգաբուի «Անզէն ցոյցի» կազմակերպիչներից, ձերբակալուել է, ենթարկուել անլուր տառապանքների, մահուան դատապարտի վճիռը, սակայն, փոխուել է ցմահ բանտարկութեան: Մինչեւ 1896 թ. Աքիայի, (կամ՝ Ակրայի) բանտում էր, 1897-ին՝ յաջողել է փախչել Կիպրոս, ըստ Կարո Գէորգեանի՝ Եգիպտոս: Կ. Պոլիս է վերադարձել «Հիւրիէթ»-ի հռչակումից՝ երիտթուրքերի յեղաշրջումից յետոյ՝ 1908-ին: Պաշտօնավարել է հնչակեան կուսակցութեան պատասխանատու մարմիններում, ընտրուել ազգ. երեսփոխան՝ Կէտիկ Փաշայից, նաեւ Միացեալ ընկերութեան հիմնադիր ժողովի անդամ էր: 1913-ին հրատարակել է յուշեր՝ Ցիշատակներ Հայկական ճգնաժամէն, չորս հատորով, որտեղ ամփոփուած են ազգ. յեղափոխական կեանքի ուշագրաւ փաստավաւերագրեր:

1915 թ. ապրիլի 11/24-ի առաջին ձերբակալուածներից է, Այաշի աքսորական, որին իր հինգ աքսորակից ընկերների հետ հանել են այնտեղից, Տիգրանակերտի պատերազմական ատեանում դատելու պատրուակով եւ խողխողել Ուրֆայի ճանապարհին[196]:

194 Գ. Պալաքեան, *Ազ. աշխ.*, էջ 87, (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 14/32 (I, II հրտ.), ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Կ. Գէորգեան,– «Ամէնուն տարեգիրքը», 1959, էջ 151-155. Նոյնը, 1965, էջ 161-162. Եր. Օտեան, *Նոյն տեղում*, էջ 90, 548, ՀՍՀ, հտ. 3, Եր., 1977, էջ 665-666, ՀՀՀ, հտ. 2, էջ 182. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 10, 129, 240, 305,– «Սովետական գրականութիւն», 1965, թիւ 4, էջ 72-73. Ց. Սիրունի, *Ազ. աշխ.*, էջ 125, 142, 190, 193, 197, 218, 249, 266, 279, 286, 287, 291, 301, 330. Ա. Նագգաշեան, *Ազ. յուշագր.*, էջ 11, 49. Բ. Պօղոսեան, *Ազ. յուշագր.*, էջ 108/126 (I, II հրտ.). *Ով՝ ով է*, հտ. 1, էջ 389

195 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 16, 34 (I, II հրտ.). Բ. Պոզաճեան, *Նոյն տեղում*. Ա. Նագգաշեան, *Նոյն տեղում*, էջ 45. Եր. Օտեան, *Ազ. յուշագր.*, էջ 79, 88, 556. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Կ. Գէորգեան, *Նոյն տեղում*, էջ 166-167. Ց. Սիրունի, *Նոյն տեղում*, էջ 98, 192, 338

196 Գ. Պալաքեան, *Ազ. աշխ.*, էջ 87 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 33, 51 (I, II հրտ.). Բ. Պօղոսեան, *Նոյն տեղում*, էջ 102/120, 108/126.

6. Դոկտ. Նազարեթ Նահապետի Տաղաւարեան (Զատըրճեան), (25.12.1862, 1863?, Սեբաստիա - 1915, Ուրֆայի ճանապարհին):

Գիւղատնտես, բնագէտ, բժիշկ, Ստամբուլի Հայ բժիշկների միութեան անդամ, հասարակական եռանդուն գործիչ, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան հիմնադիրներից (Պօղոս Փաշայի հովանաւորութեամբ), Ազգային երեսփոխան, Մեպուս՝ Սեբաստիայից (Սվազ) թուրքական խորհրդարանում:

Նախնական կրթութիւնը ստացել է Կ. Պոլսոյ Ամենափրկչեան վարժարանում, 1878-ին մեկնել Ֆրանսիա, 1881-1882-ին սովորել եւ աւարտել է Փարիզի երկրագործական վարժարանը:

1885 թ. Կ. Պոլսում հիմնել է հայերէն առաջին բնագիտական՝ Գիտական շարժում հանդէսը: 1885-86-ին Գատըքէոյի Արամեան վարժարանի տնօրէնն էր: 1887-ին դարձեալ Փարիզ է մեկնել, 1892-ին աւարտել է Սորբոնի համալսարանի բնագիտական, 1893-ին՝ բժշկ. ֆակուլտետները, ստացել բժշկագիտութեան դոկտորի աստիճան: 1904-ին Տաղաւարեանն արժանացել է ֆրանսիական աստղագիտական ընկերութեան պատուաւոր անդամի կոչման: 1899-1905 թթ. նա եղել է Հայոց Ս. Փրկիչ Ազգ. հիւանդանոցի բժշկապետը (գլխ. բժիշկ): Հետապնդուել է համիդեան կառավարութեան կողմից, ձերբակալուել 1896-ին, 1900-ին երկրից փախել, հաստատուել է մերթ Մարսելում, մերթ Կահիրէում: Կ. Պոլիս է վերադարձել 1908-ին, զբաղուել հողային հարցի նախագծի մշակմամբ: 1909-ին արժանացել է Ֆրանսիայի Հանրապետութեան Գիւղատնտեսութեան նախարարութեան հողագործական ծառայութեան Ասպետի խաչի:

Հեղինակ է գիւղատնտեսական, բնագիտական, բժշկագիտական, տիեզերաբանական, նաեւ պատմա-բանասիրական արժէքաւոր ուսումնասիրութիւնների: Նման կարկառուն դէմքը չէր կարող վրիպել թուրք կառավարութեան «սեւ ցուցակներից», եւ պատահական չէր նրա ձերբակալութիւնը հէնց ապրիլի 11/24-ին, եւ աքսորը՝ Այաշ, որտեղից արդէն մայիսի սկզբներին դուրս բերուելով հինգ ընկերների հետ (տե՛ս Այաշի աքսորականների ցանկի թիւ 1-ից 5-ը)՝ իբր Տիգրանակերտի պատերազմ. ատեան տարուելիս խողխողուել է ճանապարհին[197]:

7. Համբարձում Յակոբի Պոյաճեան.– Մեծն Մուրատ (1860?, 1867, 30.07, Հաճըն - 24.08.1915, Կեսարիա): Ազգային ազատագրական շարժման հանրայայտ գործիչ, հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից՝ 1888-ին: Ժիրայրի (Յարութիւն-Մարտիրոս) կրտսեր եղբայրը, Ազգային երեսփոխան, Օսմանեան խորհրդարանի անդամ:

Պոլիս է եկել 1885-ին, թերաւարտ թողնելով Բժշկական համալսարանի ուսումը՝ նետուել ազատագրական շարժման

Ա. Նագգաշեան, *Նոյն տեղում*, էջ 6, 45. Կ. Գէորգեան,– «Ամէնուն տարեգիրքը», ԺԲ տարի, 1965, էջ 172. Եր. Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, Գ. գիրք, «Անուանացանկ», էջ 288. Նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 554,– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 41, 108, 293, ՀՀՀ, հտ. 3, Եր., 1999, էջ 495. Ց. Սիրունի, *Ազ. յուշագր.*, էջ 113, 336. *Ով՝ ով է*, հտ. 2, էջ 5-6

197 Գ. Պալաքեան, *Ազ. յուշագր.*, էջ 87 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 17/35 (I, II հրտ.). Բ. Պօղոսեան, *Նոյն տեղում*, էջ 108/126. Ա. Նագգաշեան, *Նոյն տեղում*, էջ 45. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Եր. Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, Գ. գիրք, էջ 291. Նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 89, 90, 563. Կ. Գէորգեան,– «Ամէնուն տարեգիրքը», ԺԲ տարի, 1965, էջ 165, ՀՍՀ, հտ. 11, Եր., 1985, էջ 553. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 305, 439,– «Հայկական համառօտ հանրագիտարան» (ՀՀՀ), հտ. 4, Եր., 2003, էջ 680-681. Աստուր Փաշայեան *Տիտղոսակիր հայեր...*, էջ 252. Arsen Yarman, *Նոյն տեղում*, էջ 62, 169, 241, 328, 566-567, 571, 736, 780-781. *Ով՝ ով է*, հտ. 2, էջ 562-563:

© National Library of Armenia

գործունէութեան ոլորտ: 1890-ի յուլիսի 15-ի Գումգաբուի «Անզէն ցոյց»-ի գլխաւոր կազմակերպիչն էր, որից յետոյ, խուսափելով ձերբակալութիւնից, փախել է Աթէնք: 1892-ին կուսակցական կենտրոնի հրահանգով անցել է Տարօն, գործակցել Միհրան Տամատեանի հետ: 1893-ին եղել է Կովկասում, զինուած փոքրաթիւ խմբով վերադարձել է Սասուն, ղեկավարել Սասունի 1894-95-ի ապստամբութիւնը, Մ. Տամատեանի ձերբակալութիւնից յետոյ: Զինակիցներն էին՝ այնտեղ իրենց մարտական մկրտութիւնը ստացած Անդրանիկը, Գէորգ Զաւուշը, Հրայր Դժոխքը: 1894-ի օգոստոսի վերջին ձերբակալուել է, երկու տարի մնացել Բաղէշի (Բիթլիս) բանտում, սկզբում մահուան դատապարտուած, ապա՝ ցկեանս բերդարգելութեան, աքսորուելով Տրիպոլիս (Աֆրիկա): 1904-ին (1905-ին?) յաջողել է փախչել բանտից, հաստատուել Փարիզում, ապա անցել է ԱՄՆ: 1907-ին Եգիպտոսում փորձել է համերաշխութիւն հաստատել վերակազմեալ հնչակեանների հետ, հանդիպելով Մ.Տամատեանին:

Պոլիս է վերադարձել չարաբաստիկ 1908-ին եւ լինելով ազգային երեսփոխան՝ Գումգաբուից, եւ մեպուս՝ Ադանայից... 1915-ի ապրիլի 11/24-ին ձերբակալուել, աքսորուել է Այաշ, այնտեղից՝ Կեսարիա, որտեղ էլ կախաղան է բարձրացուել:

Արշակ Ալպօյաճեանի նահատակաց կազմում է[198]:

8. Յարութիւն Շահրիկեան (1860, Շապին Գարահիսար - 1915, Էնկիւրի, ըստ՝ աքսորականից Ա.Նագգաշեանի՝ Այաշ-պէյլի): Իրաւագէտ փաստաբան, հրապարակախօս, հանրային-քաղ. գործիչ, յայտնի դաշնակցական, Ազգ. երեսփոխան, ընտրուած՝ Սկիւտարից: Սկզբն. կրթութիւնը ստացել է ծննդավայրում, ապա աւարտել է Կ. Պոլսի Կալաթայ Սէրայի լիցէյը: 1890-ականներին աշխատակցել է Շահնազարի Հայրենիքին, ամուսնանալով Տրապիզոնում, 1896-ին այնտեղ ձերբակալուել, բանտարկուել է 13 ամիս, այդ ընթացքում իսկ ժամանակ չկորցնելով՝ սովորել անգլերէն: 1897-ի վերջերին փախել է Բաթում, ապա Թիֆլիս, այստեղ էլ իւրացրել է ռուսերէնը, Սանկտ Պետերբուրգի համալսարանից վկայուել փաստաբան: Կ. Պոլիս է վերադարձել 1908-ին, մնալով միշտ անհաշտ ազատական: Դաշնակցական մամուլում, մանաւանդ Ազատամարտում ուշագրաւ յօդուածների շարք է հրատարակել՝ Նինի, Վաղինակ, Ատոմ ծածկանուններով: Մերժել է իթթիհատի Պետական Խորհրդին անդամակցելու հրաւէրը:

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ: Ըստ աքսորակից-վերապրող Ա. Նագգաշեանի յուշագրութեան՝ գնդակահարուել է Այաշ Պէյլի կոչուող վայրում Այաշի վերջին 23 ընկերների հետ մէկտեղ[199]:

198 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*, էջ 87, 88 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 30-31/48-49 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 102-103/120-121 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 17, 42-43. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 169. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1, 4. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 100, 108, 147, 183, 327, 402, ՀՀՀ, հտ. 4, էջ 232, ՀՍՀ, հտ. 9, Եր., 1983, էջ 376. - ակնյայտ անճշտութիւն կայ այստեղ Հ.Պօյաճեանի վախճանի վերաբերեալ. Կ. Պոլսի Պայազետի հրապարակում 1915-ի յունիսի 2(15)-ին կախաղան բարձրացուած 20 հնչակեաններից մէկն է համարուել: Հաւանաբար, յօդուածագիրը շփոթել է նրան Գառնիկ Պօյաճեանի հետ: *Ով՝ ով է*, հտ. 2, էջ 349:

199 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 4-5, 22-23 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103, 121 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 6, 55. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 162. Եր. Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, Գ. գիրք, նոյն տեղում, էջ 290. նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 92; 559. Ց. Սիրունի, *նոյն տեղում*, էջ 125, 139, 340. *Ով՝ ով է*, կենսագրական հանրագիտարան, հտ. 1, էջ 149

9. Ատոմ Յովհաննէսի Եարճանեան.- Սիամանթո (1878, Ակն., 01.01 կամ՝ 15.08 - 1915, Էնկիւրի), 1891-ին Կ. Պոլսում հաստատուելով ուսանել է Գումգաբուի Միրիճանեան եւ Սկիւտարի Պերպերեան վարժարաններում:

Սիամանթոն եւս, բնականաբար, 1915-ի ապրիլի 11/24-ի հայ տարագիր մտաւորականութեան առաջին քարաւանում էր՝ Այաշի աքսորական, որին Էնկիւրիի սպանդ են քշել վերոնշեալ առաջին վեցեակին իբր Տիգրանակերտի պատերազմական ատեանում «դատուելու» ուղարկելուց յետոյ[200]:

Արշակ Ալպօյաճեանի նահատակաց կազմում է:

10. Հայկ Թիրէաքեան.- Հրաչ (1871, Տրապիզոն - 1915 յունիս-յուլիս ?, Էնկիւրի): Դաշնակցական յայտնի գործիչ, ազգային երեսփոխան, որին սկզբնապէս Զանղրը էին աքսորել (տե՛ս համրիչի թիւ 76 – Կ. Ա.) եւ ամենայն վեհանձնութեամբ, իր իսկ դիմումով տեղափոխուել է Այաշ՝ հաւանաբար յունիսի սկզբներին, այդպիսով փրկելով իր անուն-ազգանուանակից հիւանդ նպարավաճառին:

Սովորել է Ֆրանսիայում Նիսի երկրագործական վարժարանում, եւ ուսանողական ընկերոջ՝ Արմէն Գարոյի (Փաստրմաճեան) հետ համատեղ 1895-ին Դրօշակի խմբագրութիւնից խնդրել է նկատի ունենալ իրենց՝ վտանգաւոր ձեռնարկների համար: Ընկերոջ հետ էլ մասնակցել է 1896-ի օգոստոսի 14-ին կայացած Օսմ. բանկի գրաւման գործողութեանը՝ Բաբկէն Սիւնու գլխաւորութեամբ, որի նահատակութիւնից յետոյ միասին ստանձնել են ղեկավարութիւնը՝ 13 ժամ բանկն իրենց ձեռքում պահելով (նպատակը՝ հայկական բարենորոգումների ծրագիրը իրականութիւն դարձնելն էր, փոխարէնը՝ ցաւօք, նոր կոտորածների ալիք բարձրացաւ): Ապա ընկերների հետ տեղափոխուել է Մարսել՝ մասնաւոր շոգենաւով, յետոյ գաղտնի անցել Իզմիր, որտեղ սակայն ձերբակալուել է, ցկեանս բերդարգելութեան դատապարտուել Պոտուրում: Բանտից ազատուել է սահմանադրութեան հռչակումից յետոյ, անցել Կ. Պոլիս, ստանձնել Ազատամարտի վարչական պատասխանատուութիւնը: Միաժամանակ Պատերազմական նախարարութեան կերպասեղէնի հայթայթիչն էր, բայց չխնայուեց՝ յեղափոխական իր բուռն անցեալի եւ հէնց Ազատամարտի պատասխանատու աշխատակիցը լինելու հանգամանքով[201]:

11. Ներսէս Զաքարեան (1883, Իզմիթ - 1915, Այաշ Պէյլի): Իտատի առեւտրական եւ Ֆրերների վարժարանների ընթացարտ, թուրքերէնի մասնագէտ, մանկա-

200 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 10/28 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 108/126 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 6, 23. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., թերթ 1. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 161. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 548, ՀՍՀ, հտ. 10, Եր., 1984, էջ 351-352. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 86, 240-241, 280, 305, 414-415, ՀՀՀ, հտ. 4, էջ 425-426. Հեկտոր Ռշտունի, *Կենսախինդ էջեր Սիամանթոյի պոէզիայում* (անտիպ գործեր). տե՛ս «Սովետական գրականութիւն», 1965, ապրիլ, թիւ 4, էջ 68-70. Գոհար Ազնաւուրեան, *Անբայտ էջեր հայ նահատակների գրական ժառանգութիւնից*,– «Էջմիածին», 1965, Ա-Բ, էջ 49-51. Փիթեր Բալաքեան, *Ճակատագրի սեւ շունը*, մասն հինգերորդ - *Արիւնոտ լուրեր*, գլ. «Մեր նախնիների գերեզմանատունը», էջ 278, 281-284. *Ով՝ ով է*, հտ. 2, էջ 456:

201 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 35, 53 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 109/127 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 33. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Հր. Տասնապետեան, *Ազ. աշխ.*, էջ 41, 114, 216, 223, 249. Եր. Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, նոյն տեղում, էջ 288. նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 87, 554. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 166. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 77, 287. *Ով՝ ով է*, հտ. 1, էջ 689-690

© National Library of Armenia

վարժ, Կէտիկ Փաշայի Ազգ. վարժարանի տնօրէն, նոյն տարածքից ընտրուած երեսփոխան, Ազգային կեդր. վարչութեան անդամ, հնչակեան գործիչ: Հրատարակել է Քերական օսմանեան լեզուի *աշխատանքը,* Ապագա, Նոր աշխարհ *թերթերը*[202]*:*

12. Բարսեղ Շահպազ [1883-06, Պօյաճըքէօ (Վոսփոր) - 1915, Խարբերդի - Մալթիոյ միջեւ՝ ճանապարհին): Խմբագիր, փաստաբան: Ուսումը ստացել է Կեդրոնականում եւ Մխիթարեանների մօտ (Գատըքէօ), աւարտելուց յետոյ ուսանել Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանում՝ 2 տարի, այնտեղ էլ Աւետիս Ահարոնեանի մէկ այցելութեան ժամանակ ընդունուել է դաշնակցութեան շարքերը: Վերադառնալով Կ. Պոլիս՝ Մ. Շամտանճեանի հետ հրատարակել է Ծաղիկ թերթը, 1903-ին՝ փախել Եգիպտոս, Օրմանեան Ս.-ի նկատմամբ կատարուած մահափորձի առթիւ սկսուած հետապնդումներից խուսափելով: Ալեքսանդրիայում հրատարակել է Կրակ *թերթը (2 թիւ),* Այլասիրութիւն եւ եսասիրութիւն *գրքոյկը,* Մտրակ *կիսամսեան,* Հաչիւններ-*թռուցիկը: Կ. Պոլիս Վերադառնալով, Սահմանադրութեան վաղորդայնին, կուսակցութեան յանձնարարութեամբ մեկնել է ներքին գաւառներ, ապա Բուլղարիա, Եգիպտոս, Փարիզ՝ իրաւաբանութիւն ուսումնասիրելու: Մ. Վարանդեանի հետ շարունակել է* Pro Armenia-*ն, աշխատակցել* Հայրենիքին, Հորիզոնին*: Կրկին Կ. Պոլիս է վերադարձել 1-ին համաշխարհային պատերազմի նախօրեակին, Վիկտոր Պէռարի կողմից իրեն վստահուած մի առաքելութեամբ, բայց ձերբակալուել է:*

1915-ի ապրիլի 11/24-ին ձերբակալուածների կազմում էր եւ որպէս առաւել վտանգաւոր՝ քշուել է Այաշ:

Կարո Գէորգեանը չյիշատակելով աքսորուելու պարագան, որն իսկութիւն է, արձանագրում է նահատակութեան հանգամանքները.- «Բանտէ բանտ քաշկռտուելէ եւ խոշտանգուելէ ետք, գիշեր մը, Մեզրէի (Խարբերդ) բանտի պատին առջեւը սպաննուելով» տեղեկատուութեամբ: Արշ. Ալպօյաճեանի նահատակաց ցանկում է[203]*:*

13. Շաւարշ Քրիսեան (1886, 9.7., Կ. Պոլիս, Պէշիքթաշ - 1915, Էնկիւրի): Սովորել է Մաքրուհեանում, Պէրպէրեան վարժարանում, Ռոպէրթ քոլէջում: 1906-ին մեկնել է Փարիզ, ապա՝ Լոնդոն, շարունակել ուսումը մարմնամարզութեան ասպարէզում: Վերադառնալով Կ. Պոլիս մարմնամարզութեան ուսուցիչ է նշանակուել զանազան դպրոցներում, արուարձաններում: Ստեղծել է մարմնակրթական ակումբներ: 1911-ի փետրուարից լոյս է ընծայել Մարմնամարզ *պատկերազարդ ամսաթերթը, որը յետոյ դարձել է կիսամսեայ (մօտ 4 տարի): Յ. Թ. Հինդլեանի հետ հրատարակել է* Պոյ Սքաութը *եւ իր կեանքին նպատակը գրքոյկը: Գաղափարականով՝ դաշնակցական էր:*

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել՝ Այաշ[204]*: Արշ. Ալպօյաճեանի նահատակաց շարքում է:*

---

202 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Թէոդիկ,** *Յուշարձան...,* էջ 37, 55 (I, II հրտ.). **Նոյնը,**– «Ամէնուն տարեցոյցը», ԺԷ տարի, 1921, էջ 156. **Բ. Պօզաճեան,** էջ 103/121, 108/126, 111/129 (I, II հրտ.). **Ա. Նագգաշեան,** *նոյն տեղում,* էջ 55. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. **Եր. Օտեան,** *Թիւ 17 Խաֆիէն,* Գ. գիրք, էջ 286. **Նոյնը,** *Անիծեալ տարիներ...,* էջ 92, 548

203 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Թէոդիկ,** *Յուշարձան...,* էջ 22, 40 (I, II հրտ.). **Ա. Նագգաշեան,** *նոյն տեղում,* էջ 17, 25, 44. **Ց. Սիրունի,** *նոյն տեղում,* էջ 170, 340. **Կ. Գէորգեան,** *նոյն տեղում,* էջ 167, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. **Եր. Օտեան,** *Անիծեալ տարիներ...,* էջ 88, 559

204 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Թէոդիկ,** *Յուշարձան...,* էջ 28, 46 (I, II հրտ.). **Բ. Պօզաճեան,** *նոյն տեղում,* էջ 104, 122, (I, II հրտ.), ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., թերթ 4. **Կ. Գէորգեան,** *նոյն տեղում,* էջ 172. **Ց. Սիրունի,** *Կոմիտասին հետ,*– «Էջմիածին», 1968-Դ, էջ 30. Նոյնի՝ *Կենսագրական նօթեր,* էջ 190, 286, 349. **Եր. Օտեան,** *Անիծեալ տարիներ...,* էջ 92, 566

14. Ենովք Շահէն [(Սոմունճեան ?), 1881, Պարտիզակ - 1915, Էնկիւրի)]: Դերասան՝ Մարտիրոս Մնակեանի թատերախմբում, ապա՝ Վահրամ Փափազեանի Դրամատիկում: Դաշնակցական: Վերապրող թուագէտ Գրիգոր Անգութի եղբայրն է: Ձերբակալուել է ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ, նահատակուել է՝ Էնկիւրիում[205]*:*

15. Քրիս Ֆէնէրճեան [(Սիլուիոյրիէի), (1884-1926)], դաշնակցական գործիչ, վերապրող: Սուլթան Աբդուլ Համիդի 1905թ. յունիս 21-ի մահափորձի կազմակերպիչներից: Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ, բուլղարահպատակ լինելով՝ ազատուել, մեկնել է Բուլղարիա[206]*:*

16. Ժագ Սայապալեան (Փայլակ, 1880, յունիս, Գոնիա - 1915, Այաշ Պէլի): Գրող, թարգմանիչ, հրապարակախօս, ազգ. երեսփոխան՝ ընտրուած Գոնիայից: Նախն. կրթութիւնը ստացել է ծննդավայրում, 1896-ին շարունակել՝ Կ. Պոլսոյ Պէրպէրեանում, ապա՝ Իզմիրի Ամերիկեան վարժարանում (երկու տարի(: 1904-ից մինչեւ 1909 թ. ծննդավայրում եղել է անգլ. հիւպատոսի թարգմանիչը: 1909-ին Կ. Պոլիս է անցել, ստանձնել Ճէհպալ հանդէսի տնօրինութիւնը: Տպագրուել է պոլսահայ մի շարք թերթերում ու հանդէսներում՝ «Վ.» ծածկանունով:

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ, նահատակուել է իր 23 ընկերների հետ, գնդակահարութեամբ՝ Այաշ Պելի կոչուած վայրում: Արշ. Ալպօյաճեանի նահատակաց մէջ է[207]*:*

17. Դոկտ. Աւետիս Նագգաշեան.– բժիշկ, հանր. գործիչ, վերապրող: Ապրիլի 12/25-ի լուսաբացին (կիրակի) տարուել է Բանկալթիի ոստիկանատուն, երեք ժամանց՝ Կ.Պոլսի կեդրոնական բանտ՝ մեհթերհանէ: Երեկոյեան ժամը 8-ին 220 ձերբակալուածները չորսական խմբից բաղկացած շարքերով քաղաքից դուրս են բերուել:

Նագգաշեանը այաշականների կազմում էր, եւ ազատուել է՝ 1915-ի յուլիսի 2-ին[208]*:*

18. Դոկտ. Խաչիկ Պարտիզպանեան.– բժիշկ., հանրային գործիչ, նահատակուած Էնկիւրիում[209]*:*

19. Դոկտ. Գ. Պօղոսեան.– Հաւաստի աղբիւրների համաձայն՝ անուանատառը՝ Գ., վրիպակ է. ըստ պրպտուած կենսագրականի՝ Ջլախտաբոյժ (Հոգեբոյժ) Խաչիկ Պօղոսեանն է. ծնուած 1875 թ. Սեբաստիայում: Նախնական կրթութիւնը ստացել է Կեսարիայում, 1888-92 թթ. ուսանել Կ. Պոլսոյ Ազգ. Կեդրոնական վարժարանում:

---

205 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Թէոդիկ,** *Յուշարձան...,* էջ 36, 54 (I, II հրտ.). **Բ. Պօզաճեան,** *նոյն տեղում,* էջ 106/124, 107/125 (I, II հրտ.). Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. **Եր. Օտեան,** *Անիծեալ տարիներ...,* էջ 92, 559. **Օտեան,** *Անիծեալ տարիներ,* *Սրտիս պարտքը,* էջ 25, **Վահրամ Փափազեան,** *Սրտիս պարտքը,* էջ 29,– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 324

206 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Թէոդիկ,**– «Ամէնուն տարեցոյցը», ԺԹ տարի, 1916-1920, էջ 115. **Ա. Նագգաշեան,** *նոյն տեղում,* էջ 17. **Հր. Տասնապետեան,** *նոյն տեղում,* էջ 84, 212, 236. **Եր. Օտեան,** *Թիւ 17 Խաֆիէն,* Գ. գիրք, էջ 293

207 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Թէոդիկ,** *Յուշարձան...,* էջ 24, 42 (I, II հրտ.). **Ա. Նագգաշեան,** *նոյն տեղում,* էջ 55. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. **Եր. Օտեան,** *Թիւ 17 Խաֆիէն,* Գ. գիրք, էջ 290. **Ց. Սիրունի,** *Կոմիտասին հետ,* գլ. Ժ - *Ճանապարհ Խաչի,* 1. - *Չարաշուք մանգաղը,*– «Էջմիածին», 1968-Դ, էջ 30

208 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Ա. Նագգաշեան,** *Ազ. յուշագր.,* էջ 3, 9, 17-18, 52. **Բ. Պօզաճեան,** *նոյն տեղում,* էջ 103/121, 109/127 (I, II հրտ.). **Եր. Օտեան,** *Անիծեալ տարիներ...,* էջ 225-226, 558,– «Էջմիածին», նոյն տեղում:

209 **Գ. Պալաքեան,** *նոյն տեղում.* **Վանիկ Հայրապետեան** (դեղագործ), *Ջոհ գնացին եաթաղանին.* տե՛ս **Ալբերտ Փարսադանեան,** *Թղթապանակ 1915,* էջ 31:

© National Library of Armenia

1893-ին ընդունուել է Կայսերական բժշկական համալսարան, սակայն 1895-ի կոտորածներից յետոյ հեռացել է երկրից, ուսումը շարունակել Լոզանում, եւ աւարտելով՝ 1901-ին վերադարձել Կ. Պոլիս:

1908-ին անցել է ռամկավար կուսակցութեան շարքերը, 1910-ին՝ Էնկիւրիի թեմից ընտրուել Կ. Պոլսոյ Ազգային ժողովի երեսփոխան: 1915-ի ապրիլի 11/24-ին երբ ձերբակալուեց՝ Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի հոգեբուժարանի բժշկապետն էր: Նախապէս աքսորուել է Զանղերը (տե՛ս համրիչի թիւ 12 – Կ. Ա.), տեղափոխուել է Այաշ, այնտեղից՝ Էնկիւրի, ապա՝ Թարսուս-Հալէպ: Վերապրողի իր հետագայ ազգօգուտ կեանքը շարունակել է Հալէպում, որտեղ եւ 1955-ի մարտի 29-ին կնքել է մահկանացուն[210]:

20. Դոկտ. Մելքոն Կիւլիստանեան.– Կ. Պոլիս վերադարձած վերապրող[211]:

21. Դոկտ. Կարապետ Փաշայեան.– Խան (1864, Կ. Պոլիս, Կէտիկ Փաշա - 1915, Էնկիւրի): Ակնաբոյժ, գրող, հրապարակախօս, ազգային, քաղաքական գործիչ, դաշնակցական:

Աւարտել է Կ. Պոլսոյ բժշկական համալսարանը 1888-ին, պաշտօնավարել Բալուում, Մալաթիայում, իբրեւ թաղեպետ. բժիշկ, 1889-ին հաստատուել է Տեւրիկում: 1890-ին Բագառիճում (Կամախ) ձերբակալուել է՝ յեղափոխական-հայդուկային խմբեր կազմակերպելու համար, նետուել Սվազի (Սեբաստիա) բանտը մահուան դատապարտութեամբ, 1891-ին, սակայն, ազատուել է՝ դատաւորի աչքը բուժելուն ի հատոյց: Մեկնել է Շապին Գարահիսար, կրկին ձերբակալուել՝ 1892-ի սեպտեմբերին: Դատավարութիւնը տեւել է երեք տարի, ի վերջոյ, աւարտուել՝ մահապատժի վճռով: Ներուել է՝ անգլիական դեսպանի կնոջ՝ տիկ. Ֆ. Քըրրի միջնորդութեամբ: 1895-ին անցել է Պարսկաստան, եօթ տարի մնացել Դավրէժում, դարձել է շահի պալատական բժիշկը, ստացել «Խան» տիտղոսը, հնարաւորինս օգտակար լինելով իրանահայ գաղութին: 1903-1906 թթ. մեկնել է Եգիպտոս, Ալեքսանդրիայում հրատարակել Հորիզոն թերթը՝ իր բացած «Կամպէթթայ» տպարանում: Եգիպտոսից նորից անցել է Պարսկաստան եւ Կ. Պոլիս է վերադարձել 1908-ին՝ «Հիւրիէթ»-ից յետոյ: Այստեղ թուրքական պառլամենտի մեպուս է ընտրուել Սվազից, Հայկ. Ազգ. ժողովի երեսփոխան՝ Խարբերդից (1912-ին): Ազատամարտի վարչակազմի անդամ էր: Աշխատակցել է թրքահայ եւ արտասահմանեան թերթերին ու հանդէսներին: Հեղինակ է բժշկագիտական ուշագրաւ ուսումնասիրութիւնների:

1915-ի ապրիլի 11/24-ին Կ. Պոլսում ձերբակալուել է, աքսորուել Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում: Արշ. Ալպոյաճեանի նահատակաց կազմում է[212]:

22. Դոկտ. Տիգրան Ալլահուէտի.– բժիշկ, Պատրիարքարանի ժողովի անդամ, Այաշից Կ. Պոլիս վերադարձած վերապրող[213]: (Այաշ է աքսորուել տարագրեալների 1-ին խմբի հետ):

210 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 114. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 176-177, 200, 215-216, 417, 561. Հայկ Պարիկեան, *Դիմաստուերներ հալէպահայ ազգային դէմքերու.- է - Տքթ. Խաչիկ Պօղոսեան,*– «Գեղարդ», Բ. գիրք, Հալէպ. 1976-78, էջ 153, 154, 156-158. Կ. Աւագեան, *Թանգարանային ցուցանմոյշն անխօս՝ ամենախօս վկայ...*, Մեծ Եղեռն - 90, Հանրապետական գիտական նստաշրջանի նիւթեր, էջ 130-131. Թորոս Թորանեան, *Եղեռնայուշ մասունք կամ խոսովանողք եւ վկայք խաչի»*, ներկայացնող՝ Թորոս Թորանեան,– «Նոր օր», մշակութային յաւելուած, նոյեմբեր, 2006, 11 (155)

211 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 88 (I, II հրտ.)

212 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 19, 37 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, էջ 106, 124 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, էջ 292. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 165-166. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 452

23. Արիստակէս Գասպարեան (1861, Ադանա - 1915, Այաշ Պէլի): Ազգային, հանր. գործիչ, իրաւաբան, քննադատ, երեսփոխան: 1880-91 թթ. ազգային, պետական եւ առեւտրական տարբեր պաշտօններ է վարել, ապա հաստատուել է Կ. Պոլսում, գործել իրաւաբանութեան ասպարէզում, մինչ տարագրուելը: Ազգ. երեսփոխան է ընտրուել Ադանայից, անդամակցել զանազան յանձնաժողովների: 1880-1910 թթ. ծանրակշիռ քննադատական յօդուածներ եւ օրէնսգիտական երկեր է հրատարակել հայ եւ թուրք մամուլում:

Ձերբակալուել է ապրիլի 11/24-ին, աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Այաշ Պէլի կոչուած վայրում:

Արշ. Ալպոյաճեանի նահատակաց կազմում է[214]:

24. Ներսէս Փափազեան [(1872, Աղուլիս (Կովկաս) - 1915, Էնկիւրի)]: Սքեմաթող Մաշտոց վրդ., դաշնակցական, Ազատամարտի խմբագիր: Գրող, հասարակական-քաղաքական եւ մշակութային գործիչ, գրաքննադատ, գրականութեան պատմաբան, ազգագրագէտ, խմբագիր, մանկավարժ, թարգմանիչ Վրթանէս Փափազեանի, ինչպէս նաեւ ազգ. ազատագրական շարժման անուանի դէմքերից՝ Կոմսի (Վահան Փափազեան, դաշնակցական) եղբայրն է: Մանկութիւնն անցել է Վանում, որտեղ էլ ստացել է նախն. կրթութիւնը: Կ. Պոլիս գալով աշխատել է Էֆտիգուլէի որբանոցում, ապա ուսումը շարունակել Արմաշի Դպրեվանքում, այնտեղ էլ ձեռնադրուել է վարդապետ, Տ. Մաշտոց անուանակոչումով: Որպէս հոգեւոր հովիւ ուղարկուել է Ամերիկա, ուր միաժամանակ աւարտել է Կոլումբիայի համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետը, անցել դաշնակցութեան շարքերը: Իննամեայ հովուութիւնից յետոյ մեկնել է Կովկաս, մասնակցել հայ-թաթարական ընդհարումներին: Էջմիածնից հեռացուել է ռուսական կառավարութեան պահանջով, մեկնել Պարսկաստան, որպէս Թեհրանի առաջնորդ (2 տարի): 1906-ին սքեմից հրաժարուելով դարձեալ Ամերիկա է մեկնել եւ Վռամեանի փոխարէն ստանձնել է Հայրենիքի խմբագրութիւնը: Կ. Պոլիս է վերադարձել 1908-ին: 1909-ին, Ազատամարտի հրատարակումից յետոյ, մինչ 1915-ի ապրիլի 11-ը խմբագրել է Թերթի հայկական բաժինը: Ձերբակալուել է չարաղէտ այդ օրը, աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում:

Արշ. Ալպոյաճեանի նահատակների կազմում է[215]:

25. Համբարձում Մ. Համբարձումեան (1890, Կ. Պոլիս - 1915, Էնկիւրի), խմբագիր, հրապարակախօս, դաշնակցական գործիչ: 1904-ին աւարտել է Կ.Պոլսի Էսաեան, 1909-ին՝ Կեդրոնական վարժարանները: Մօտ մէկ տարի աշխատել է Սուրհանդակում, Ազատամարտի հրատարակութեան առաջին օրերից (1909, յունիս), մինչեւ վերջին չարագոյժ ապրիլի 11/24-ը՝ եղել է այս թերթի աշխատակիցը: Յօդուածները տնտեսական, պետական-օրէնսդրական հարցերի շուրջ էին: Տիրապետելով օ-

213 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 6. Բ. Պօղաճեան, *նշ. յուշագր.*, էջ 109, 127 (I, II հրտ.). Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*,– «Էջմիածին», 1968, *նոյն տեղում*

214 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 32, 50 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103, 121 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 55. Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 547

215 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 36-37/54-55 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 170-171. Ց. Սիրունի, *նոյն տեղում*,– «Էջմիածին». նոյնը, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 114, 122, 125, 348, ՀՍՀ, հտ. 12, էջ 327. *Հայկական հարց...*, էջ 188, ՀՀՀ, հտ. 4, Եր., 2003, էջ 838-839

© National Library of Armenia

տյար լեզուների աշխատակցել է նաեւ տեղական ֆրանսերէն թերթերի, թղթակցել ՊերլիՆէր թակէպլաթ, ՔէօլՆիշէ ցայթուն, Իւմանիթէ թերթերին: Ձերբակալուել է ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում: Արշ. Ալպօյաճեանի նահատակաց ցանկում է[216]:

26. Գրիգոր Թորոսեան (Կիկօ) (1884, Ակն - 1915, Էնկիւրի): Ծածկանուններն են՝ Բանագող Լռութիւնեան, ընկեր Կիկօ: Քասիմի եւ Յ. Տէր Յակոբեանի յորդորով ընտրել է երգիծանքի ճիւղը: Մի՛ծաղաշարժ նիւթեր է տպագրել Մանգումէում, որի խմբագիրն էր: Սահմանադրութիւնից յետոյ Կավռօշի (Համրիչի թիւ 36-ը - Կ.Ա.), Օտեանի եւ Համբիկեանի հետ հրատարակել է Ծաղիկը որպէս երգիծաթերթ, 1909-ի ապրիլի 1-ից լոյս է ընծայել Կիկօն, երբեմն նոր անուանումներով՝ «Կուկուկ», Զուռնայ, Կինտօ, Հի-հի-հի նաեւ Խարազանը Արամ Անտոնեանից (Համրիչի թիւ 35-ը - Կ. Ա.), Երուանդ Օտեանից յետոյ: Հինգ տարի հրատարակել է Կիկոյի տարեցոյցը:

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել՝ Այաշ, նահատակուել է Էնկուրիում: Արշ. Ալպօյաճեանի նահատակների ցանկում է[217]:

27. Ռոստոմ Ռոստոմեանց [(Արիստակէս), 1861, Ալեքսանդրապոլ - 1915, Էնկիւրի]: Վաճառական, ազգանուէր գործիչ, ռուսահպատակ: 1879 թ. եկել է Կ. Պոլիս, դարձել «Գէորգոֆ» առեւտր. տան մասնաճիւղի ներկայացուցիչ, շուրջ քսան տարի: Ապա գործել է անհատապէս, ընդարձակել գործի գործառնութիւնը, մինչեւ իր՝ ապրիլի 11-ի տարագրումը Այաշ: Անկուսակցական էր, եւ յայտնի յեղափոխական դաշնակցական գործիչ Ռոստոմի անուանակիցը լինելով էր յայտնուել «սեւ ցուցակ»-ում: Արշ. Ալպօյաճեանի նահատակաց ցանկում է[218]:

28. Սմբատ Բիւրատ [(Տէր Ղազարենց) 1862, մարտի 3, Զէյթուն - 1915 օգոստոս, Այաշ-պէլի], գրող, մանկավարժ, հասարակական գործիչ, ազգ. երեսփոխան՝ ընտրուած ծննդավայրից, հնչակեան կուսակցութեան անդամ: 1871-80 թթ. ուսանել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում: 1880-82-ին՝ ուսուցիչ եւ տնօրէն էր Մարաշում, 1882-84-ին՝ Զէյթունի «Միացեալ»-ի ուսուցիչ: 1885-ին դպրոց է բացել Սսում, 1887-90-ին՝ Սամսոնում:

Իբրեւ հնչակեան գործիչ քարոզչութեամբ է զբաղուել գաւառներում եւ ձերբակալուել, հինգ տարի կնոջ հետ մնալով Մարաշի եւ Հալէպի բանտերում: Ազատ արձակուելով Կ. Պոլիս է եկել, մէկ տարի պաշտօնավարել Գատըքէոյի Արամեան դպրոցում: 1896-ին փախել է Եգիպտոս: Կահիրէում եւս կարողացել է դպրոց հիմնել, հրատարակել է Փիւնիկ եւ Նոր օր թերթերը: 1904-06 թթ. Ալեքսանդրիայի Ազգ. դպրոցի տնօրէնն էր: Կրկին Կ. Պոլիս է վե-

216 Գ. Պալաքեան, *Ազ. յուշագր.*, էջ 88, 89 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 21, 39 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Նոյն տեղում*, էջ 103/121, 106/124 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 553. Կ. Գէորգեան, *Նոյն տեղում*, էջ 171. Ց. Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 37-38, 40-41, 44, 63-64, 73, 82, 125, 167, 179, 182, 335

217 Գ. Պալաքեան, *Նոյն տեղում*. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1910, Դ տարի, էջ 296, 299. Նոյնը, *Յուշարձան...*, էջ 25, 43 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Նոյն տեղում*, էջ 105-106, 123-124 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *Նոյն տեղում*, էջ 6, 54. ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, էջ 287. Նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 90, 509, 550. Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*,– «Էջմիածին», 1968-դ, էջ 30. Նոյնը, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 113-114, 122, 332

218 Գ. Պալաքեան, *Նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 42, 60 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Նոյն տեղում*, էջ 103/121, 107/125 (I, II հրտ.). Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 561. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4,– «Էջմիածին» 1968-դ, էջ 30

բադարձել երիտթուրք. յեղաշրջումից յետոյ, լծուելով դարձեալ ուսուցչական, լրագրողական աշխատանքներին: Շարունակել է Փիւնիկի լոյս ընծայումը, 1909-ի օգոստոսի 20-ից՝ հրատարակել Գաղափար երեկոյեան օրաթերթը՝ 42 համար (մինչեւ հոկտեմբեր 13-ը): Տիրապետում էր գրաբարին, ֆրանսերէնին: Վէպերը ազգային-յեղափոխական կեանքի արտացոլումն էին՝ Աւարայրի արծիւը կամ Վարդանանք (1909), Արիւնի ճամբուն վրայ (1911), Ազատութեան համար. Զէյթունի վրէժը (1911), եւն: Նոյն 1911-ին հրատարակուել է նաեւ Արեւելեան խնդիր եւ Հայկական հարց. պատմական ուսումնասիրութիւնը: Ծածկանուններն էին՝ Թաք, Հայկ-Լեւոն, Մտրակ, Լեւոնորդի:

1915-ի ապրիլի 11/24-ին ձերբակալուել, տարուել է Այաշ, սպանդ է քշուել իր վերջին 23 ընկերների հետ, ամենայն հաւանականութեամբ՝ օգոստոսին: Թէոդիկի Յուշարձան...-ում ամփոփուած են Այաշից ընտանիքին հասցէագրուած հակիրճ հինգ քարտ-նամակները:

Արշ. Ալպօյաճեանի նահատակաց կազմում է[219]:

29. Մելքոն Կիւրճեան.– Հրանդ (1859 սեպտ., Բալուի Հաւաւ գ. - 1915, Էնկիւրի, յուլիսի վերջ-օգոստոս), գրող (գիւղագիր), հրապարակախօս, մանկավարժ, հանրային գործիչ, երեսփոխան, յայտնի դաշնակցական: 1870-75 թթ. սովորել եւ աւարտել է Կ. Պոլսի Սկիւտարի ճեմարանը, 1875-77-ին՝ Ս. Խաչ վարժարանը: 1878-96 թթ. զբաղուել է ուսուցչութեամբ՝ Ռոդոսթոյում, Կ. Պոլսի Էսայեան, Ղալաթիոյ Կեդրոնական, Սամաթիոյ Նունեան - Վարդուհեան, Մեզպարեան եւ այլ վարժարաններում, դասաւանդելով գրաբար եւ աշխարհաբար, հայ դպրութիւն: 1896-ի կոտորածներին փախել է Վառնայ, ուր օրիորդ Արմէնուհի Մինասեանի հետ հիմնել է Արծրունեան վարժարանը: 1898-ին վերադարձել է Կ. Պոլիս, օգոստոսի 2-ին ձերբակալուել եւ վեց ամիս անց աքսորուել է Գասթէմունի՝ մինչեւ 1908-ը: Այնտեղ էլ ապրել է ուսուցչութեամբ:

1883-ից թղթակցել է պոլսահայ թերթերին՝ (Մասիս, Արեւելք, Հայրենիք, Բիւզանդիոն, Սուրհանդակ եւն) անստորագիր, կամ Պոնտացի, Թղթակից ի Պոնտոս ծածկանուններով: Ստորագրել է նաեւ՝ Հրանդ, Շահէն, Աւր գրական անուններով: 1906-ին ոստիկանութիւնը խուզարկել է եւ աքսորավայրի կացարանը, ոչնչացրել բոլոր ձեռագրերը:

1908-ի երիտթուրք. յեղաշրջումից յետոյ վերադարձել է Կ. Պոլիս, դասաւանդել Կեդրոնական, Պէրպէրեան, Գումգաբուի Ազգային վարժարաններում, Բերայի Ֆոռի եւ Մադամ դը Վոյի վարժարանում, մինչ 1915-ի ապրիլի 11/24-ի ձերբակալութիւնը եւ աքսորը Այաշ, որտեղից կնոջը գրած երկտողից պարզւում է, որ 33 ընկերներով Էնկիւրիի սպանդ են տարուել յուլիսի 28-ին: Ականատեսի վկայութեամբ ողջամբ թաղուել է...

Արդ, Ալպօյաճեանի նահատակաց կազմում է[220]:

219 Գ. Պալաքեան, *Նոյն տեղում*. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1910, Դ տարի, էջ 293. Նոյնը, *Յուշարձան...*, էջ 20/21, 38/39 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Նոյն տեղում*, էջ 103/121, 105/123 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *Ազ. յուշագր.*, էջ 8, 39, 55. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Վաղինակ Բիւրատ, *Սմբատ Բիւրատ (Տէր Ղազարենց)*. տե՛ս «Սովետական գրականութիւն», 1965, ապրիլ, էջ 76-79. Նոյնը, *Իմ կեանքի յուշերից*, ԳԱԹ, Եր., 1999. Կ. Գէորգեան, *Նոյն տեղում*, էջ 171. Ց. Սիրունի, *Նոյն տեղում*, էջ 45, 113, 124, 138, 328, ՀՍՀ, հտ. 2, Եր., 1976, էջ 481, ՀՀՀ, հտ. 1, էջ 545. *Հայկական հարց...*, էջ 86, 87, 241, 260, 305. *Ով՝ ով է*, հտ. 1, էջ 231

220 Գ. Պալաքեան, *Նոյն տեղում*. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1910, Դ տարի, էջ 168. Նոյնը, *Յուշարձան...*, էջ 11, 29 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *Նոյն տեղում*, էջ 107/125 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *Նոյն տեղում*, էջ 23. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1, 4. Կ.

© National Library of Armenia

30. Թէոտոր Մեծիկեան (Մենծիկեան).- վաճառական: Դաշնակցութեան համակիր: Սկզբնապէս եղել է Ս. եւ Ք. Տամատեան վաճառատան տոմարակալը, ապա հիմնել է սեփական առեւտրական տունը՝ Գաթըրճը օղու խանի տակ: Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում[221]:

31. Գէորգ Թէրճիմանեան (1886, 11.03, Կեսարիա - 1915, Էնկիւրի), վաճառական, անկուսակցական: Նախն. կրթութիւնը ստացել է ծննդավայրում, շարունակել՝ Կ. Պոլսի Գատըքէոյի Արամեան եւ Պարտիզակի Ամերիկեան վարժարաններում: Գործել է առեւտրի ասպարէզում, բայց զբաղուել է նաեւ գրականութեամբ:

Գատըքէոյում հիմնել է «Մասիս» մարմնամարզական միութիւնը, որի ատենապետն ու արտօնատէրն էր, եւ ենթադրւում է՝ այդ պատճառով էլ ձերբակալուել եւ աքսորուել է Այաշ: Նահատակուել է Էնկիւրիում[222]:

32. Հայկ Թիրէաքեան (1855-?), նպարավաճառ՝ Բերայից: Այաշ է աքսորուել նոյնանուն ազգանուանակիցը լինելով դաշնակցական Հրաչի[223], որի վեհանձնութեան շնորհիւ ազատուել է աքսորից, մինչդեռ Հրաչը իր իսկ դիմումով Զանգը-

Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 163. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 553. Ց. Սիրունի, *նոյն տեղում*, էջ 69, 180, 297, 334, ՀՍՀ, հտ. 5, Եր., 1979, էջ 494. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 187, 241, ՀՀՀ, հտ. 2, էջ 707. Պերճ Ստեփանեան, *Հրանդ (Մելքոն Կիւրճեան)*,– «Սովետական գիտարան», 1965-4, էջ 63-66. *Ով՝ ով է*, հտ. 1, էջ 565:

221 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 44/62 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103/121 (I, II հրտ.)

222 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 40, 58 (I, II հրտ.)

223 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 88/89, 109/108 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 17, 32-33

ըրից Այաշ է տեղափոխուել, նահատակուել՝ Էնկիւրիում (տե՛ս համրիչի թիւ 76-ը - Կ. Ա.):

33. Խաչիկ Իտարէճեան.- ուսուցիչ, Ճէտիտիէ փողոցի բնակիչ: Ձերբակալուել է ապրիլի 11/24-ին, աքսորուել է Այաշ, հաւանաբար աւագ եղբօր՝ Միհրանի հետ շփոթութեամբ, քանզի վերջինս էր տարագրեալ Ազատամարտականների ընկերակիցը՝ Թերթի վարչական պաշտօնեայ լինելով[224]:

34. Մկրտիչ Յովհաննէսեան.- ուսուցիչ, դաշնակցական գործիչ: Աղէտին աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում[225]:

35. Մկրտիչ Յովհաննէսեան.- վերոնշեալ (թիւ 34 - Կ. Ա.) ուսուցչի անուն-ազգանուանակիցը, Կ. Պոլիս վերադարձած վերապրող[226]:

36. Սարգիս Աբօ.- կովկասահայ ուսուցիչ, դաշնակցական գործիչ: Նահատակուել է Էնկիւրիում[227]:

37. Աբրահամ Հայրիկեան (1870, Ռոտոսթո - 1915, Էնկիւրի): Տաճկագէտ, ազգային երեսփոխան: Նախն. կրթութիւնը ստացել է ծննդավայրում: Մինչ Կ. Պոլիս մեկնելը ուսուցչութեամբ է զբաղուել քաղաքի Ս. Խաչ թաղի դպրոցում, նաեւ Զօրլուում: Կ. Պոլսում շարունակել է ուսուցչի աշխատանքը, կատարելագործուել մասնագիտութիւնների ասպարէզներում, որոնք էին՝ թուրքերէնն ու աշխարհագրութիւնը: 1909-ին Բերայի Նշան Թաշում հիմնել է «Արդի» վարժարանը, որն ապա փոխադրել է Օրթաքէո:

Արհաւիրքին աքսորուել է Այաշ, նահակուել՝ Էնկիւրիում[228]:

224 Գ. Պալաքեան, *նշ. աշխ.*, էջ 88, 89 (I, II հրտ.). Ց. Սիրունի, *նշ. յուշագր.*, էջ 151, 333

225 *Նոյն տեղում*

226 *Նոյն տեղում*

227 *Նոյն տեղում*

38. Լեւոն Շամտանճեան.- Այաշ է աքսորուել եղբօր՝ Զանգըրրի աքսորական Միքայէլ Շամտանճեանի (տե՛ս համրիչի թիւ 41-ը - Կ. Ա.) փոխարէն, Կ. Պոլիս է վերադարձել՝ դիմումով[229]:

39. Բիւզանդ Պօղաճեան.- Ազգային երեսփոխան, վերապրող: Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 13/26-ին: Մէկ շաբաթ Կ. Պոլսի կենտրոնական բանտում մնալուց յետոյ 29 բանտարկեալների մի մասը տարագրուել է Այաշ, իսկ միւսներն՝ ուղարկուել են Զանգըրը (սա ապրիլեան աքսորեալ մտաւորականութեան 2-րդ քարաւանն էր):

1915-ի յունիսի 12-ի գիշերը, Այաշից Կ. Պոլիս՝ հետդարձի ճանապարհն է բռնել՝ դիմումով ազատուած իր չորս ընկերների հետ[230]:

40. Գեղամ Բարսեղեան (1883, Կ. Պոլիս - 1915, Էնկիւրի), գրող, խմբագիր, հրապարակախօս, ուսուցիչ, դաշնակցական գործիչ: 16 տարեկանից աշխատակցել է պոլսահայ մամուլին: 1908-ի դեկտեմբերի 16-ից Վ.Թաթուլի եւ Շ.Մխսաքեանի հետ խմբագրել է Ազդակ գրական, հասարակական, քաղաքական շաբաթաթերթը, 1914-ին Կ. Զարեանի, Ց. Քիւֆէճեանի (Օշական), Ահարոնի հետ՝ Մեհեանը: Հանդէսի հանգանակը ստորագրել է նաեւ Դանիէլ Վարուժանը (համրիչի թիւ 40-ը - Կ. Ա.):

Ազատամարտի հրատարակման առաջին օրերից (10 յունիս, 1909), օրաթերթի խմբագիրներից էր՝ մինչեւ փակուելը... 1915-ի ապրիլի 11/24-ին, որտեղից էլ ձերբակալուելով աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում:

Արշ. Ալպօյաճեանի նահատակաց ցանկում է[231]:

41. Յովհաննէս Գըլըճեան (1878, Տիւրիկ-1915, Էնկիւրի), հրատարակիչ, գրավաճառ՝ Զաքմաքճըլարում, հնչակեան գործիչ: Նահատակ Պարոյր (Գրիգոր) Հայկազնի եղբայրն է: Այաշ է աքսորուել մտաւորականութեան երկրորդ խմբի հետ, նահատակուել՝ Էնկիւրիում[232]:

42. Օննիկ Ժիրայր.- Օննիկ Սրապեան (1878, Երզնկա - 1915, Էնկիւրի), ուսուցիչ, հրատարակիչ, դաշնակցական գործիչ: Նախնական կրթութիւնը ստացել է ծննդավայրում: Ընտանիքով տեղափոխուել է Ֆիլիպէ (Պլոբդիւ), պաշտօնավարել Գուլումճեան վաճառատանը: Սահմանադրութիւնից յետոյ Կ. Պոլիս վերադառնալով՝ Բարթող Զօրեանի հետ հիմնել են «Լուսաղբիւր» հրատարակչութիւնը՝ Օնիկ-Ժիրայր ազգագրով: Գործակցի հետ էլ աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում: Զանգըրրի աքսորական Նոյիկ Տէր-Ստեփանեանի ազգականն էր[233] (տե՛ս համրիչի թիւ 83-ը - Կ. Ա.):

228 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 40, 58 (I, II հրտ.)

229 Գ. Պալաքեան, *նշ. յուշագր.*, էջ 89 (I, II հրտ.), Թ-ԺԴ տարի, էջ 115

230 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Բ. Պօղաճեան, *Դէպի Այաշ.- հին ու նոր յուշեր*. տե՛ս Թէոդիկ, *Յուշարձան*, էջ 98/116, 99/117, 100/118, 101/119, 103/121, 109/127, 110/128 (I, II հրտ.). Նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, էջ 115:

231 Գ. Պալաքեան, էջ 89 (I, II հրտ.). Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1910, Դ տարի, էջ 288. Նոյնը, *Յուշարձան...*, էջ 26, 44 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, էջ 285. Նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 546. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 164, ՀՍՀ, հտ. 2, Եր., 1976, էջ 337. Նոյնը, հտ. 11, Եր., 1985, էջ 348,– «Հայկական համառօտ հանրագիտարան», հտ. 1, էջ 503. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 10. «Սովետական գրականութիւն», 1965, թիւ 4, էջ 61. Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ*,– «Էջմիածին», 1968, Դ, էջ 30

232 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 46, 64 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103, 121 (I, II հրտ.). Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն...*, Գ. գիրք, էջ 285

233 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 45, 63 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 109, 127 (I, II հրտ.)

© National Library of Armenia

43. Լեւոն Լարենց.- Քիրիշճեան, (1875, Կ. Պոլիս, Սամաթիա - 1915, Էնկիւրի): Նորավիպագիր (նովելիստ), բանաստեղծ, ուսուցիչ, խմբագիր, թարգմանիչ, վերակազմեալ հնչակեան գործիչ: Աւարտել է Կ. Պոլսի Ռոպէրթ քոլեճը: Որոշ ժամանակ աշխատել է Բիւզանդիոնում, ապա քաղաքական պատճառներով մեկնել է Ամերիկա եւ իր վերակազմեալ հնչակեան ընկերների հետ Բոստոնում հրատարակել է Ձայն հայրենեաց թերթը: Յետոյ անցել է Եգիպտոս, Արփիար Արփիարեանի սպանութիւնից յետոյ ուղեւորուել Աթէնք, որտեղից, սահմանադրութեան հռչակումից յետոյ վերադարձել է Կ. Պոլիս: 1908-ի հոկտ. 23-ին այստեղ լոյս է ընծայել Ձայն հայրենեաց շաբաթաթերթը (խմբագրապետն էր), 1912-ի սկզբներից՝ Մուրճ օրաթերթը: Անգլերէնից հայերէն է թարգմանել Ղուրանը եւ Լինչի երկհատոր Հայաստանը: «Ֆրանս. յեղափոխութեան պատմութիւն»-ը թարգմանել է Բ. Հատորից:

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել է Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում: Արշակ Ալպոյաճեանի նահատակաց ցանկում է[234]:

44. Տիգրան Զէօկիւրեան (1884, Կիւմիւշխանէ - 1915, Էնկիւրի): 1895-ի կոտորածներից որբանալով, 1897-ին յայտնուել է Գաղաթիոյ Կարմիր Վանքի որբանոցում, ապա այլ որբերի հետ տեղափոխուել Կ.-Պոլսի Էէդիկուլէի ազգ. որբանոց, այնտեղից՝ Պերպերեան վարժարան, որն աւարտել է 1903-ին (1907?): Նոյն վարժարանում երկար ժամանակ դասաւանդել է հայոց լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, օտար ազգաց մատենագրութիւն: Դասաւանդել է Կ. Պոլսահայ նաեւ այլ վարժարաններում, միաժամանակ ստեղծագործելով: 1910-ին Զարդարեան գրատան կողմից լոյս է տեսել նրա Հայրենի ձայներ նորավէպերի ժողովածուն, 1914-ին՝ Վանքը վէպը (օրագրային կառուցուածքով): 1911-1912 թթ. Միքայէլ Շամտանճեանի (համրիչի թիւ 41-ը - Կ. Ա.) հետ հրատարակել է Ոստան եռամսեայ գրական պարբերաթերթը, կատարել է նաեւ յաջողուած թարգմանութիւններ: 1915-ի ապրիլի 11/24-ին ձերբակալուել է, աքսորուել Այաշ, նահատակուել՝ Էնկիւրիում:

Արշ. Ալպոյաճեանի կազմած նայատակների ցանկում է[235]:

45. Ղազար Ղազարեան.- Ղազարոս Ղազարոսեան (Մարզպետ), 1878, Թումարզա (Թամզարա) (Կեսարիա) - 1918, Նիսիպին: Ուսուցիչ, դաշնակցական գործիչ:

Մանկուց որբացած, նախնական կրթութիւնը ստացել է Կ. Պոլսի Պէզճեան վարժարանում, ապա հօրեղբայրն ուղարկել է Միւնիխ (Միւնխեն), որտեղ մանկավարժական կրթութիւն է ստացել: Այնտեղից մեկնել է Բուլղարիա, որոշ ժամանակ զբաղուել ուսուցչութեամբ, ապա դաշնակցութեան հրահանգով անցել է՝ Պարսկաստան, որպէս դաշնակցութեան ներկայացուցիչը՝ Խոյում: Այստեղ մասնակցել է պարսկական յեղափոխութեան կռիւներին, դարձեալ կուսակցական առաքելութեամբ՝ հասել է Վան ու Բիթլիս: Մասնակցել է նաեւ հայ-թուրքական ընդհարումներին, ստանձնել զէնքի փոխադրութեան գործը:

234 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1910, Դ. տարի, էջ 72, 302. նոյնը, *Ցուշարձան...*, էջ 19, 37 (I, II հրտ.). Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 551. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 172

235 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 27, 45 (I, II հրտ.). Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Եր. Օտեան, *նշ. յուշագր.*, էջ 92, 560. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 171. Գ. Ամատեան, *Ցուշեր նահատակների մասին.- Տիգրան Զեօկիւրեան*, տե՛ս «Սովետական գրականութիւն», 1965, թիւ 4, էջ 79-80,– «Հայկական հարց հանրագիտարան», էջ 241, 305, 373:

Սահմանադրութեան հռչակումից հէոտ հաստատուել է Կ. Պոլսում, նշանակուել Եէնի Գաբուի վարժարանի տեսուչ, ապա՝ տնօրէն: Կուսակցական գործերով կրկին մեկնել է Բուլղարիա եւ վերադարձել՝ 1-ին համաշխարհային պատերազմի սկզբներին: Սարսափի օրերին թաքնուել է, սակայն, ի վերջոյ ձերբակալուել եւ աքսորուել է Այաշ՝ հայ տարագրեալների երկրորդ քարաւանի հետ: Այաշից ազատուելով թաքցրել է ինքնութիւնը, շնորհիւ գերմաներէնի եւ քրդերէնի անթերի իմացութեան, ճանապարհաշինութեան գերմանացի ղեկավարներին ներկայացել է որպէս Գերմանիայում ուսած քուրդ աշիրապետի որդի՝ ստանձնելով ընկերութեանը աշխատուժ հայթայթողի պաշտօնը: Այսպիսով, կարողացել է գործով ապահովել բազմաթիւ տարագիր հայերի, միաժամանակ փրկել է նաեւ հայուհիների, որոնց իբր իր յարեմն էր տանում՝ որպէս քուրդ շէյխ:

Մահացել է զինադադարից քիչ առաջ՝ ձիուց վայր ընկնելով, թաղուել է թուրքական գերեզմանոցում[236]:

46. Յարութիւն Գոնէալեան (1877, Կեսարիա - 1915, Էնկիւրի), դերձակ, դաշնակցական: 1901-1908 թթ. դերձակութիւն է արել Կրետէ կղզում, Կ. Պոլիս է վերադարձել սահմանադրութեան հռչակումից յետոյ, շարունակելով զբաղուել իր արհեստով: 1913 թ. Լոնդոնեան ցուցահանդէսին մրցանակ է ստացել՝ ճերմակ ապրշումից կարած սմօքինկի համար (կարերն անտեսանելի էին ընդհանրապէս):

Այաշ է աքսորուել, հաւանաբար, տարագրեալների առաջին քարաւանի կազմում, նահատակուել՝ Էնկիւրիում[237]:

47. Միհրդատ Հայկազն (1864, Կ. Պոլիս, Պէշիքթաշ - 1915, Էնկիւրի), հովանոցավաճառ, հանրային գործիչ, դաշնակցական, Ազգային երեսփոխան: Աւարտել է ծննդավայրի Մաքրուհեան դպրոցը, 1883-ից ընդգրկուել յեղափոխական գործունէութեան ոլորտ, որի արդիւնքում Նէճիպ Մէլհամէի ձեռամբ աքսորուել է Տրիպոլիս: Սահմանադրութեան հռչակումից յետոյ Կ. Պոլիս գալով բեմադրել է տուել իր կրած տառապալից կեանքը եւ իրեն հալածողների գործելակերպը: Իզմիրլեանի եւ յաջորդի ընտրութեան կապակցութեամբ երկիցս Էջմիածին է ուղեւորուել՝ որպէս պատգամաւոր: Հովանոցավաճառութիւնը բարձրթողի արած զբաղուել է ազգային, հանրային գործունէութեամբ, Ռոդոսթոյից ընտրուել է Ազգ. երեսփոխան, ստանձնել է Պէշիքթաշի «Ահարոնեան ակումբ»-ի նախագահութիւնը:

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, մտաւորականութեան առաջին խմբում աքսորուել Այաշ, նահատակուել է Էնկիւրիում: Ներառուած է Արշ. Ալպոյաճեանի կազմած նահատակաց ցանկում[238]:

48. Պետրոս Գալֆաեան (1868, Իշմէ (Խարբերդ - 1915, Այաշ Պէլի), հանրային գործիչ, առեւտր. ասպարէզից, Ազգ. երես-

236 Գ. Պալաքեան, *նշ. յուշագր.*, էջ 89, 90 (I, II հրտ.). Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 31-32/49-50 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 101/119, 109/127 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէէ*, Գ. գիրք, էջ 288. Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 167. Հր. Տասնապետեան, *նշ. աշխ.*, էջ 227. Ց. Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 171-172, 337

237 Գ. Պալաքեան, *նշ. յուշագր.*, Թէոդիկ, *Ցուշարձան...*, էջ 45, 63 (I, II հրտ.)

238 Գ. Պալաքեան, *նոյն տեղում.* Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1912, Զ տարի, էջ 390. նոյնը, *Ցուշարձան...*, էջ 41, 59 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նշ. յուշագր.*, էջ 103, 121 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նշ. յուշագր.*, էջ 6, 23. ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէէ*, Գ. գիրք, էջ 288. նոյնը, *Անիծեալ տարիներ...*, էջ 92, 553. Ց. Սիրունի, *Կոմիտասին հետ.- Մանապար Խաչի*, 1. - *Չարաշուք մանգաղը*,– «Էջմիածին», 1968, Դ, էջ 34

© National Library of Armenia

փոխան, յայտնի հնչակեան, կուսակցական ծածկանունը՝ Որդոտնունի: 12 տարեկանում որբանալով Կ. Պոլիս է բերուել, որդեգրուել Պալաթի Արիստ. քահանայ Գալֆաեանի կողմից, եւ ընդունել է նրա ազգանունը: Ուսումը ստացել է Խօրէնեան դպրոցում, մտել առեւտրի ասպարէզ: Իր ջանքերով բացուել է թաղի մանկապարտէզը:

Երիտասարդ հասակում անցնելով հնչակեան կուսակցութեան շարքերը մասնակցել է 1890-ի Գումգաբուի ցոյցին, ապա քարոզչական առաքելութեամբ մեկնել Ա. Փազար (Ադաբազար - Կ. Ա.): 1894-ին փախել է Աթէնք, այնտեղից՝ Ռումինիա եւ Բուլղարիա՝ որպէս հնչակեան մասնաճիւղերի ներկայացուցիչ: Քէօսթէնճէի օսմ. հիւպատոսը յաջողել է տեղի կառավարութեան ձեռամբ ձերբակալել տալ նրան ու Մ.Տամատեանին եւ Կ. Պոլիս ուղարկել: Անգլիական նաւապետի շնորհիւ երկուսն էլ, ի վերջոյ, իտալական շոգենաւով անցել են Լոնդոն: Այստեղից Պ. Գալֆաեանը մեկնել է Ռուսճուք, ուր առեւտրական գործունէութիւնից զատ, մի քանի ընկերներով հրատարակել է Վերածնութիւն շաբաթաթերթը, որը յետոյ Փարիզում շարունակուել է Ապագա խորագրով: 1910-ին վերադարձել է Կ. Պոլիս, Հայկ. բանկում ստանձնել յանձնակատարի գործը, որպէս Շխեանց եւ Խաչատրեանց քարիւղի (նաւթ) տան ներկայացուցիչ: Ազգ. երեսփոխան է ընտրուել Ալթը Մէրմէրից:

Այաշ է աքսորուել 1915-ի մայիսի 4-ին՝ անյատակի, ամենայն հաւանականութեամբ՝ նահատակուել է Այաշ Պէլի վայրում[239]:

239 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 33/34, 51/52 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 55 (Գ. Պալաքեանի այաշականների ցանկի կենսագրականում, նոյն տեղում, շփոթութիւն է նկատւում Զանղրրի աքսորական, դաշնակցական Յարութիւն Գալֆայեանի (համրիչի թիւ 80-ը - Կ. Ա.) կենսագրութեան համեմատութեամբ):

49. Պետրոս Գալֆաեան.- վաճառական: Հնչակեան Պետրոս Գալֆաեանի (տե՛ս վերոյիշեալ թիւ 48-ը) նոյնանունազգանունանակիցը լինելով՝ աքսորուած Այաշ, նահատակուած Էնկիւրիում[240]:

50. Կարապետ Թաշճեան.- նահատակուած՝ Էնկիւրիում[241]: Նոյնանուն-ազգանունանակիցը՝ մսավաճառ, աքսորուել էր Զանղրրը եւ երեք ամիս անց՝ վերադարձել Կ. Պոլիս (տե՛ս համրիչի թիւ 60-ը, ծնթ. 122 - Կ. Ա.):

51. Իւրութիւն Աստուրեան, կամ Աստատուրեան՝ նահատակուած Էնկիւրիում: Նոյնանուն-ազգանունանակիցը՝ տպարանատէր, դիմումով ազատուել է[242]:

52. Կարապետ Սարաֆեան.- մաքսային պաշտօնեայ, նահատակուած Էնկիւրիում[243]:

53. Վռամշապուհ Սամուէլօֆ (1880, մարտի 13, Կ. Պոլիս, Սամաթիա - 1915, Այաշ Պէլի), դրամափոխ, հանրային եռանդուն գործիչ, ռուսահպատակ: Երկար տարիներ պաշտօնավարել է Հ. Սթամպոլչեանի վաճառատանը, ապա հիմնել է իր սեփական դրամափոխարանը (սեղանաւորական տունը): Զինուորական ծառայութիւնը կատարել է Օդեսայում: Գործուն դեր է ունեցել ծննդավայրի Սահակեան Սանուց ընկերութեան մէջ, իսկ սահմանադրութեան հռչակումից յետոյ նուիրուել է ազգօգուտ ձեռնարկների: Երկու տարի եղել է Սամաթիայի երկսեռ վարժարանի հոգաբարձու, անդամակցել է Ադանայի եղեռնից յետոյ կազմուած «Որբախնամ-այրիախնամ»-ին եւ «Աշխատանքի տանը», եղել է նաեւ «Հայ կարմիր խաչի»-ի գանձապետ:

240 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

241 *Նոյն տեղում*

242 *Նոյն տեղում*. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, էջ 115. Բ. Պօղաճեան, *Ազ. յուշագր.*, էջ 109, 127 (I, II հրտ.)

243 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ, նահատակուել է՝ Այաշ Պէլի վայրում: Ընդգրկուած է Արշ. Ալպօյաճեանի նահատակաց ցանկում, արձանագրուած՝ Վ.Սամուէլեան[244]:

54. Սարգիս Արմտանցի.- նահատակուել է Էնկիւրիում[245]:

55. Խաչիկ Պէրպէրեան.- ուսուցիչ, Կ. Պոլիս վերադարձած վերապրող[246]:

56. Վրթանէս Մարտիկեան.- Այաշի աքսորական, վերապրող: Տարագրուել եւ Այաշ է հասել 12 հոգուց բաղկացած երկրորդ խմբի կազմում: Ազատուել է մի քանի ամիս անց, վերադարձել Կ. Պոլիս: 1918-ի նոյեմբերի 20-ից անուանափոխութեամբ վերաբացուած Ազատամարտի (Արդարամարտ, Արիամարտ, Ճակատամարտ) արտոնատէրն էր[247]:

57. Միհրան Աղաճանեան.- դրամափոխ (սեղանաւոր): Յայտնի է՝ ուսեալ երիտասարդ լինելը եւ այն, որ Այաշից տարուել է Կ. Պոլիս ու Հարպիէի առջեւ կախաղան հանուել[248]:

58. Նշան.- կիտուածանկարիչ, Գումգաբուի բնակիչ, նահատակուած Էնկիւրիում[249]:

244 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 42, 60, (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103/121, 107/125 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 23, 55, ԳԱԹ. Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4

245 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

246 *Նոյն տեղում*

247 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, էջ 274. Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103/121, 106/124 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 34. Յ. Սիրունի, *Կոմիտասին հետ*,– «Էջմիածին», 1968, Դ, էջ 30. նոյնը, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 168, 337

248 Գ. Պալաքեան, *նշ. յուշագր.*, էջ 90 (I, II հրտ.). Ա. Նագգաշեան, *նշ. յուշագր.*, էջ 43

249 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*

59. Տիգրան Աճէմեան.- Այաշի աքսորական, վերապրող: Ըստ Գ. Պալաքեանի՝ «վերադարձած Կ. Պոլիս»: Աքսորակից վերապրող Աւետիս Նագգաշեանի յուշագրութեան համաձայն՝ «Տիգրան Աճէմեան մը կար, որ կ'երեւի գրագէտ Աճէմեանի մը տեղ բերուած էր: Մարդը Անգարացի էր եւ մէկ բառ հայերէն չէր գիտէր (ազատ արձակուեցաւ)»[250]:

60. Մարկոս Սէֆէր.- փաստաբան, վերապրող: Պատմաբան, խմբագիր, մանկավարժ, Ազգային երեսփոխան Մարկոս Նաթանեանի փոխարէն աքսորուած եւ վերադարձած: Մ. Նաթանեանը Թէոդիկի դիմումով աքսորից (Զօրում-Իսքիլիպ ընթացքով) ազատուածների խմբում է: Այս նոյն ցանկում արձանագրուած է. «Գարթալցի փաստաբան Սէրուէթ» ազգանունը՝ այաշականների կազմում[251]: Արդեօ՞ք տարբեր անձիք են Սէֆէրն ու Սէրուէթը, թէ տառաշփոթ է եղածը. դեռեւս պարզաբանման, ճշգրտման կարիք կայ:

61. Սերոբէ Նորատուն̆կեան (1884, Սղերդ - 1915, Էնկիւրի): Սանասարեան վարժարանի ընթացաւարտ, թուրքերէնի ուսուցիչ, դաշնակցական գործիչ, Ազգային երեսփոխան՝ ծննդավայրից: Նահատակուել է Էնկիւրիում, ընդգրկուած է Արշ. Ալպօյաճեանի հաւաքագրած նահատակների ցանկում[252]:

62. Բարթող Զօրեան.- ժիրայր (1879, 01.01, Թամզարա (Թումարզա) - 1915, Էնկիւրի): Հրատարակիչ, դաշնակցական գոր-

250 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Ա. Նագգաշեան, *նոյն տեղում*, էջ 32:

251 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, էջ 115. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէէն*, Գ. գիրք, էջ 289, Յ. Սիրունի, *Ինքնակենսագրական նօթեր*, էջ 35, 36, 91, 339

252 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 39, 57 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 106/124, 107/125 (I, II հրտ.). Արշ. Ալպօյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 4:

© National Library of Armenia

ծիչ, ազգային երեսփոխան՝ ընտրուած Շապին Գարահիսարից: Նախնական կրթութիւնը ստացել է ծննդավայրում, շարունակել է՝ Երզնկայում: 18 տարեկանում Ֆիլիպէ (Պլովդիւ) անցնելով հետեւել է մասնաւոր դասերի: Այնտեղ էլ ստանձնել է Ռուբէն Զարդարեանի հրատարակած Ռազմիկի վարչական գործը: Սահմանադրութեան հռչակումից յետոյ վերադարձել է Կ. Պոլիս եւ Օննիկ Սրապեանի հետ հիմնել «Լուսաղբիւր» հրատարակչութիւնը, լոյս ընծայելով Մեղրագէտերի շարքը, Երկրագործին բարեկամը եւ այլ գրքեր: Ազատամարտի վարչական կազմում էր մինչեւ աքսորուելը:

Ընդգրկուած է Արշ. Ալպոյաճեանի նահատակաց ցանկում[253]:

Ահաւասիկ արձանագրեցինք Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի Այաշի աքսորականների անուանացանկը, հեղինակի հաղորդագրութեանը յաւելելով այլեւայլ աղբիւրներից քաղուածը: Հետայսու՝ շարունակաբար կը ներկայացնենք նաեւ պրպտումների ընթացքում ի յայտ եկած այաշական այլ աքսորականների, որոնց թիւն ըստ տարբեր յուշագրութիւնների տատանւում է 60-ից-91-92-ի սահմաններում[254]:

Թէոդիկի նահատակաց Յուշարձան...-ում որպէս Այաշի աքսորականներ երեքն են ներկայացուած Պալաքեանի անուանացանկից, միաժամանակ, կան նաեւ նոր անուններ: Նրանք են.

63. Փիլիպոս Զիլինկիրեան (1855, Ռոտոսթո - 1915): Այաշ է աքսորուել Կ. Պոլսից (Գումգաբուից) փեսայի՝ գրագէտ Գէորգ Մեսրոպի փոխարէն[255]:

64. Միրիճան Արթինեան (1885, Կ. Պոլիս, Բերա - 1915) Լ. Հէրալտի գրաշարներից: Որպէս դաշնակցական ամբաստանուելով՝ Այաշ աքսորուած[256]:

65. Արթին Մսըրլեան (1894-1915), Ազատամարտի մեքենավարը[257]:

66. Արմէնակ Առաքելեան.- Ազատամարտի աշխատաւորներից[258]:

67. Տիգրան Պաղտիկեան.- խարբերդցի, գոլէճական, ուսուցիչ, դաշնակցական: Մահացել է Այաշում[259]:

68. Համբարձում Պալասան (1883-1915), ռուսահայ, դաշնակցական: Մասնակցել է հայ-թաթարական կռիւներին, բանտարկուել՝ Բաքւում, ապա աքսորուել Սիբիր, որտեղից խոյս տալով հասել է Կ. Պոլիս: Նահատակ է: Ենթադրելի է Այաշի աքսորական լինելը, քանզի Ազատամարտի սրճեփն էր[260]:

Թէոդիկի 1916-1920 թթ. համահաւաք Տարեցոյցի՝ դիմումներով Այաշի աքսորից ազատ արձակուածների շարքում եւս առկայ են անուններ, որոնք բացակայում են

253 Գ. Պալաքեան, *նոյն տեղում*. Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 45, 63 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103/121, 106/124 (I, II հրտ.). Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, էջ 286. Յ. Սիրունի, *Հշ. աշխ.*, էջ 125, 331, Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 170

254 Պերճուհի, *Խանձուած օրերը*,– «Հայրենիք», ԺԶ տարի, Բոստոն, 1938, թիւ 12, գլ. VI, էջ 25. Ա. Նագգաշեան, *Հշ. աշխ.*, էջ 18-19, 34. Գ. Պալաքեան, *Հշ. աշխ.*, էջ 86, 87 (I, II հրտ.). Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 20/38, 34/52 (I, II հրտ.). Յ. Սիրունի, *Կոմիտասին հետ*, գլ. IV - *Զանղրրը*,– «Էջմիածին», 1968, Ը-Թ, էջ 98. *նոյն տեղում*, գլ. VI - *Դարձ Խաչին ճամփէն*,– «Էջմիածին», 1968, Ժ, էջ 53

255 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 45, 63. նոյնը,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, մաս Ը - *Պոլսէն չաքսորուողներ*, 4. ուսուցիչներ, էջ 116, 117

256 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 46, 64 (I, II հրտ.)

257 *Նոյն տեղում*, էջ 47, 65, (I, II հրտ.):

258 *Նոյն տեղում*

259 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 49, 67 (I, II հրտ.)

260 *Նոյն տեղում*, էջ 47, 65 (I, II հրտ.)

Գրիգորիս Պալաքեանի Այաշի աքսորականների ցանկում: Նրանք են.

69. Դոկտ. Բարսեղեան.- հաւանաբար, հանրայայտ դաշնակցական, նահատակ Սարգիս Բարսեղեանի (Բուն անունով՝ Լեւոն Օտապաշեան (Վանայ Սարգիս, Շամիլ) ազգանուանակիցը լինելով աքսորուած եւ դիմումով ազատուած հայ մէկը[261]:

70. Սարգիս Բարսեղեան.- Այս անունը բացակայում է Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի այաշականների անուանացանկում, առկայ է Թէոդիկի նահատակաց Յուշարձան...-ում, առանց աքսորավայրի յիշատակութեան՝ հետեւեալ տեղեկատուութեամբ, «Սարգիս Բարսեղեան (Շամիլ).- Երկար ատեն ծածկանունն էր այս՝ Գանձակեցի Լեւոն Օտապաշեանի: Ծնած է 1875-ին: Դաշնակցական: Վանի կռուող եւ բրոբականտ ընող անձնուէր գործիչներէն, ընկեր «Վանի իշխանը»-ին պէս՝ «Վանի Սարգիսը» կոչուած, ու նոյն գործը Կարին ալ շարունակած: Մէկը՝ Էլլտըզի «դժոխային մեքենայ»-ի կազմակերպիչներէն: -1909-ին Պոլիս գալուն՝ ամուսնացած է Ռոսթոմի աշակերտուհիներէն Պերճուհի Պարտիզեանի հետ: Վան մեկնած՝ դպրոցներու իբր շրջուն տեսուչ. նոյն պաշտօնով Կիրասոն ալ անցած: Հիմնադիրներէն Աշխատանք թերթին: 1913-15-ին Կ. Պոլիս կը գտնուէր»[262]:

Ըստ նահատակի ֆրանսահայ որդու՝ Արմէն Բարսեղեանի (այժմ հանգուցեալ է) վկայութեան՝ հայրը Այաշի աքսորական է եղել: Ասուածը հաստատուած է մօր՝ Պերճուհու Խանձուած օրերը յուշագրութեան էջերում[263]:

Ընդգրկուած է Արշ. Ալպոյաճեանի նահատակաց ցանկում՝ «Ս. Բարսեղեան (Շամիլ)»- յիշատակութեամբ[264]:

Թէոդիկի դիմումներով ազատուածների ցանկի յաջորդ այաշականն է.

71. Գրիգոր Սիւրմէեան.- «Արտաւազդ Վ.-ի հայրը՝ տղուն տեղ»[265] - տեղեկատուութեամբ:

72. Շաւարշ Փանոսեան.- ուսուցիչ Բերայից[266]:

73. Մկրտիչ Կարապետեան.- կաթոլիկ հայ, որն աքսորուել է նոյնանուն ազգանուանակից ուսուցչի փոխարէն[267]:

74. Մկրտիչ Կարապետեան.- Շուրջ քառորդդարեայ վաստակ ունեցող կրթ. ասպարէզի երախտաւոր Ծնուել է Կ. Պոլսի Սկիւտար արուարձանում, որի Ս.Խաչ դպրոցում ստացել է նախն. կրթութիւնը: 11 տարի եղել է Մայր Վարուժանի ընդհ. դաստիարակ, ապա Գումգաբուի «Դրսի» դպրոցի տնօրէն: Թէոդիկի նահատակաց Յուշարձան...-ում եւս յիշատակուած է այս նահատակի անուն-ազգանուանակից կաթոլիկ հայի աքսորից վերադարձած լինելու մասին[268]:

75. Յ. Ասատուրեան.- տպարանատէր: Աքսորից ազատուել է՝ դիմումով[269]: Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի այաշականների ցանկում է «Յարութիւն Ասատուրեան»-ը (II հրտ. մէջ՝ Ասատուրեան, նահատակուած Էնկիւրիում. տե՛ս տեղում, ծնթ. 246):

Թէոդիկի դիմումով Այաշից ազատուածների կազմում է «Գարթալցի փաս-

261 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, Գ. - *Դիմումներով աքսորէ դարձողներ*, էջ 115

262 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 33, 51 (I, II հրտ.). Կ. Գէորգեան,– «Ամէնուն տարեգիրքը», 1965, ԺԲ տարի, էջ 166

263 Պերճուհի, *Խանձուած օրերը*,– «Հայրենիք», ԺԶ տարի, Բոստոն, 1938, թիւ 12, գլ. VI, էջ 25

264 ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թ. 4

265 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, էջ 115

266 *Նոյն տեղում*

267 *Նոյն տեղում*

268 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 39-40/57-58 (I, II հրտ.)

269 Թէոդիկ,– «Ամէնուն տարեցոյցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, էջ 115

© National Library of Armenia

տաբան Սէրուէթ»-ը: Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեանի Այաշի աքսորականների շարքում կայ աքսորադարձ «Մարկոս Սէֆէր, փաստաբան»-ը (տե՛ս տեղում, ծնթ. 255): Թերեւս, ազգանուան մէջ տառաշփոթի արդիւնք է: Ճշգրտման կարիք կայ, հետեւաբար՝ Սէրուէթ ազգանուանակրին դեռեւս չենք ընդունում նոր անուն:

76. Սագո կամ Սաքո.- ըստ Այաշի աքսորական-վերապրող Աւետիս Նագգաշեանի յուշագրութեան՝ եղել է ապրիլի 11/24-ին ձերբակալուած եւ Այաշ աքսորուածների առաջին մեծ խմբում[270]: Երուանդ Օտեանի Թիւ 17 Խաֆիէն գործի անուանացանկում տեղեկացուած է. «Սագօ (զոհ. 1915) - Հնչակեան գործիչ»[271]: Ամենայն հաւանականութեամբ, Թէոդիկի նահատակաց Յուշարձան...-ի նոյնանուն անձն է այս այաշականը, հետեւեալ կենսագրականով. «Սաքո - Կովկասահայ: Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան յայտնի դէմքերէն: Ուսած է գիւղատնտեսութիւն Բարիզ, եւ ուսանողութեան շրջանին՝ եարաբերութիւն հաստատած Նազար Բէկի եւ այլոց հետ: 95-ի Սասնոյ ապստամբութեան ատեն՝ ինք էր որ նիւթական եւ բարոյական ամէն օժանդակութիւն կը փոթացնէր հերոս Մուրատի (Հ. Պօյաճեան): Բազմիցս մասնակցած Կովկասի Հնչ. յանձնախմբին եւ անդամ Գաղափար թերթի խմբ. մարմնին: Հայատեաց Կալիցինի տերորը կազմակերպողներէն ըլլալով՝ ռուս կառավարութիւնը կ'աքսորէ զինք Սիպերիա: Օսմ. Սահմանադրութենէն ետք կու գայ Պոլիս ուր կը մնայ մինչեւ իր տարագրումը»[272]:

77. Ստեփան Ս.Քիւրքճեան (1887, Ակն - 1915), գրավաճառ-հրատարակիչ, դաշնակցական: Պապը Ալի, «Եփրատ» գործակալութեան տէրն էր, նաեւ Կ. Պոլսի Զուռնայ երգիծաթերթի արտօնատէրը: Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ՝ տարագրեալների առաջին քարաւանի կազմում[273]:

78. Ատոմ Շահէն.- Երիցանց, (1875, մարտ, Ակն - 1915), գրական ծածկանունը՝ Օտայ Ակնի, հրատարակիչ, թարգմանիչ, դաշնակցական գործիչ, Ազգ. երեսփոխան՝ ընտրուած իր ծննդավայրից: Ուսանել է Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանում, յետոյ՝ Լայբցիգի, Ենայի, Փարիզի համալսարաններում: Կ. Պոլիս է եկել Սահմանադրութեան հռչակումին եւ Բերայում բացել «Արաքս» տպարանը, նախ հրատարակել Ազատամարտը, ապա՝ գրական, դպրոցական գրքեր, հանդէսներ: Թարգմանել է Հայնէի բանաստեղծութիւնները, եւն:

Ձերբակալուել է 1915-ի ապրիլի 11/24-ին, աքսորուել Այաշ: Արշ. Ալպոյաճեանի նահատակաց անուանացանկում է[274]:

79. Սարգիս Աճէմեան.- յիշատակուած է այաշական վերապրող Բիւզանդ Պօղաճեանի յուշագրում. «Միեւնոյն օրը (յունիս 12) Սարգիս Աճէմեան պաշտօնատուն կանչուեցաւ...» տեղեկատուութեամբ[275]:

80. Արամ Աչըքպաշեան (Գրիգոր Կարապետեան), (1860, կամ՝ 1867, Արաբկիր - 1915, 15 յունիս, Կ.Պոլսի Սուլթան Բայազետի հրապարակում կախուած): Ազգային-քաղաքական գործիչ, Ազատագրական շարժման մասնակից, հնչակեան կուսակցութեան ակնառու դէմքերից, ազգ. երեսփոխան:

Նախնական կրթութիւնը ստացել է ծննդավայրում, 1886-ին տեղափոխուել Կ. Պոլիս: 1890-ի Գումգաբուի ցոյցի կազմակերպիչներից էր: Փաստաբանի վկայականը չստացած, կուսակցութեան հրահանգով անցել է Եւրոպա, ապա Փոքր Հայք՝ փորձելով միաւորել այնտեղ գործող հայդուկային խմբերը: Մեծ է նրա դերը Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութեան (1895) գործում: 1907-ին Փարիզում, Ս. Սապահ-Գիւլեանի եւ Մեծն Մուրատի հետ ՍԴՀԿ կենտրոնական վարչութեան յանձնարարութեամբ բանակցել է երիտթուրքերի ղեկավարութեան հետ: 1908-ին, երիտթուրք. յեղաշրջումից յետոյ վերադարձել է Կ. Պոլիս, 1914-ին ձերբակալուել է՝ այլ կուսակիցների հետ, դատուել՝ Իթթիհատի ղեկավարներին ահաբեկելու փորձի մեղադրանքով: Ըստ Սողոմոն Թեհլիրեանի Վերյիշումների՝ Այաշի աքսորական. վերապրող դոկտ. Մելքոն Կիւլիստանեանի վկայութեամբ պարզւում է, որ նա եղել է ապրիլի 11/24-ին ձերբակալուած եւ Այաշ աքսորուած ազգ. կուսակցական գործիչների կազմում[276], հետեւաբար, ինչ-ինչ հանգամանքներում աքսորից վերադառնալուց յետոյ է, ուրեմն, հնչակեանների «20 կախաղաններ»-ի թւում՝ մահապատժի ենթարկուած: Յիշատակուած 20 մահապարտները հանուանէ ներառուած են Արշ. Ալպոյաճեանի նահատակաց ցանկում[277]:

81. Գարեգին Հիւսեան (1882, Վան-1915, Էնկիւրի): Ուսուցիչ, հնչակեան գործիչ: Կրթութիւնը ստացել է Երամեան վարժարանում: Կ. Պոլսում պաշտօնավարել է Գումգաբուի, Հասքէոյի, Կեդրոնական վարժարաններում, դասաւանդել՝ ազգ. պատմութիւն, աշխարհագրութիւն, գծագրութիւն եւ գեղագրութիւն: Մինչ տարագրումը Պէշիքթաշի Ազգ. վարժարանի տնօրէնն էր:

Այաշ է աքսորուել մտաւորականութեան երկրորդ խմբի կազմում, ընդգրկուած է Արշ. Ալպոյաճեանի նահատակաց ցանկում[278]:

82. Գարեգին Իբրանոսեան.- Թէոդիկի Յուշարձան...-ի սուղ տեղեկատուութեամբ՝ «Բժիշկ, Էսկի Տէնէք Մատենցի, Այաշ»[279]:

Այաշի աքսորական Բիւզանդ Պօղաճեանի յուշագրում յիշատակւում է՝

83. «Պարսկահայ Երիտասարդ մը», ուշագրաւ յաւելումով. «Հացի միջուկով աղիւսախաղի քարեր, համրիչներ եւ ճատրակի քարեր կը շինէր մեծ ճարտարութեամբ»[280]:

---

270 Ա. Նագգաշեան, *ձշ. յուշագր.*, էջ 13, 39

271 Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, «Անուանացանկ», էջ 290

272 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 38, 56 (I, II հրտ.)

273 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 46, 64 (I, II հրտ.). Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, «Անուանացանկ», էջ 292. Նոյնը, *Անիծեալ տարիներ...*, գլ. - *Չարաշուք գիշերը*, էջ 87, գլ. - *Անձկութեան օրեր*, էջ 111-112, «Անուանացանկ», էջ 566

274 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 35/36, 53/54 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103/121 (I, II հրտ.). Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, էջ 290. Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1

275 Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 109, 127 (I, II հրտ.)

276 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 49/50, 67/68 (I, II հրտ.). Կ. Գէորգեան, *նոյն տեղում*, էջ 169-170. Եր. Օտեան, *Թիւ 17 Խաֆիէն*, Գ. գիրք, «Անուանացանկ», էջ 284. Սողոմոն Թեհլիրեան, *Վերյիշումներ. Թալէաթի ահաբեկումը*, գրի առաւ Վահան Մինախորեան, Եր., 1993, էջ 133-134. «Հայկական հարց հանրագիտարան», էջ 41:

277 ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թ. 4

278 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 39, 57 (I, II հրտ.). Բ. Պօղաճեան, *նոյն տեղում*, էջ 103, 121 (I, II հրտ.). ԳԱԹ, Արշ. Ալպոյաճեանի ֆ., արխիւ 44, թերթ 1

279 Թէոդիկ, *Յուշարձան...*, էջ 80, 98 (I, II հրտ.)

280 Բ. Պօղաճեան, *ձշ. յուշագր.*, էջ 105 123 (I, II հրտ.)

© National Library of Armenia



«ԵՐԳ ԵՐԳՈՑԸ» ՈՐՊԷՍ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՄԻ ԾԷՍ

Անահիտ Մխիթարեան

1. «Երգ երգոցը» նախաքրիստոնէական շրջանից պահպանուած հարսանեկան ծէսի մի դրուագ է, որը մուտք է գործել Աստուածաշունչ մատեան որպէս եբրայական սիրային հնագոյն երգերի մի ժողովածոյ: Այն ձեւաւորուել է Ք.ա. Գ դարում, սակայն նրա բովանդակութիւնը քրիստոնէական շրջանում մերժուել է եւ ընկալուել իբրեւ Քրիստոս-փեսայի եւ հարս-եկեղեցու խորհրդանշական այլաբանութիւն: Քրիստոնէական աւանդութիւնն այն վերագրել է եբրայեցիների արքայ Սողոմոնին, որը սիրոյ երգեր է ձօնել իր կնոջը՝ Սուլամիթային:

Ըստ գերմանացի ասորագէտ Ֆրիդրիխ Դելիչի՝ «Երգ երգոցը», որպէս սրբազան ստեղծագործութիւն, հանդէս է գալիս երեք տեսակի յարաբերութիւններում. ա) կրօնաբարոյականութիւնն է, որտեղ նկարագրւում է ամուսնութիւնը, բ) եկեղեցական-պատմականն է, ուր ներկայացւում է հրէայ ժողովրդի եւ Եկեղեցու ճակատագիրը Սողոմոնի թագաւորութեան ժամանակաշրջանում: Եւ գ) նախատիպականութիւնը, քանի որ ամուսնութիւնը նախակերպաւորում է Քրիստոսի եւ Եկեղեցու կապը[1]: Այս երեք տեսակների հիման վրայ էլ հիմնականում քննուել եւ մեկնաբանուել է «Երգ երգոցը»:

Կայ նաեւ մէկ այլ տեսակէտ. «Համաձայն Որոգինէսի վկայութեան՝ Իսրայէլում մինչեւ երեսուն տարեկան հասակն արգելուած էր կարդալ այս գիրքը (ինչպէս նաեւ՝ Աստուածաշնչի սկիզբը, Եզեկիէլի մարգարէութեան սկիզբն ու վերջը)»[2]:

Որոգինէս Աղեքսանդրացին «Երգ երգոցը» համարել է «ամուսնական երգ», այսինքն՝ «հարսանեկան երգ», քանի որ այնտեղ գործող անձինք նոյնն են, ինչ հարսանեկան ծէսի ժամանակ՝ հարս, փեսայ, հարսնացուի ընկերուհիներ եւ փեսացուի ընկերներ[3]:

«Երգ երգոցի» առաջին մեկնիչները եղել են Հիպոլիտոս Բոստրացին (236 թ.), Որոգինէս Աղեքսանդրացին (254 թ.) եւ Գրիգոր Նիւսացին (394 թ.): Հայ մատենագրութեան մէջ «Երգ երգոցի» մեկնութեանը, աւելի ճիշտ՝ յիշատակութեանն առաջին անգամ հանդիպում ենք Ագաթանգեղոսի մօտ:

Ագաթանգեղոսի երկում՝ «Սուրբ Գրիգորի վարդապետութիւնը» գլխում, «Երգ երգոցի» մի հատուածի առկայութիւնը վկայում է, որ այն մինչ քրիստոնէութիւնը պէտք է երգուած լինէր գրաւոր կամ բանաւոր:

Ահա թէ ինչպէս է մեկնում «Երգ երգոցը» Ագաթանգեղոսը. «Այս այն է, որ ասեն. «Եղբօրորդեա՛կ իմ, յարիցես, զարթիցես, մերձաւո՛ր իմ, սիրելի՛ իմ. բացցես ինձ զդուրս տանն, եւ համբու-

1 *Толковая Библия или комментарий на все книги Св. писания Ветхого и Нового Завета*, Т. V, Санкт-Петербург, 1908, ст. 44 ("*Книга Песни Песней Соломона*").

2 *«Երգ երգոց» հանդերձ մեկնութեամբ նախնեաց* (աշխ. Տ. Մեսրոպ քհն. Արամեան), «Գանձասար», Եր., 1993, էջ 11

3 *Толковая Библия или комментарий на все книги Св. писания Ветхого и Нового Завета*, Т. V, ст. 44.

© National Library of Armenia